Արտաքին քաղաքականության ծրագրի թեմատիկ մի ուղղվածությունն է “Թուրքիա-Հայաստան հարաբերությունների նորմալացումը”: Մինչև հիմա հրատարակվել են երկու զեկույցներ Թուրքիա-Հայաստան հարաբերությունների վերաբերյալ:




“Թուրքիա-Հայաստան երկխոսության շարք. հաղթահարելով փակ շրջանը”, Այբարս Գյորգուլուի, Ալեքսանդր Իսկանդարյանի, Սերգեյ Մինասյանի և Սաբիհա Սենյուչել Գյունդողարի կողմից, 15 ապրիլ 2009:

Այս զեկույցը հրատարակվել է 2008 թ. նոյեմբերին Թուրքիա-Հայաստան հարաբերությունների վերաբերյալ TESEV-ի և Կովկասի Ինստիտուտի կազմակերպած սեմինարից հետո: Այն ընդհանրացնում է սեմինարի նյութերը: Ներբեռնել հրատարակությունը Download publication




“Թուրքիա-Հայաստան հարաբերություններ. փակ շրջան”, Այբարս Գյորգուլուի կողմից, 15 մայիս, 2008:

Զեկույցն ի մի է բերում Թուրքիա-Հայաստան հարաբերությունների անցած 17 տարիները, առանձնացնում է հիմնական խնդիրները, կարևորում է հիմնական դիվանագիտական և քաղաքացիական ջանքերը և շեշտում Թուրքիա-Հայաստան հարաբերությունների նորմալացման անհրաժեշտությունը: Ներբեռնել զեկույցը Download the

report

**Հասցե**
Bankalar Caddesi, Minerva Han, No.2, Kat.3,
Karaköy, Ստամբուլ, 34420, Թուրքիա
Հեռախոս: +90 (212) 292 89 03
Ֆաքս: +90 (212) 292 90 46
Էլեկտրոնային փոստ info@tesev.org.tr
Համացանց http://www.tesev.org.tr/default.asp?PG=ANAEN

**GpoT (Գլոբալ քաղաքական ուղենիշերի կենտրոն)**

Istanbul Kultur University
Global Political Trends Center

Գլոբալ քաղաքական ուղենիշերի կենտրոնը (GPoT) հիմնադրվել է որպես հետազոտական կենտրոն Ստամբուլի Kultur համալսարանի հովանու ներքո 2008 թ.: GPoT-ը ներգրավվել է մի շարք նախաձեռնություններում, այդ թվում Ֆորում հանուն ապագայի, ծրագրեր, որոնք հետևում են Կիպրոսի խնդրում առկա վերջին զարգացումներին, Թուրքիա-Հայաստան հարաբերություններին առնչվող քննարկումներին, Սիրիայի և Իսրայելի միջև ընթացող հաստրակական դիվանագիտությանը և թուրք-արաբական երկխոսությանը:

Կենտրոնի հետազոտական ծրագրերից մեկը “Փոխադարձ ոչ անաչառ վերաբերմունքն ու օբյեկտիվությունը Հայաստանի և Թուրքիայի ԶԼՄ-ներում”, (իրականացվում է Եվրասիա համագործակցության հիմնադրամի հետ համագործակցությամբ): Հետազոտությունը իրականացվելու է “Նվազեցնելով ԶԼՄ-ներում փոխադարձ ոչ անաչառ վերաբերմունքը Հայաստանում և Թուրքիայում” ծրագրի շրջանակում, որին աջակցում են Նորվեգիայի արտգործնախարարությունը և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (USAID): Ուսումնասիրությունը կօգնի ԶԼՄ-ներին առնչվող շահառուների շրջանակում իրազեկության բարձրացմանը Հայաստանում և Թուրքիայում ԶԼՄ-ների հաղորդումներում իշխող հիմնական ուղենիշերի վերաբերյալ:
http://www.gpotcenter.org/projects/

Ծրագրի շրջանակում իրականացվող միջոցառումներ

13/14 հոկտեմբեր 2009, Բուրսա:

Թուրքիայի և Հայաստանի միջև ֆուտբոլային խաղից հետո թուրք և հայ լրագրողները քննարկեցին աչառու լրատվության դերը հարաբերությունների նորմալացման գործընթացում, այն ճանապարհները, որոնց օգնությամբ ԶԼՄ-ները կարող են նպաստել առկա իրավիճակին: (Հանդիպմանը նախորդող վեց ամիսների ընթացքում հետազոտական խմբերը փորձագիտական հարցազրույցներ են վերցրել



Լարսում, Կեսարիայում և Ստամբուլում, նմանատիպ հարցազրույցներ է իրականացրել Հայաստանում Եվրասիա համագործակցության հիմնադրամի հետազոտական խումբը:)
http://www.gpotcenter.org/conferences/353

Երկրորդ հանդիպումը տեղի ունեցավ 2009 թ. դեկտեմբերի 17-ից 21-ը Երևանում: Քննարկումների ընթացքում, որոնք ի մի էին բերել լրագրողների և փորձագետների Թուրքիայից և Հայաստանից, հիմնական ուշադրությունը դարձվում էր Թուրքիա-Հայաստան հարաբերություններում դարաբաղյան հակամարտության դերին, արձանագրությունների վավերացման գործընթացին և նորմալացման գործընթացի ազդեցությանը կովկասյան տարածաշրջանի վրա:

Հայաստան հրավիրված տասը թուրք լրագրողները հանդիպեցին արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանին, Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վիգեն Սարգսյանին, կոալիցիայի ամենախոշոր անդամ Հանրապետական կուսակցության խորհրդարանական Արտաք Զաքարյանին և ընդդիմադիր Ժառանգություն կուսակցության պատգամավոր Ստեփան Սաֆարյանին:

2010 թ. մարտի 24-ից 28-ը Գլոբալ քաղաքական ուղենիշերի կենտրոնը և Եվրասիա համագործակցության հիմնադրամը Երևանում կազմակերպեցին "Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավման երկրորդ և երրորդ օրերը" սեմինարը, որին մասնակցեցին փորձագետներ և լրագրողներ Թուրքիայից և Հայաստանից:
http://www.gpotcenter.org/conferences/504

2010 թ. փետրվարի 15-ին Գլոբալ քաղաքական ուղենիշերի կենտրոնը կազմակերպեց "Թուրքիայում հայ անօրինական միգրանտների վիճակը" թեմայով քննարկում:

Կենտրոնը հրապարակել է նաև “Թուրք-հայկական հարաբերությունների ապագան և Նաբուկոն” հետազոտությունը, որի հեղինակն է Յալմ Երալփը:) (ապրիլ 2009)
http://www.gpotcenter.org/dosyalar/yalim%20eralp%20-%20pb.pdf



**Մենսուր Ակգյունը** Գլոբալ քաղաքական ուղենիշերի կենտրոնի նախագահն է և Ստամբուլի Կուլտուր համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանը: Նրա հրատարակությունների մեծ մասը նվիրված է միջազգային հարաբերություններին և Թուրքիայի արտաքին քաղաքականությանը:
mensur.akgun@gpotcenter.org



**Սիլվիա Թիրյաքին փոխտնօրենն է.**
sylvia.tiryaki@gpotcenter.org



**Ջան Յիրիքը կրտսեր գիտաշխատող է.** Նա ներգրավվել է Թուրքիա-Հայաստան ծրագրերում:
can.yirik@gpotcenter.org

**Հասցե**
Ստամբուլի Կուլտուր համալսարան
Գլոբալ քաղաքական ուղենիշերի կենտրոն
Ataköy Campus
Bakirköy, 34156, Ստամբուլ -Թուրքիա
Esra Köse: +90 212 4984141
Ուղիղ: +90 212 4984476 - Ֆաքս: +90 212 4984405, esra.kose@gpotcenter.org
Համացանց: http://www.gpotcenter.org/

**USAK (Միջազգային ռազմավարական հետազոտությունների կազմակերպություն)**



Հիմնադրվելով 2004 թ. USAK-ը աշխատում է Թուրքիա-Հայաստան հարաբերությունների ոլորտում որպես իր տարածաշրջանային ծրագրերի մաս: 2010 թ. հունիսի 14-ից կազմակերպության

տնօրենն է Օզդեմ Սանբերկը՝ պաշտոնաթող բարձրաստիճան դիվանագետ: 1985 – 1987 թթ. Նա զբաղեցրել է Թուրքիայի վարչապետ Թուրգուտ Օզալի արտաքին քաղաքականության հարցերով գլխավոր խորհրդականի պաշտոնը: 1987 – 1991 թթ. Եվրամիութունում դեսպան է եղել: 1995 - 2000 Մեծ Բրիտանիայում զբաղեցրել է Թուրքիայի դեսպանի պաշտոնը: Պաշտոնաթող է եղել 2000 թ. և զբաղեցրել է TESEV-ի տնօրենի պաշտոնը մինչև 2003 թ. Սեպտեմբեր:

Սեդատ Լաչիները, որը USAK-ի տնօրենն էր նրա հիմնադրման պահից սկսած, այժմ աշխատում է որպես գլխավոր կոորդինատոր: Լաչիները 2004 թ. հրապարակել է “Թուրքերը և հայերը. Միջազգային հարաբերությունների հետազոտություն” աշխատությունը:

Կոնտակտ: slaciner@gmail.com

USAK-ի Կենտրոնական Ասիայի և Կովկասի հետազոտությունների կենտրոնի հետազոտողներն ու փորձագետները



Թուրգուտ Դեմիրթեփե Turgut Demirtepe
Կենտրոնական Ասիայի հետազոտությունների ղեկավարն է : Նաև Կենտրոնական Ասիայի և կովկասյան հետազոտությունների ամսագրի խմբագիրն է: Դասավանդում է քաղաքականություն և քաղաքական սոցիոլոգիա Անկարայի համալսարանում:
.



Kamer Kasim
Քամեր Քասիմ
Միջազգային հարաբերությունների դասախոս է և հետազոտող :



Güner Özkan
Գյուներ Օզքան
Միջազգային հարաբերությունների մասնագետ է: Աշխատում է որպես կովկաս-կասպյան տարածաշրջանի անվտանգության խնդիրների փորձագետ:



Հասան Սելիմ Օզերթեմ Hasan Selim Özertem
Զբաղվում է Եվրասիայի և միջազգային

հարաբերությունների հետազոտություններով: Նրա հետաքրքրության առարկաների թվում են կասպյան տարածաշրջանը, Ռուսաստանը, էներգետիկ խնդիրները:

**Հասցե**

Ayten Sokağı, No: 21, Mebusevleri
Tandoğan, Անկարա.
Հեռախոս: +90 312 212 28 86 (PBX)
Ֆաքս: +90 312 212 25 84
Էլեկտրոնային փոստ: info@usak.org.uk; merkez.usak@gmail.com
Կենտրոնական Ասիայի և կովկասյան հետազոտությունների կենտրոն
http://www.usak.org.tr/EN/merkez.asp?id=17

**TÜRKSAM (Միջազգային հարաբերությունների և ռազմավարական վերլուծությունների թուրքական կենտրոն)**

Կենտրոնը (http://www.turksam.org/en//) հիմնադրվել է 2004 թ. Անկարայում: Տնօրենն է Սինան Օղանը: Ծրագրերը հիմնականում վերաբերում են Եվրասիական տարածաշրջանին: Կենտրոնի կազմում գործում է Հայկական ուսումնասիրությունների կենտրոն http://www.turksam.org/en/b45.html, որն իր գործունեությունը ծավալում է Կովկասին նվիրված տարածաշրջանային ծրագրի շրջանակում:

Հայաստան Թուրքիա հարաբերություններին առնչվող միջոցառումներ

26 մարտ 2010
“Հայկական խնդիր” Ուղեղային գրոհ ձևաչափով կոնֆերանս

“Թուրքիա-Հայաստան-Ադրբեջան հարաբերությունները, արձանագրությունները և հայկական նախագծերը”

Հանրության հետ կապերի պատասխանատու: Գյոզդե Կիլիչ Յասն: gozde.kyasin@turksam.org



Սինան Օղան, հիմնադիր և նախագահ
sinan.ogan@turksam.org

Սինան Օղանի անձնական կայք:
http://www.sinanogan.com/

Նրա հոդվածները http://www.sinanogan.com/listele.aspx?ID=MAKALELER

Հայաստանին առնչվող հրատարակություններ

“Արդյոք Ղարաբաղի պայմանը էական չէ Հայաստանի հետ սահմանները բացելու հարցում”, 20 ապրիլ 2010, http://www.turksam.org/en/a259.html

Սինան Օղանի հարցազրույցը “Հայկական Ժամանակ” օրաթերթի հետ, 13 նոյեմբեր 2009, http://www.turksam.org/en/a251.html



Հասցե:
Oğuzlar Mahallesi, Türkocağı Cad. 1388. Sok (eski 32. Sok), No: 52
Balgat / Անկարա
Հեռախոս +90 312 285 31 00, +90 312 285 00 66
Ֆաքս: +90 312 285 00 71
Էլեկտրոնային փոստ: turksam@turksam.org

**ORSAM**



ORSAM (Միջին արևելքի ռազմավարական հետազոտությունների կենտրոն) հիմնադրվել է 2009 թ.: Չնայած հիմնականում կենտրոնացած է միջին արևելքի խնդիրների վրա, այն նաև վերլուծություններ է հրապարակում Կովկասում ընթացող զարգացումների վերաբերյալ.

ORSAM-ի Կովկասին առնչվող հոդվածները թուրքերեն լեզվով մատչելի են հետևյալ կայքում՝ http://www.orsam.org.tr/tr/yazilar.aspx?DosyaID=18

Հասան Կանբոլատ – Նախագահ, hasankanbolat@orsam.org.tr

Իլյաս Կամալով – Եվրասիայի հարցերով խորհրդական ilyaskamalov@orsam.org.tr

**Հասցե**
OrtaDoğu Stratejik Araştırmalar Merkezi
Mithatpaşa Caddesi No: 46/3-4
06420 Kızılay / Անկարա
Հեռախոս: +90 (312) 430 26 09
Ֆաքս: +90 (312) 430 39 48

orsam@orsam.org.tr

**AVIM–Եվրասիական հետազոտությունների կենտրոն**

AVIM-ը հիմնադրվել է 2009 թ. սկզբին Անկարայում Turkmeneli համագործակցության և մշակութային հիմնադրամի կողմից: Ինստիտուտի նպատակն է հետազոտություններ կատարել Կովկասում, Բալկաններում, Արևելյան Եվրոպայում, Ասիայում, (հատկապես Ռուսաստանում և թուրքական հանրապետություններում), Միջին Արևելքում, (մասնավորապես Իրաքում), և Եվրամիության անդամ երկրներում Թուրքիայի դերի վերաբերյալ:

AVIM-ի մեջ է ընդգրկվել Հայկական հետազոտությունների ինստիտուտը (ERAREN, http://www.eraren.org/), որը ակտիվ գործում էր Անկարայում 1999-2009 թթ.: Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի՝ (ASAM) շրջանակում: AVIM-ը ընդգրկված է նաև Հայաստանին առնչվող երկու պարբերականների հրատարակությունում՝ Ermeni Araştırmaları (առաջին անգամ հրատարակվել է 2001 թ.) և Հայկական հետազոտությունների դիտարկում (առաջին հրատարակությունը 2002 թ.):



Հայկական հետազոտությունների ինստիտուտը ամենօրյա թողարկում է պատրաստում, որտեղ ընդգրկված են նորություններ և վերլուծություններ հայկական խնդիրների, Բալկանների, Իրաքի, Ասիայի և Եվրոպայի վերաբերյալ: Այն էլեկտրոնային փոստով ուղարկվում է շուրջ 3000 բաժանորդի:
Պաշտոնաթող դեսպան Օմեր Էնգին Լյութեմը Եվրասիական հետազոտությունների կենտրոնի տնօրենն է:

Ինստիտուտն ունի իր համացանցային կայքը չորս առանձին բաժիններով՝ Կովկաս և Հայկական հարց, Բալկաններ, Ասիա և Եվրոպա: Կովկասին և Հայաստանին առնչվող բաժինները ընդգրկում են հոդվածներ Հայաստանի և Թուրքիա-Հայաստան հարաբերությունների վերաբերյալ: “Հայկական հարց” հատվածը պարունակում է նաև ենթաբաժին “Թուրքիայի և Ադրբեջանի խնդիրները Հայաստանի հետ” թեմայով:
http://www.avim.org.tr/sablon3.php?icerik=gir&bolum=1&dil=1

**Հասցե**

Süleyman Nazif Sokak No: 12-B Daire 2
Çankaya / Անկարա

Հեռախոս: +90 312 4385023-24
Ֆաքս: +90 312 4385026
info@avim.org.tr

**TEPAV (Թուրքիայի տնտեսական քաղաքականության հետազոտության հիմնադրամ)**

TEPAV-ը անկախ, ոչ կառավարական, անկուսակցական վերլուծական կենտրոն է, որը հիմնադրվել է 2004 թ. հոկտեմբերին: « Հավատարմագրային ֆոնդը » հիմնադրվել է Թուրքիայի պալատների միության կողմից՝ ֆինանսավորելու համար TEPAV-ի գործունեությունը:

Հիմնադրամն ունի երեք հետազոտական ինստիտուտներ.
• Տնտեսական քաղաքականության հետազոտության ինստիտուտ – EPRI
• Տնտեսական կայունության ինստիտուտ– ESI
• Միջազգային քաղաքականության հետազոտության ինստիտուտ – IPRI



TEPAV-ի տնօրենն է Գյուվեն Սակը
guven.sak@tepav.org.tr

Արտաքին հարաբերությունների հետազոտության ծրագիր http://www.tepav.org.tr/eng/index.php?type=foreignpolicy&title=D

**Բուրչու Գյուլթեքին Պունսման**



Արտաքին քաղաքականության հարցերով վերլուծաբան է TEPAV-ում: Նրա ուշադրության կենտրոնում է Կովկասը և հատկապես Թուրքիա-Հայաստան հարաբերությունները: 2003 թ. մայիսից մինչև 2009 թ. ապրիլ աշխատել է Կովկասի բիզնեսի և զարգացման ցանց ծրագրում (CBDN) International Alert կազմակերպության շրջանակում, որը Լոնդոնում գործող խաղաղությանը նպաստող հասարակական կազմակերպություն է: 2007-2008 թթ. Նա զեկույցներ է պատրաստել Սևծովյան սիներգետիկա ծրագրի, էներգետիկ անվտանգության, թուրք-հայկական հարաբերությունների և փոքրամասնությունների խնդիրների վերաբերյալ Եվրոխորհրդարանի արտաքին հարաբերությունների գլխավոր վարչության

համար: 2006-2008 թթ. նա Անկարայում հետասպիրանտական հետազոտող է եղել Անկարայի Միջին արևելքի տեխնիկական համալսարանի եվրոպական հետազոտությունների կենտրոնում: Նա շահել է ՆԱՏՕ-ի Manfred Wörner կրթաթոշակ 2004-2005 թթ. և աշխատել է որպես առաջատար հետազոտող ՆԱՏՕ-ի կողմից ֆինանսավորվող "Կամրջելով անվտանգության ընկալումները, ինտեգրելով Սևծովյան տարածաշրջանը" ծրագրում:

Հրատարակություններ.
"Կառուցելով վստահության կամուրջ թուրքերի և հայերի միջև", 8 ապրիլ 2010, http://www.todayszaman.com/tz-web/news-206806-159-building-bridge-of-trust-and-confidence-between-turks-and-armenians.html

"Շարժվելով սիմվոլիզմից անդին. թուրք-հայկական հարաբերությունների նորմալացումը որպես տարածաշրջանային բարեկեցության հնարավորությունների պատուհան", TEPAV-ի զեկույց, հոկտեմբեր 2009, http://www.filbilisim.com/external/tepav.org.tr/upload/files/1257767367r1562.Moving_Beyond_Symbolism.pdf.

"Կապակցելով Թուրքիայի Եվրամիության անդամակցության գործընթացը և Եվրոպական հարևանության ծրագրի տարածաշրջանային նախաձեռնությունը. Անհրաժեշտ միջսահմանային համագործակցություն Հարավային Կովկասի հետ", Բեգեն Բալամիր Չոսկումի և Բիրգյուլ Դեմիտրաս Չոսկումի խմբագրությամբ հրատարակված. "Հարևանության մարտահրավերը; Եվրամիությունը և նրա հարևանները", 2009 թ. Աշխատություն: http://books.google.com.tr/books?id=mZA2W8ULJWwC&pg=PA379&lpg=PA379&dq=Burcu+G%C3%BCltekin+Punsmann&source=bl&ots=-sh_o7SLr5&sig=Y8fxDF_gfe2Q0h97FC4lkw0VqKo&hl=tr&ei=LzkXTKb2IYSSONPNmYwL&sa=X&oi=book_result&ct=result&resnum=4&ved=0CCMQ6AEwAzgK#v=onepage&q=Burcu%20G%C3%BCltekin%20Punsmann&f=false

"Սևծովյան ավազանին տարածաշրջանային քաղաքական մոտեցում. Հավանական նպաստ եվրոպական էներգետիկ անվտանգությանը"
http://www.europarl.europa.eu/activities/expert/eStudies.do?languageEN

Կոնտակտ: burcu.punsmann@tepav.org.tr

**Ծրագիր. Սահմանային գետի կամրջի վերանորոգում**

TEPAV-ը ջանքեր է գործադրել Ախուրյանի գետի 10-րդ դարի կամրջի վերանորոգման ուղղությամբ, որը գտնվում է պատմական "Մետաքսի ճանապարհի" վրա և միաժամանակ նշագծում է հայ-թուրքական սահմանը. Ավերված կամուրջը, որը մի ժամանակ կապում էր գետի երկու ափերը, ունի հատված երկու երկրում: TEPAV-ի աշխատակազմի համաձայն, ծրագիրը փորձում է առաջ բերել կրեատիվ և իրոք վստահությունը վերականգնող

քայլեր՝ նպաստելու համար Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների բարելավմանը:

**TEPAV-ը Հայաստանում**

TEPAV-ի պատվիրակությունը, որի կազմում էին պրոֆեսոր Գյուվեն Սակը, պրոֆեսոր Էրոլ Թայմազը, դոկտոր Բուրչու Գյուլթեկին Պունսմանը և Մեզենեֆ Հաթամը 2010 թ. փետրվարի 10-ից 13-ը Գերմանական Մարշալ հիմնադրամի թուրքական մասնաճյուղի կողմից ֆինանսավորվող մի քանի միջոցառումների մասնակցելու համար այցելել են Երևան: Փետրվարի 11-ին փաստահավաք առաքելության շրջանակներում Համաշխարհային բանկի Երևանի մասնաճյուղը կազմակերպել էր սեմինար, որին մասնակցում էին դոնոր կազմակերպություններ և ոչ կառավարական կազմակերպություններ, որոնք զբաղվում էին տարածաշրջանային զարգացմամբ: Փետրվարի 12-ին TEPAV-ը և Հայաստանի առևտրի պալատը քննարկում կազմակերպեցին “Թուրք-հայկական հարաբերությունները և միջսահմանային ռեգիոնալիզմը” թեմայով:
http://www.tepav.org.tr/eng/index.php?type=event&cid=182

**Հասցե**

Söğütözü Cad. No:43 TOBB-ETÜ Yerleşkesi 2. Kısım
06560 Söğütözü - Անկարա
Հեռախոս +90 312 292 5500
ֆաքս +90 312 292 5555
Էլեկտրոնային փոստ: kurumsal_iletisim@tepav.org.tr
Համացանց http://www.tepav.org.tr/

**Հասարակության և ժողովրդավարության ասոցիացիա**

Toplum ve Demokrasi Derneği



Հիմնադրվել է 2004 թ. Թունա Բեկլևիչի, Ասլի Ցամանի, Էլիֆ Գյուրսոյի, Գյոկսել Ակմանի, Օզեն Դեմիչանի, Իդրիս Քարդաշի և Բուրաք Քարափինարի կողմից՝ որպես Անատոլիայի երիտասարդ առաջնորդների ասոցիացիա: 2009 թ. ասոցիացիան ստացավ իր ներկայիս անվանումը: Նախագահն է Թունա Բեկլևիչը (նկարում), փոխնախագահն է Սահիր Թոփրակը,

գլխավոր քարտուղարն է Գյոկսել Ակմանը:



Այքարս Օրսեկը Հայաստանը ներառող ծրագրերի կոորդինատորն է: Նա 2010 թ. մարտին այցելել է Երևան, հանդիպել հայկական ոչ կառավարական կազմակերպությունների հետ, որոնք հետագայում կարևոր դեր են խաղալու Թուրք-հայկական ընդհանուր ապագա պլատֆորմի ձևավորման ժամանակ: 2010 թ. հունիսի 27-ից 30-ը Հասարակության և ժողովրդավարության ասոցիացիան 10 թուրք և հայ ուսանողների բերել է Ստամբուլ մասնակցելու "Օտարի ընկալումները" թեմայով սեմինարին, որն անցկացրել է Մերիլենդի համալսարանի պրոֆեսոր Էդի Կաուֆմանը:
[http://www.toplumvedemokrasi.org.tr/kategori/turkish-armenian-common-future-platform/](http://www.toplumvedemokrasi.org.tr/kategori/turkish-armenian-common-future-platform/)

Հասցե

Büyükdere Cad. Hukukçular Sitesi No:24 Kat:6 Daire:63
Şişli-Ստանբուլ
Հեռախոս: +90 212 347 20 11
Ֆաքս: +90 212 282 46 21

[http://www.toplumvedemokrasi.org.tr/](http://www.toplumvedemokrasi.org.tr/)

**SETA – Քաղաքական, տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամ**

Շահույթ չհետապնդող հետազոտական ինստիտուտ է, որն ուսումնասիրություններ է կատարում ազգային, տարածաշրջանային և միջազգային խնդիրների վերաբերյալ: Նրա նպատակն է քաղաքական գործիչներին և հանրությանը տրամադրել ճշգրիտ և թարմ վերլուծություններ քաղաքականությանը, տնտեսությանը և հասարակությանն առնչվող խնդիրների վերաբերյալ:



Թահա Օզհան, Գլխավոր կոորդինատոր

tozhan@setav.org



Թալիփ Քյուչուկչան
tkucukcan@setav.org



Պրոֆեսոր Բյուլենտ Արաս. Արտաքին քաղաքականության կոորդինատոր
abulent@isikun.edu.tr

“Դիվանագիտական սխալ Հայաստանի վերաբերյալ”
guardian.co.uk, Friday 5 March 2010

Հրատարակություն թուրքերենով: Զեկույց Թուրքիա-Հայաստան հարաբերությունների վերաբերյալ սեմինարի մասին, հունիս 2009, http://www.setav.org/ups/dosya/9606.pdf



SETA-ի Վաշինգտոնի գրասենյակի կոորդինատորն է Նուհ Յլմազը, ով նախկինում աշխատել է որպես STAR պարբերականի և channel 24 հեռուստաալիքի լրագրող: Նա կանոնավոր հրապարակումներ է կատարում Թուրքիա-Հայաստան հարաբերությունների վերաբերյալ:

7 մարտի, 2010 (Որքան զսպանակներ դեռ կձգի հայկական ծրագիրը)
http://www.setav.org/public/HaberDetay.aspx?Dil=tr&hid=25429

15 փետրվար 2010, (Ցեղասպանության աշխարհաքաղաքականություն Geopolitics), http://www.setav.org/public/HaberDetay.aspx?Dil=tr&hid=23191

**Հասցե**
Reşit Galip Cd. Hereke Sokak No: 10
Gaziosmanpaşa / Çankaya
06700 Անկարա
Հեռախոս: +90 312.405 61 51
Ֆաքս: +90 312.405 69 03

Insight Turkey պարբերականը, որը հրատարակվում է տարին չորս անգամ 1999 թ. սկսած, այժմ հրատարակվում է SETA-ի հովանավորությամբ: Արդեն հրատարակվել է 12 համար: Պարբերականը քննարկում է հարցերի լայն շրջանակ, որոնք առնչվում են Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականությանը, ինչպես նաև Թուրքիայի հարակից շրջաններին: Պարբերականը քաղաքական ուղղվածության, փորձագիտական շրջանակների կողմից փորձաքննվող պարբերական է: Խմբագիր Իհսան Դաղին ավարտել է Միջին Արևելքի տեխնիկական համալսարանը: http://www.insightturkey.com/

**BILGESAM – Իմաստուն մարդկանց ռազմավարական հետազոտությունների կենտրոն**

WISE MEN
CENTER FOR STRATEGIC STUDIES

Իրականացնում է գիտական հետազոտություններ երկկողմ և բազմակողմ խնդիրների առնչությամբ, Թուրքիայի անվտանգության ռազմավարությանը, ինչպես նաև ներքին քաղաքական, տնտեսական, տեխնոլոգիական, բնապահպանական և սոցիո-մշակութային ոլորտների առնչությամբ:



Նախագահ՝ Աթիլլա Սանդիկլի (նկարում)

Փոխնախագահ՝ Սաղի Բիլգիչ

Կովկասը BILGESAM-ի տարածաշրջանային ուսումնասիրությունների բաժնի կողմից հետազոտվող շրջաններից մեկն է: Մինչ օրս հրատարակվել է երեք նյութ Թուրքիա-Հայաստան հարաբերությունների վերաբերյալ:

Ջանսու Արիսոյ - “Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր. Խաղաղության բանակցությունների եզրին”, 22 փետրվար, 2010թ.: http://www.bilgesam.org/en/index.php?option=com_content&view=article&id=235:nagorno-karabakh-problem-on-the-edge-of-peace-talks-&catid=86:analizler-kafkaslar&Itemid=145

Մուհարեն Էկսի, Կովկասյան համագործակցության և կայունության հարթակի գործընթացից մինչև թուրք-հայկական հարաբերությունների նորմալացում, 27 հոկտեմբեր, 2009թ.: http://www.bilgesam.org/en/index.php?option=com_content&view=article&id=209:fro

m-the-process-of-caucasus-cooperation-and-stability-platform-to-the-normalization-of-turkish-armenian-relations&catid=86:analizler-kafkaslar&Itemid=145

Բյուլենտ Արաս և Ֆաթիհ Օզբայ – “Թուրք-հայկական հարաբերություններ. Արդյոք կաշխատի ֆուտբոլային դիվանագիտությունը”, 1 հուլիս, 2009թ.: http://www.bilgesam.org/en/index.php?option=com_content&view=article&id=186:turkish-armenian-relations-will-football-diplomacy-work&catid=86:analizler-kafkaslar&Itemid=145

(թուրքերեն) Ֆաթիհ Օզբայ, Թուրքիա-Հայաստան հարաբերություններ, ատելությունը փոխակերպելով կարեկցանքի, 24 սեպտեմբեր, 2009թ.: http://www.bilgesam.com/tr/index.php?option=com_content&view=article&id=458:turkiye-ermenistan-iliskileri-antipatiyi-empatiye-cevirmek-&catid=86:analizler-kafkaslar&Itemid=148

**Հասցե**

Abide-i Hürriyet Caddesi, No: 10,
Celil Ağa İş Merkezi, Kat:9, Daire:36.
Mecidiyeköy – Ստամբուլ

Էլեկտրոնային փոստ bilgesam@bilgesam.org
Հեռախոս: +90 212 217 65 91
Ֆաքս: +90 212 217 65 93

Անկարայի գրասենյակ
Atatürk Bulvari Havuzlu Sok.4/6
A. Ayranci/Cankaya - Անկարա
Էլեկտրոնային փոստ bilgesam@gmail.com
Հեռախոս +90 0312 4253290
Ֆաքս +90 0312 4253290

## ԱՄՆ Գերմանական Մարշալ Հիմնադրամ – Անկարա

Կազմակերպության Անկարայի գրասենյակը բացվել է 2005 թ.: Նպատակն է աջակցել Թուրքիայում և հարևան երկրներում ուժեղ քաղաքացիական հասարակության ձևավորմանը և ստեղծել ֆորում, որտեղ ամերիկացիները, եվրոպացիները և թուրքերը կարող են միմյանցից ինչ-որ բան սովորել և պատասխանել ընդհանուր մարտահրավերներին:



Կազմակերպության ներխուժումը Թուրքիա Եվրոպայի սահմանների երկայնքով առկա

քաղաքական մարտահրավերները հաղթահարելու անհրաժեշտության վկայությունն է, այդ թվում Բալկաններում, Սևծովյան տարածաշրջանում և Միջին Արևելքում: Գրասենյակը մշակում է քաղաքական ծրագրեր, կրթաթոշակներ և դրամաշնորհներ, որոնք աջակցում են Թուրքիայի ավելի ակտիվ և նշանակալի մասնակցությունը անդրատլանտյան համայնքում:

Օզգուր Ունլուհիսարչիկլի
Անկարայի գրասենյակի տնօրեն

“Վստահության և հանդուրժողականության մթնոլորտ, թե գեղեցիկ, բայց միայնակ Թուրքիա”, 6 դեկտեմբեր, 2009թ.: http://www.gmfus.org/publications/article.cfm?id=608

ԱՄՆ Գերմանիայի Մարշալ Ֆոնդ Hatir Sokak 27/1
G.O.P. 06670
Անկարա, Թուրքիա
Հեռախոս: +90 312 447 4080
Ֆաքս: +90 312 447 4048
http://www.gmfus.org/about/office.cfm?city=ankara

**KAFKASSAM (Կովկասյան ռազմավարական հետազոտությունների կենտրոն)**

Գտնվում է Անկարայում, գրասենյակներ ունի Երևանում, Թբիլիսիում, Բաքվում, Թավրիզում և Սոչիում: Գործունեությունն ընդգրկում է ողջ Կովկասը, չնայած հատուկ ուշադրություն է դարձվում Հայաստանին առնչվող և հայ գործընկերների հետ իրականացվող ծրագրերին: Մինչ օրս իրականացվել է նմանատիպ երկու ծրագիր. առաջինը հետազոտություն է փոխադարձ ընկալումների վերաբերյալ, որը իրականացվել է Թուրքիայում և Հայաստանում (առաջին երկու հետազոտությունները իրականացվել են Հայաստանում 2009 թ. հոկտեմբերին կայացած ֆուտբոլային հանդիպումից առաջ և հետո): Կազմակերպությունը մտադիր է կանոնավոր հիմունքներով շարունակել այս հետազոտությունները:

Մյուս ծրագրով յուրաքանչյուր կողմից վեց երիտասարդ նկարիչներ գալու են Գյումրի ցուցահանդեսի մասնակցելու և սահմանային խնդիրների մասին խոսելու համար: Խմբի հաջորդ հանդիպումը կանցկացվի Ստամբուլում

“Ստամբուլ. երազներից դեպի իրականություն” խորագրով: Նկարիչները նկարելու են քաղաքի մասին իրենց պատկերացումները: Նկարները ցուցադրվելու են հատուկ ցուցահանդեսի ժամանակ:

Կազմակերպության համացանցային կայքը սկսել է գործել 2010 թ. հունվարի 2-ին (միայն թուրքերեն լեզվով): Կայքում ներկայացված են Կովկասի երկրներին և Թուրքիայի հետ դրանց հարաբերություններին առնչվող հոդվածներ, հարցազրույցներ, վերլուծություններ և մեկնաբանություններ: Կայքի մի մասում ներկայացված են Հայաստանի վերաբերյալ հոդվածներ և մեկնաբանություններ:



Կենտրոնի տնօրենն է Հասան Օկթայը

Էլեկտրոնային փոստ: hasanoktay@kafkassam.com

**Հասցե**
Necatibey cad. 33/9
Kızılay / Çankaya
Անկարա
info@kafkassam.com
Հեռախոս: +90 312 229 82 40
Ֆաքս: +90 312 229 82 30
Կայք: http://www.kafkassam.com/

## Ռազմավարական մտածողության ինստիտուտ (SDE)

Պաշտոնապես հիմնադրվել է 2009 թ. մարտի 3-ին Ռազմավարական մտածողության և հետազոտության հիմնադրամի շրջանակում



Հասան Կոնի, Վարչության նախագահ (նկարում)

Նուզհետ Քանդեմիր, վարչության փոխնախագահ

Նախագահ, Յասին Ակտայ

Ինստիտուտի աշխատակիցներ Բիրոլ Ակգյունը և

Մուրատ Չեմրեկը հրատարակել են վերլուծություն “Հայաստանի խնդիրը Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ; Առաջարկություններ պատմական փակուղին հաղթահարելու համար”: Այս վերլուծությունը հրապարակվել է ինստիտուտի կողմից 2010 թ. ապրիլին կազմակերպված “Հայկական խնդրի նոր հեռանկարները” սեմինարի շրջանակում: Այստեղ քննարկվում են “Հայկական խնդրի ներքին օգտագործումը” և “Հայոց ցեղասպանության պնդումների հիմքը” թեմաները: Ներկայացնելով Թուրքիայի ռազմավարությունն այս խնդիրներում, վերլուծությունը նաև ներկայացնում է երկու կողմերի ակնկալիքները 2009 թ. արձանագրություններից:
http://www.sde.org.tr/userfiles/file/sde_ermeni.PDF

**Հասցե**
Çetin Emeç Bulvarı A. Öveçler Mah.
4. Cad. 1330. Sk. No:12
06460 Çankaya, Անկարա
Հեռախոս: +90 (312) 473 80 45
Ֆաքս: +90 (312) 473 80 46
Էլեկտրոնային փոստ: sde@sde.org.tr
Համացանց http://www.sde.org.tr/en/default.aspx

**SAM – Ռազմավարական հետազոտությունների կենտրոն (ԱԳՆ շրջանակներում)**

Ռազմավարական հետազոտությունների կենտրոնը (SAM) ակտիվ է սկսած 1995 թ. մայիսից: Այն իրականացնում է հետազոտություններ միջազգային հարաբերությունների և տարածաշրջանային խնդիրների վերաբերյալ, հետազոտում է միջազգային հակամարտությունները, գիտական գնահատումներ է կատարում նշված խնդիրների վերաբերյալ, և գնահատում է Թուրքիայի արտաքին քաղաքականությունը և դրա երկարաժամկետ հետևանքները: Հետազոտություններն իրականացվում են թուրքական և օտարերկրյա համալսարանների, ինստիտուտների և ոլորտում ընդգրկված մասնագետների հետ համագործակցությամբ: Հարցերը քննարկվում են բավականաչափ լայն ընդգրկմամբ և այս առումով կենտրոնը խորհրդակցում է քաղաքական, տնտեսական, ֆինանսական և մշակութային ոլորտների մասնագետների, ինչպես նաև արտաքին քաղաքականության ոլորտում փորձ ունեցող լրագրողների հետ:



Ֆերիդուն Սինիրլիօղլու
Արտգործնախարարի տեղակալը վարչության նախագահն է

Լուսանկարը՝ TRT News

**Հասցե**


Թուրքիայի Հանրապետություն
Արտաքին գործերի նախարարություն
Ռազմավարական հետազոտությունների կենտրոն (SAM)

Dr. Sadık Ahmet Cad. No:8
A Blok 12. Kat
Balgat / Անկարա 06100
Հեռախոս: +90 312 292 2622, +90 312 292 2622
Ֆաքս: +90 312 292 26 35
Էլեկտրոնային փոստ: strategy@mfa.gov.tr
Համացանց: www.sam.gov.tr


## Թուրքիա-Հայաստան հարաբերությունների ուղղությամբ աշխատող համալսարանական գիտնականներ

### Չենգիզ Ակտար (Bahcesehir Համալսարան)



Bahcesehir համալսարանի պրոֆեսոր է և Եվրամիության հետ հարաբերությունների ամբիոնի վարիչը: Նաև ամեն շաբաթ նյութեր է հրապարակում Vatan օրաթերթում: Թուրքիա-Եվրամիություն հարաբերությունների գծով փորձագետ է, միաժամանակ ակտիվորեն ներգրավված է քաղաքացիական հասարակության նախաձեռնություններում՝ ուղղված փոքրամասնությունների խնդիրներին, քրդական հարցին, և պատմական հաշտեցմանը: Ակտարը 2008 թ. դեկտեմբերին մեկնարկած "Ներողության արշավի" նախաձեռնողներից մեկն էր, որի շրջանակներում թուրքերն ու քրդերը իրենց համակրանքն էին հայտնում 1915 թ. դեպքերի զոհերին:

Ակտարի հոդվածները Վաթանում:
http://w10.gazetevatan.com/root.vatan?exec=yazareskiyazilar&wid=121

(պաշտոնական Հայաստանի նախաձեռնության վերջը), 7 մայիսի, 2010թ.:
http://haber.gazetevatan.com/haberdetay.asp?Newsid=291871&Categoryid=4&wid=121

Կոնտակտ: caktar@bahcesehir.edu.tr

### Ահմետ Ինսել (Galatasaray համալսարան)



Ստամբուլի Galatasaray համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի պրոֆեսոր է: Նա նաև Birikim ամսագրի խմբագիրն է, երկար տարիներ հոդվածներ է հրապարակում Radikal II-ի կիրակնօրյա հավելվածում: 2010 թ. ապրիլի 20-ից սյունակ ունի Radikal օրաթերթում: Նրա հոդվածները տես՝
[http://www.radikal.com.tr/Radikal.aspx?aType=RadikalYazarlar&AuthorCatID=0&Date=](http://www.radikal.com.tr/Radikal.aspx?aType=RadikalYazarlar&AuthorCatID=0&Date=)




Նա ևս 2008 թ. դեկտեմբերի ներողության արշավի նախաձեռնողներից է:
2010 թ. ապրիլին նա և Միշել Մարիանը հրատարակել են "Երկխոսություն հայկական տաբուի մասին" աշխատությունը (թուրքերեն և ֆրանսերեն).

Birikim-ում հրապարակված հոդվածները տես [www.birikimdergisi.com](http://www.birikimdergisi.com).

Կոնտակտ: [ainsel@gsu.edu.tr](mailto:ainsel@gsu.edu.tr)

### Մուստաֆա Այդին (Kadir Has Համալսարանի տնօրեն)



Միջազգային հարաբերությունների փորձագետ է և դոկտորի աստիճան է ստացել Լանկաստերի համալսարանից: 2010 թ. փետրվարից Kadir Has համալսարանի ռեկտորն է, որը Ստամբուլում գործող մասնավոր համալսարան է: Նաև Միջազգային քաղաքական հետազոտությունների ինստիտուտի տնօրենն է (TEPAV-IPRI) և Թուրքիայի միջազգային հարաբերությունների խորհրդի (UIK) նախագահը:

Ներկայումս "Միջազգային հարաբերություններ" և "Ռազմավարական հետազոտությունների ամսագիր" պարբերականների գլխավոր խնբագիրն է: Նա նաև Սևծովյան հետազոտությունների միջազգային կենտրոնի (ICBSS), Եվրոպական ուսումնասիրությունների հունական կենտրոնի (EKEM), ինչպես նաև մի շարք այլ կազմակերպությունների խորհրդական է:

Հրապարակել է բազմաթիվ գրքեր և հոդվածներ: Նրա հրատարակությունների մի մասը բերված է ստորև.

- “Թուրքիայի կովկասյան քաղաքականությունը”, UNISCI Discussion Paper, No. 23, 2010, էջ. 177-191. http://www.ucm.es/info/unisci/english/index.html
- “Կովկաս-կասպյան ավազանի աշխարհաքաղաքական զարգացումները և Թուրքիայի արտաքին և անվտանգության քաղաքականությունը”, Հարավային Կովկաս 2021: Նավթ, ժողովրդավարություն և աշխարհաքաղաքականություն, խմբագիր Էլխան Նուրիև, Լոնդոն, Routledge, ապրիլ 2010:
- “Թուրքիա. ներքին զարգացումներ և արտաքին քաղաքականություն”, Զեկույց Թուրքիայի նոր աշխարհաքաղաքական իրավիճակի մասին. տեսակետներ Հայաստանից և Թուրքիայից, խմբագիր Գայանե նովիկովա, Երևան, Spectrum, մայիս 2008, էջ 14-23:
- “Թուրքիայի քաղաքականությունը Կովկասի հանդեպ”, Raoul Mottika ve B. Balcı (der.), Religion et politique dans le Caucase post soviétique; Les tradtions réinventées à l’épreuve des influences extérieures, Paris, Maisonneuve&Larose, 2007, էջ. 69–80.
- “Կենտրոնական Ասիայի և Կովկասի աշխարհաքաղաքականություն. շարունակականություն և փոփոխություններ Սառը պատերազմից ի վեր”, Gabriele Rasuly-Paleczeck, Julia Katsching ve David Bryan (der.), Կենտրոնական Ասիա, անցյալը, ներկան և ապագան, Wiener Beiträge zur Ethnologie und Anthropologie, հատոր. 17, Վիեննա, Facultas Verlag, 2005.
- “Հետխորհրդային Եվրասիայի անվտանգությունը և աշխարհաքաղաքականությունը, 1989-2003: Տարածաշրջանային սպառնալիքներ, միջազգային մարտահրավերներ, գլոբալ պատասխաններ”, Միջազգային հարաբերությունների դիտարկում, հատոր 4, համար. 2, Ձմեռ 2004:
- “Ճոճանակային քաղաքականություն, Թուրքիան Կենտրոնական Ասիայում և Կովկասում”, Turkish Studies, հատոր. 5, համար 2, 2004, էջ 1–22:
- “Փխրուն քաղաքականությունը և անկայունության հաստատումը Կովկասում և դրա ազդեցությունը միջերկրականի ավազանի կայունության և անվտանգության վրա”, Antonio Marquina ve Hans G. Brauch (der.), Միջերկրածովյան ավազանը և նրա սահմանները. աշխարհագրություն, քաղաքականություն, տնտեսություն և բնապահահպանություն, Mosbach, Afes-Press ve Madrid, UNISCI, 2001, էջ 167-198:
- Կենտրոնական Ասիայի և Կովկասի նոր աշխարհաքաղաքականություն: Անկայունության և դժվարությունների պատճառները, Անկարա, Ռազմավարական հետազոտությունների կենտրոն, 2000.

Kadir Has համալսարանի անձնական կայքը
http://www.khas.edu.tr/en/about-khu/administration/cv/prof-dr-mustafa-aydin-kisa.html

**Ալին Օզինյան**



Ներկայումս սովորում է ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտուրայում: Բացի ուսումնառությունից, նա International Alert-CBCD-ի Թուրքիայի ծրագրի կոորդինատորն է, Zaman օրաթերթում աշխատում է որպես տարածաշրջանային քաղաքական վերլուծաբան և TABDC-ի (Թուրք-հայկական բիզնես զարգացման խորհուրդ) կազմակերպության հանրային կապերի պատասխանատուն է.

Օզինյանը Թուրքիա-Հայաստան հարաբերություններին առնչվող տարբեր հետազոտությունների հեղինակ է:

ՍՏՀԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցչություն, Ստամբուլ, Թուրքիայի հետազոտական ուսումնասիրություններ. “Հայկական խնդրի վերաբերյալ Թուրքիայում առկա ինտելեկտուալ և հոգևոր մթնոլորտը”:

“Թուրքիայում անօրինական աշխատող Հայաստանի քաղաքացիներ” Friederich Ebert Stiftung-Թուրքիա 2007-2008.

“Թուրքիայում աշխատող հայ միգրանտների վիճակը” Եվրասիա համագործակցության հիմնադրամ 2009-2010 թթ.: http://www.epfound.am/index.php?article_id=287&clang=0

Թուրքիա-Հայաստան հարաբերությունների վերաբերյալ Օզինյանի հոդվածների մի մասը:

Միգրացիա դեպի փակ դռների երկիր
http://www.zaman.com.tr/haber.do?haberno=963994&title=yorum-alin-ozinian-kapilari-kapali-bir-ulkeye-goc , 21 մարտ 2010 թ.

Ցանկանու՞մ է արդյոք Թուրքիան բացել իր ընդհանուր սահմանը Հայաստանի հետ:
http://www.todayszaman.com/tz-web/news-201172-does-turkey-want-to-open-its-common-border-with-armenia-by-aline-ozinian.html , 11 February 2010

Արդյո՞ք թուրքահայը սիրում է Հայաստանը
http://www.sundayszaman.com/sunday/detaylar.do?load=detay&link=184103
16 August 2009

Կոնտակտ: aline.ozinian@tabdc.org

## ՀԿ-ներ, Հիմնադրամներ

### Հրանտ Դինքի միջազգային հիմնադրամ

Հիմնադրվել է 2007 թ.՝ շարունակելու Դինքի ժառանգությունը: Հիմնադրամը գործունեություն է ծավալում մշակույթի և արվեստի, կրթության, պատմության, ժողովրդավարացման և մարդու իրավունքների, ինչպես նաև Թուրքիա-Հայաստան հետազոտությունների ոլորտում:

**Թուրքիա-Հայաստան ուսումնասիրությունների ծրագիրը և Թուրքիա Հայաստան ուսումնասիրությունների միջոցառումներ**

Հիմնադրամի նպատակներից մեկը Թուրքիայի հարաբերությունների նորմալացումն ու զարգացումն է իր "ամենահեռավոր հարևանի"՝ Հայաստանի հետ: Հիմնական թիրախն է՝ ավելացնել երկու երկրների միջև ուղղակի շփումները, բոլոր ոլորտներում ընդհանուր հարթակների ձևավորումը և հարաբերությունների հետագա զարգացմանն ուղղված նախաձեռնությունների ստեղծումը: Ինչպես նշված է հիմնադրամի կայքում, "Մենք կարծում ենք, որ երկու երկրների ժողովուրդների շփումների միջոցով կարելի է ընդհանուր լեզու ձևավորել, հետևաբար մենք հատկապես քաջալերում ենք Հայաստանի մասնակցությունը տարբեր ոլորտներում իրականացվող մեր բոլոր ծրագրերին":
http://www.hrantdink.org/faaliyetler.asp?bolum=5

**Ծրագիր: Եկեք հստակ սահմանենք մեր հարևանի հիմնական նորությունը**

Թուրք-հայկական երկխոսության ծրագիրը, որը Հրան Դինք հիմնադրամի և Հենրիխ Բյոլի հիմնադրամի համատեղ նախաձեռնությունն է, մեկնարկել է 2009 թ. մայիսին: Ծրագրի շրջանակներում Թուրքիայի 10 լրագրող 2009 թ. մայիսին այցելել են Հայաստան և հանդիպումներ են ունեցել Երևանում, Գյումրիում և Վանաձորում: 2009 թ. հոկտեմբերին Հայաստանից ինը լրագրող այցելել են Անկարա, Բուրսա և Ստամբուլ, հանդիպել բարձրաստիճան պաշտոնյաների հետ և ներկա գտնվել Բուրսայում անցկացվող Թուրքիա-Հայաստան խաղին: Մեկ շաբաթ տևողությամբ այցի ընթացքում մասնակիցները նաև հանդիպել են Թուրքիայի հայ համայնքի ներկայացուցիչների, ինչպես նաև այն թուրք լրագրողների հետ, ովքեր մի քանի ամիս առաջ եղել էին Հայաստանում: Հիմնվել է հաղորդակցային ցանց, որն օգնում է մասնակից լրագրողներին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվությունը միմյանց տրամադրելու գործընթացում:
http://www.hrantdink.org/detay.asp?id=22&bolum=Faaliyet&altbolum=5

Տարբեր լեզուներով Դինքի կողմից և նրա մասին հրատարակություններ, որոնք առնչվում են Թուրքիա-Հայաստան հարաբերություններին



[Երկու Մոտ Ժողովուրդ, Երկու Հեռու Հարևան]

November 2009




[Hrant Dink Von der Saat der Worte]

August 2008




[Deux Peuples Proches, Deux Voisins Lointains]

November 2009




[İki Yakın Halk İki Uzak Komşu]

July 2008

**Տնօրենների խորհրդի անդամներ**
Ռաքել Դինք – Նախագահ
Դելալ Դինք – Փոխնախագահ
Երվանդ Դինք – տնօրենների խորհրդի բյուջետային աշխատակից
Զաբել Դինք, Իբրահիմ Բեթիլ, Բեթուլ Թանբայ, Օրալ Չալիշլար

**Հասցե**: Հրանտ Դինքի միջազգային հիմնադրամ
Halaskargazi Cd. Sebat Apt. No:74 Kat 1 Daire 1
Osmanbey 80220 Şişli - Ստամբուլ

Հեռախոս.+90 212 2403361; +90 212 2403362; +90 212 2403365
Ֆաքս: +90 212 2403394
Էլեկտրոնային փոստ: info@hrantdink.org
Համացանց http://www.hrantdink.org/

**Հենրիխ Բյոլի հիմնադրամ**

Հիմնադրամը Գերմանիայի Կանաչների կուսակցության քաղաքական հիմնադրամ է և 1994 թ. գրասենյակ ունի Ստամբուլում: Հիմնադրամը աջակցություն է ցուցաբերում տեղի ՀԿ-ներին, կազմակերպում է կոնֆերանսներ և հրատարակություններ: Հիմնադրամը գործունեություն է ծավալում երեք ոլորտներում. ժողովրդավարացում, բնապահպանություն, արտաքին և անվտանգության քաղաքականություն: Արտաքին հարաբերությունների ոլորտում հիմնադրամի ծրագրերն ընդգրկում են Թուրքիա-Հայաստան ծրագրերը, ինչպես նաև օժանդակություն

է ցուցաբերվում այն ծրագրերին, որոնք առնչվում են Թուրքիայում բնակվող հայերին:



2004 թ. Թուրքիայի գրասենյակի ղեկավարն է Ուլրիկե Դաֆները

Կոնտակտ: udufner@boell-tr.org

Ծրագրեր

**Անի. երկխոսություն Հայաստանի և Թուրքիայի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև**

Կովկասի ինստիտուտի հետ համագործակցությամբ, Հենրիխ Բյոլի հիմնադրամի Հարավային Կովկասի և Թուրքիայի գրասենյակները նախաձեռնել են Անի երկխոսության ծրագիրը ՀԿ-ների երիտասարդ ակտիվիստների համար (18-35 տարեկան) Թուրքիայից և Հայաստանից:

2010 թ. ընթացքում Անի երկխոսության շրջանակներում հիմնադրվելու են հինգ աշխատանքային խմբեր.

- Մշակույթ և ժառանգություն
- Կրթություն և հետազոտություն
- Բնապահպանություն
- Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում
- ԶԼՄ-ներ և լրագրություն

Առաջին սեմինարն անցկացվելու է 2010 թ. հոկտեմբերի 13-17-ը Երևանում: Հետաքրքրված մասնակիցների համար դիմումների ներկայացման վերջնաժամկետն է 2010 թ. սեպտեմբերի 1-ը:

**Թուրքիա-Հայաստան լրագրողների փոխանակման ծրագիր**

Ծրագիրը մեկնարկել է 2009 թ. մայիսին և իրականացվում է Հրանտ Դինքի հիմնադրամի հետ համատեղ: Ծրագրին մասնակցում են տպագիր մամուլը ներկայացնող տասը երիտասարդ լրագրողներ (առավելագույն տարիքը՝ 35):



http://www.boell-tr.org/web/110-361.html

Թուրքական կողմից մասնակցող լրագրողներն են

Դեմետ Բիլգե Էրգուն (Radikal)
Էրգուն Չոլակօղլու (Yeni Şafak)
Բեդիա Չեյլան Գյուզելչե (Haber Türk)
Յոնչա Փոյրազ Դողան (Today's Zaman)
Նամիկ Դուրուկան (Milliyet)
Թուգնա Թեքերեկ (Taraf)
Քեմալ Գյոքթազ (Vatan)
Ասլի Աոզբիլիր (Hürriyet)
Գյուլսեն Իշերի (Birgün)
Էրդինչ Էրգենչ (Sabah)

Ծրագրի վերաբերյալ այս լրագրողների հոդվածները կարելի է գտնել այս կայքում.
http://www.boell-tr.org/web/385.html

Հրատարակություն
Քննարկելով հայկական հարցը, թուրքերեն և գերմաներեն, 2006 թ. http://www.boell-tr.org/web/111-412.html

**Հասցե**
Heinrich Böll Stiftung Derneği
İnönü Cad. Hacı Hanım Sok. 10/12+4
Gümüşsuyu 34439 Ստամբուլ

Հեռախոս + 90 212 249 15 54
ֆաքս + 90 212 245 04 30
Էլեկտրոնային փոստ: info@boell-tr.org
www.boell-tr.org

**Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամ Թուրքիա**

Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության քաղաքական հիմնադրամ է: Գործող տնօրենը և երկրի ներկայացուցիչը Մայքլ Մեյերն է: Մերտ Օնուրը պատասխանատու է հիմնադրամի Կովկասի ծրագրերի համար. mert.onur@festr.org.

Հայաստան-Թուրքիա խնդրին առնչվող ծրագրեր:

1. Հրանտ Դինքի հիշատակի սեմինար, 26-30 մայիս 2010, Ստամբուլ http://myweb.sabanciuniv.edu/hrantdink-workshop/; http://www.hrantdink.org/detay.asp?id=15&bolum=Duyuru

2. Ընդհանուր ապագա Թուրքիայի և Հայաստանի համար, բազմակողմ

սեմինարներ, հասարակություն և ժողովրդավարությունասոցիացիայի և ACGRC-ի հետ համատեղ, 28-30 հունիս 2010, Ստամբուլ
http://www.toplumvedemokrasi.org.tr/turkiye-ermenistan-ortak-gelecek-projesi-hayata-geciyor/

3. Թուրքիա-Հայաստան երկխոսություն շարք. Շարժվելով սխալից դեպի խելացին. Կլոր սեղան քննարկում TESEV-ի արտաքին քաղաքականության ծրագրի հետ համատեղ, նախատեսված է իրականացնել 2010 թ. աշնանը Ստամբուլում:

Հրատարակություններ

Աջակցել է TESEV-ի զեկույցին "Թուրք-հայկական հարաբերություններ. Արատավոր օղակ" հեղինակն է Այբարս Գյորգուլուն
http://www.tesev.org.tr/UD_OBJS/PDF/DPT/ERM/Turkey-Armenia%20Relations%20A%20Vicious%20Circle.pdf

**Հասցե**

Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ
Cihannüma Mahallesi
Mehmet Ali Bey Sk.
Kumcuoğlu Apt. No:12 D:5
34353 Beşiktaş / Ստամբուլ
Թուրքիա
հեռախոս: +90 (0) 212 310 8237
ֆաքս: +90 (0) 212 258 7091
Էլեկտրոնային փոստ: contact@festr.org

Անկարայի գրասենյակ
Abidin Daver Sk. No. 5 D.9
06550 Çankaya / Անկարա
Թուրքիա
հեռախոս: +90 312 4418596/ 97
ֆաքս +90 312 4418598
Էլեկտրոնային փոստ: contact@festr.org
http://www.festr.org/en/index.php

**Անադոլու կուլտուր**

ANADOLU KÜLTÜR

Անադոլու կուլտուրը հիմնադրվել է 2002 թ. արվեստի տարբեր ուղղություններ ներկայացնող անձանց և ինստիտուտների կողմից: Հիմնադրման պահից տնօրենն է Օսման Կավալան: osmankavala@superonline.com.



Նպատակն է՝ դառնալ հարթակ և աջակցել միջմշակութային համագործակցությանն ու փոխանակումներին դերասանների, մշակութային և կրթական կազմակերպությունների և տեղական իշխանությունների միջև, որոնք կընդգրկեն Թուրքիան, Եվրոպան և Թուրքիայի հարևան երկրները: 2005 թ. սկսած կազմակերպությունը համատեղ ծրագրեր է իրականացնում հարևան երկրների հետ այն սկզբունքով, որ մշակութային փոխանակումները կարող են նպաստել հասարակությունների միջև երկխոսությանն ու փոխադարձ հասկացողությանը:

**Տարածաշրջանային համագործակցություն. Հայաստան**

Հայաստանի հետ սերտ համագործակցությամբ ծրագրեր է իրականացնում 2005 թ.-ից:

**Ավարտված ծրագրեր: Մանրամասների համար տես *ավարտված ծրագրեր* բաժինը:**

Ցուցահանդեսներ:

Կովկասի երիտասարդ աչքերը (28 սեպտեմբեր - 2 հոկտեմբեր 2005),

Մերհա բարև (3 - 23 դեկտեմեր, 2006),

Արվեստ առանց սահմանների, Հայաստանի, Վրաստանի, Իրանի և Թուրքիայի ժամանակակից արվեստի ցուցահանդես (21 նոյեմբեր - 8 դեկտեմբեր 2007),

Խորհրդային ագիտարվեստ: Վերականգնում (18 հունվար - 29 փետրվար 2008),

Սիրելի Եղբայրս (14 - 27 սեպտեմբեր 2009):

Ցուցադրումներ:

Ֆիլմեր Հայաստանից (6 - 12 հոկտեմբեր 2006)

Սեմինարներ:

Հարավային Կովկասի և Արևելյան Անատոլիայի միջնադարյան ճարտարապետության ժառանգությունը: Արվեստի պատմության սեմինարներ (8 - 11 սեպտեմբեր 2007 և 10 - 12 հոկտեմբեր 2008):

**Շարունակվող ծրագրեր**

**Հայաստան-Թուրքիա կինո հարթակ**

Հիմնադրվելով 2009 թ. ապրիլին, հարթակը արտադրության և ցանցային համակարգի նախաձեռնություն է Հայաստանի և Թուրքիայի միջև, որի նպատակն է ստեղծել ռեժիսորների, պրոդյուսերների, դերասանների և

արվեստագետների միջև համագործակցության օրինակ և նպաստել հնարավոր համատեղ ձեռնարկներին:

Առաջին ծրագիրը վավերագրական ֆիլմերի զարգացմանը նվիրված սեմինարն էր, որն անցկացվեց Երևանում 2009 թ. հուլիսին: Հարթակի հինգերորդ հանդիպումը տեղի ունեցավ 2010 թ. ապրիլին Ստամբուլում: Սեմինարին դիմել էին 40 ծրագրեր Թուրքիայից և 18 ծրագրեր Հայաստանից: Յուրաքանչյուր երկրից ընտրվել էին հինգ ծրագրեր:

**Մեծահասակների կրթությունը և բանավոր պատմությունը որպես հայ-թուրքական հաշտեցման ուղի**

2009 թ. հոկտեմբերին աշնանային ճամբար էր կազմակերպվել dvv international-ի և Ազգագրական հետազոտությունների կենտրոնի հետ համատեղ: Տասը ուսանողներ Թուրքիայից և Հայաստանից հանդիպեցին Դիլիջանում մեկ շաբաթյա սեմինարին մասնակցելու համար:

Նպատակն էր ուսուցանել երիտասարդ մասնակիցներին դիտարկել երկու երկրների իրականությունը՝ շեշտը դնելով բազմամշակութային հիշողության և ինքնության վրա: Հետազոտական կոմպոնենտը իրականացվեց երկու հայտնի գիտնականների կողմից՝ Պրոֆեսոր Հրանուշ Խառատյան-Առաքելյան Գիտությունների ազգային ակադեմիայից և պրոֆեսոր Լեյլա Նեյզիի կողմից՝ Ստամբուլի Սաբանչի համալսարան: Սեմինարի նախավերջին օրը ուսանողները հարցազրույցներ վերցրին Դիլիջանում և շրջակայքում բնակվող մարդկանցից:

Որպես շարունակություն, 2009 թ. հոկտեմբերից 2010 թ. փետրվարը Խառատյան-Առաքելյանի և Նեյզիի կողմից ղեկավարվող խմբերը Հայաստանում և Թուրքիայում բանավոր պատմության հետազոտություն իրականացրին: Երկու երկրների համալսարանական ուսանողներն ակտիվ մասնակցություն ունեցան հետազոտության ընթացքում: Արդյունքները հրապարակվելու են մեկ գրքում հայերեն, թուրքերեն լեզուներով, ինչպես նաև անգլերեն լեզվով: Ծրագիրը շարունակվելու է 2010 թ., երբ Թուրքիայում կկազմակերպվի երկրորդ ուսանողական ճամբարը: http://www.learningtolisten.de/

**Հասցե** Cumhuriyet C. No: 40 Ka-Han Kat: 3
Elmadag 34367 Ստամբուլ
Էլեկտրոնային փոստ: iletisim@anadolukultur.org
Համացանց: www.anadolukultur.org

Մելտեմ Ասլան
Գործադիր տնօրեն
meltemaslan@anadolukultur.org

Հեռախոս +90.212 233 23 47
Ֆաքս: +90.212 232 18 66

Սիբիլ Չեկմեն
Ծրագրի օգնական
Կովկասյան նախաձեռնություն
sibilcekmen@anadolukultur.org
Հեռախոս +90.212 233 23 47
ֆաքս +90.212 232 1866

**Նոր զարթոնք**

Նոր զարթոնք ասոցիացիան հիմնադրվել է 2007 թ. մի խումբ երիտասարդ ստամբուլահայերի կողմից: Կոնֆերանսների, կլոր սեղանների և հրատարակությունների միջոցով Նոր զարթոնքը անդրադառնում է այնպիսի հարցերի, ինչպիսիք են Թուրքիայում հայերի և այլ փոքրամասնությունների վիճակը և հաշտեցումը անցյալի հետ: 2009 թ. հունվարի դրությամբ ասոցիացիայի անդամները ինտերնետ ռադիո են հեռարձակում, որը յուրաքանչյուր երեկո հաղորդումներ է սփռում թուրքերեն, հայերեն, հունարեն, քրդերեն և լազերեն (http://www.norradyo.com/).

Կոնտակտ: info@norzartonk.org

**DurDe “(Ասա ոչ ռասիզմին և ազգայնականությանը)**

“Ասա ոչ ռասիզմին և ազգայնականությանը” նախաձեռնությունը հիմնադրվել է 2007 թ. փետրվարին Հրանտ Դինքի սպանությունից հետո ռասիզմի և ազգայնականության դեմ պայքարելու համար: Հենց սկզբից կազմակերպության օրակարգում էին Թուրքիա-Հայաստան հարաբերությունները և Թուրքիայի հայ փոքրամասնության խնդիրները: Առաջին ծրագրված գործողություններից մեկն այցելությունն էր Հայաստան 2008 թ.: Սակայն ֆինանսավորման խնդիրների պատճառով այցելությունը չիրականացավ:

Նախաձեռնությունը կազմակերպել է մի շարք միջոցառումներ և արշավներ: Դրանց թվում է 2008 թ. դեկտեմբերին ներողությունների

ստորագրությունների արշավը, որը մեծ արձագանք գտավ թուրքական և միջազգային ԶԼՄ-ներում: Առաջին ստորագրողների թվում էին շուրջ երեք հարյուր մտավորականներ: Նախաձեռնությունը կազմակերպել է երկու ֆորումներ Ստամբուլում "Ինչու՞ ենք մենք ներողություն խնդրում" արշավի համար 2008 թ. դեկտեմբերին և 2009 թ. հունվարին: Երրորդ ֆորումը կազմակերպվել է Անկարայում 2009 թ. մարտին:

DurDe-ն մեկն էր այն կազմակերպիչներից, ովքեր նախաձեռնել էին երկու ավտոբուսներով ներկա գտնվել Բուրսայում կայանալիք Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային խաղին 2009 թ. հոկտեմբերի 14-ին: Վերջին միջոցառումը Թաքսիմ հրապարակում հիշողության միջոցառումն էր՝ 2010 թ. ապրիլի 24-ին: Այս միջոցառման կազմակերպման կոչն արել էին մի խումբ մտավորականներ և արվեստագետներ: Կոչին արձագանքել ու միջոցառմանը մասնակցել էր շուրջ 1500 մարդ: Միջոցառումը մեծ հետաքրքրություն էր առաջացրել տեղական և միջազգային մամուլում:

**Հասցե**
Karakedi Kültür Merkezi,
İstiklâl Cad, Bekâr Sokak, 16/2, Beyoğlu, Ստամբուլ.

Հեռախոս: 0090 212 - 249 17 76
Էլեկտրոնային փոստ: durde@durde.org
համացանց: http://www.durde.org/

Թուրքիա Հայաստան գործողություններին առնչվող հարցերի համար դիմել՝
Չենգիզ Ալգան cengiz.algan@gmail.com

**Ari Շարժում**

ARI շարժումն անկախ, ոչ կուսակցական սոցիալական շարժում է, որը հիմնադրվել է 1994 թ.՝ քաջալերելու կամավորականությունը, քաղաքացիական ակտիվությունը և վերլուծական մտածողությունը թուրք երիտասարդության շրջանում, պատրաստելու ապագա առաջնորդների՝ քաջալերելով թուրք երիտասարդության ինտելեկտուալ զարգացումը և սոցիալական մասնակցության չափը, ստեղծելով մասնակցային ժողովրդավարության վերաբերյալ պատկերացումներ Թուրքիայում:



Նախագահ
Ուրալ Ակյուզում
uralakuzum@gmail.com
ural@akuzum.com



Փոխնախագահ, միջազգային հարաբերությունների պատասխանատու վարչության անդամ
Արդա Բատու
arda@ari.org.tr

**Թուրքիա-Հայաստան հարաբերություններին առնչվող և ընթացքի մեջ գտնվող ծրագրեր**

Սևծովյան երիտասարդության ֆորումի գագաթնաժողով (ֆինանսավորվում է GMF-ի կողմից)։
20 երիտասարդներ Ադրբեջանից, Հայաստանից, Վրաստանից, Ուկրաինայից և Թուրքիայից, որոնք ընտրվել են բավականին հեշտ մրցութային պայմանների հիման վրա, մասնակցել են եռօրյա սեմինարի, որն ավարտվել է հանրային բաց կոնֆերանսով, որի նպատակն էր տարածաշրջանի սառեցված հակամարտությունների լուծումների փնտրումը։ Արդյունքը Սևծովյան երիտասարդական ֆորումի գագաթնաժողովի հռչակագիրն էր, որը բաժանվեց բոլոր ինստիտուտներին։ ARI շարժման նպատակն է կրկնել այս ծրագիրը տարածաշրջանի տարբեր երկրներում յուրաքանչյուր տարի։

Հայ-թուրքական թիմային զեկուցման ծրագիր

Երևանի մամուլի ակումբը (Հայաստան) ARI ծրագրի հետ համագործակցությամբ (Թուրքիա) և Եվրասիա հիմնադրամի աջակցությամբ հայտարարել են մրցույթ այն լրագրողների համար, ովքեր կցանկանան ընդգրկվել հայ-թուրքական հետաքննողական թիմային զեկուցման ծրագրում, որի նպատակն է ստեղծել բաձրորակ սյուժեներ երկու կողմերին հետաքրքրող խնդիրների վերաբերյալ։ Ծրագիրը կօգնի բարձրացնել հանրային իրազեկման աստիճանը հայ-թուրքական միջսահմանային նախաձեռնությունների վերաբերյալ։ Ընտրված լրագրողները մասնակցեցին Ստամբուլում երկօրյա նախապատրաստական սեմինարին 2008 թ. հունվարին, որից հետո նրանց մեկ ամիս ժամանակ տրվեց նյութեր հավաքելու և սյուժեներ գրելու համար։ Անհրաժեշտ վարչական, տեղեկատվական, ֆինանսական և տեխնիկական աջակցություն ցուցաբերվեց Երևանի մամուլի ակումբի և ARI շարժման կողմից։

ARI-ին կազմակերպում է “Հարավային Կովկասի երիտասարդ առաջնորդների գագաթնաժողով” 2010 թ. հուլիսի 13-16-ը, Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի չորսական մասնակիցների համար։

Ուրալ Աքյուզունը “Հասարակական դիվանագիտության երկխոսության ծրագրի” կանոնավոր մասնակից է, ծրագրին աջակցում է Ֆրիդրիխ Էբերտի

անվան հիմնադրամը: Արդա Բատուն 2008-2010 թթ. ընթացքում մի քանի անգամ այցելել է Հայաստան և մասնակցել տարբեր կոնֆերանսների:

**Հասցե**
Cumhuriyet Cad. No: 133 Kat 8
34367 Şişli Ստամբուլ
Թուրքիա

Հեռախոս +90 212 211 90 71 - 72
ֆաքս +90 212 273 00 85
http://www.ari.org.tr/

## Քաղաքական գործիչներ, դիվանագետներ, արտգործնախարարության աշխատակիցներ

### Աբդուլա Գյուլ (նախագահ)



Աբդուլա Գյուլը Թուրքիայի Հանրապետության 11–րդ նախագահն է և պաշտոնը ստանձնել է 2007 թ. օգոստոսին: Գյուլը ազդեցիկ քաղաքական գործիչ էր 1990-ական թվականներից սկսած, առաջին անգամ ընտրվել է Ազգային Մեծ Ժողովի պատգամավոր 1991 թ.: 2001 թ. "Արդարություն և զարգացում" կուսակցության հիմնադիրներից է և 2002 թ. ընտրություններից հետո զբաղեցրել է վարչապետի պաշտոնը մեկ տարի ժամկետով, որից հետո մինչև 2007 թ. Թուրքիայի արտգործնախարարն էր: Այդ պաշտոնում փորձում էր բարելավել հարաբերությունները թե Եվրամիության և թե հարևան պետությունների հետ, նրա պաշտոնավարման օրոք մեկնարկեցին Եվրամիության անդամակցության պաշտոնական բանակցությունները:

Նա Թուրքիայի առաջին նախագահն է և բարձրաստիճան պաշտոնյան, ով 2008 թ. սեպտեմբերի 6-ին պաշտոնապես այցելեց Հայաստան՝ ընդունելով Թուրքիայի և Հայաստանի ֆուտբոլի հավաքականների հանդիպումը դիտելու հրավերը:



Պաշտոնական կայք http://cankaya.gov.tr/

### Ահմետ Դավութօղլու, արտաքին գործերի նախարար

Պաշտոնը զբաղեցնում է 2009 թ. մայիսից, 2002 թ. սկսած եղել է "Արդարություն և զարգացում"

կուսակցության արտաքին հարաբերությունների խորհրդականը: Դավութօղլուն, որին Թուրքիայում ԱՄՆ նախկին դեսպանը՝ Մարկ Պարիսը, անվանել է "Թուրքիայի Քիսինջեր", լայնորեն ընդունվում է որպես Թուրքիայի արտաքին քաղաքականության ինտելեկտուալ ապահովման հեղինակ: Ծնվելով պահպանողական քաղաք համարվող Կոնիայում, նա ավարտել է Ստամբուլի գերմանական միջազգային դպրոցը և ստացել է դոկտորի աստիճան Բողազչի համալսարանից: Այնուհետև քաղաքագիտություն է դասավանդել Մալազիայի միջազգային իսլամական համալսարանում, որից հետո զբաղեցրել է Բեյկենտ համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնը:

2001 թ. հրապարակել է "Ռազմավարական խորություն" աշխատությունը՝ կողմ արտահայտվելով Թուրքիայի և մերձակա հարևանների միջև նորացված հարաբերություններին: Այս ռազմավարությունը հետագայում անվանվել է "Զրո խնդիրներ հարևանների հետ": Արտգործնախարարի պաշտոնը զբաղեցնելուց հետո մի քանի անգամ հանդիպել է Հայաստանի գործընկերոջ հետ և 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում ստորագրել է երկկողմ արձանագրությունները:

Թուրքիայի ԱԳՆ պաշտոնական կայք http://www.mfa.gov.tr/ahmet-davutoglu.en.mfa
Թուրքիայի Հանրապետություն, ԱԳՆ
Balgat / Անկարա / Թուրքիա 06100
Հեռախոս (+90 312) 292 10 00

**Իբրահիմ Քալըն (արտաքին քաղաքականության խորհրդական)**



Ներկայումս զբաղեցնում է վարչապետի արտաքին հարաբերությունների գծով գլխավոր խորհրդականի պաշտոնը: Մագիստրոսի կոչում է ստացել Մալազիայի իսլամական միջազգային համալսարանում, դոկտորի կոչում՝ Վաշինգտոնի Ջորջ Վաշինգտոնի անվան համալսարանում: Դասավանդել է Մասաչուսեթս նահանգի Վորչեսթեր քաղաքի Սուրբ Խաչ քոլեջի Կրոնագիտության ֆակուլտետում (2002-2005): Որպես իսլամագիտության մասնագետ, աշխատել է Ջորջթաունի համալսարանի արքայազն Ալվալեդ Բին Թալալի անվան մահմեդականություն-քրիստոնեություն փոխհասկացողության կենտրոնում: Մինչ այդ աշխատել է ԱՄՆ Սուրբ Խաչ քոլեջում: Հանդիսանում է Անկարայում գործող Քաղաքական, տնտեսական և սոցիալական հետազոտությունների SETA հիմնադրամի հիմնադիր-նախագահը, և եղել է նրա ընդհանուր համադասողը 2006 – 2009 թթ.: Վարչապետի խորհրդականի պաշտոնը զբաղեցնելուց բացի նա նաև հոդվածներ է հրապարակում Sabah պարբերականում:
Կոնտակտ: ibrahimkalin@gmail.com

## Հայաստանի հետ առնչվող դիվանագետներ

**Ֆերիդուն Սինիրլիօղլու**



Առավել հայտնի դիվանագետներից է և մեծ փորձ ունի Թուրքիայից արևելք և հարավ ընկած հարևան երկրների հետ հարաբերություններում: Եղել է նախագահ Դեմիրելի ազդեցիկ խորհրդականը այն ժամանակաշրջանում, երբ Քրդական աշխատավորական կուսակցության առաջնորդ Օջալանը դուրս մղվեց Սիրիայից և հետագայում ձերբակալվեց 1999 թ: Դժվարին ժամանակներում եղել է Իսրայելում դեսպան, իսկ Գյուլի արտգործնախարար դառնալուց հետո, զբաղեցրել է փոխարտգործնախարարի պաշտոնը (müstesar yardimcisi): Որպես փոխարտգործնախարար հատուկ բանագնացի կարգավիճակով ուղարկվել է Հայաստան 2010 թ. ապրիլին:

**Ունալ Չևիկոզ**



Զբաղեցրել է փոխարտգործնախարարի պաշտոնը, իսկ 2010 թ. ապրիլին նշանակվել է դեսպան Լոնդոնում:

Դիվանագիտական կարիերայի ընթացքում աշխատել է որպես Կովկաս-կենտրոնական Ասիայի վարչության ղեկավար, զբաղեցրել է Ադրբեջանում Թուրքիայի դեսպանի պաշտոնը, Հայաստանի հետ հիմնական բանակցողն էր և Կովկասի վերաբերյալ մեծ փորձ ունի:
Իրաք ԱՄՆ ներխուժման ընթացքում կամավոր մեկնել է Բաղդադ, որպես դեսպան:
turkemb.london@mfa.gov.tr

## Ալի Բաբաջան, նախկին արտգործնախարար



Ալի Բաբաջանը (աջից) Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ Ստամբուլում 2008 թ. նոյեմբերին

Զբաղեցրել է արտգործնախարարի պաշտոնը 2007 թ. ընտրություններից հետո մինչև 2009 թ. ապրիլ, երբ նշանակվել է Տնտեսության նախարար: Նրա պաշտոնավարման ընթացքում երկկողմանի հարաբերություններում կարևոր քայլեր են իրականացվել: Բաբաջանը նախագահ Գյուլի հետ ժամանել է Երևան 2008 թ. սեպտեմբերի 6-ին: Այդ հանդիպումից հետո երկու երկրների արտգործնախարարները 2008 թ. սեպտեմբերից 2009 թ. ապրիլն ընկած ժամանակահատվածում հանդիպել են ևս յոթ անգամ :

Հեռախոս: 0090 312 4154016 -2047155 Ֆաքս 2128764

**Սուատ Կընիկլիօղլու, “Արդարություն և զարգացում” կուսակցություն**



Առաջին անգամ խորհրդարանի պատգամավոր է ընտրվել 2007 թ. հուլիսին Չանկիրի նահանգից որպես “Արդարություն և զարգացում” կուսակցության անդամ: Կընիկլիօղլուն “Արդարություն և զարգացում” կուսակցության արտաքին հարաբերությունների գծով փոխնախագահն է և խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ: Կուսակցության ներսում առավել հայտնի արտաքին քաղաքականության գծով փորձագետներից է: Քաղաքագիտության բակալավրի աստիճան է ստացել Օտտավայի Կարլտոն համալսարանից, միջազգային հարաբերությունների մագիստրոսի կոչում՝ Անկարայի Բիլկենտ համալսարանից: Նախքան պատգամավոր ընտրվելն Անկարայում աշխատել է Ավստրալիայի դեսպանատանը և Կանադայի միջազգային զարգացման գործակալության Անկարայի գրասենյակում: 2005-2007 թթ. զբաղեցրել է ԱՄՆ գերմանական Մարշալ հիմնադրամի Անկարայի գրասենյակի տնօրենի պաշտոնը:

Նա խորհրդարանում և խորհրդարանից դուրս զբաղվել է Թուրքիա-Հայաստան հարաբերություններով:

Հարցազրույց: 11 մարտ 2010, Հայաստանի հետ արձանագրությունների վավերացումը Թուրքիայի կողմից այժմ “գրեթե անհնար է”. Ազատ Եվրոպա Ազատություն ռադիոկայանի հայկական ծառայություն Երևանում http://www.suatkiniklioglu.org/en/press-room/turkish-ratification-of-armenia-accords-almost-impossible-now.html

Մամուլի ասուլիս: 4 մարտ 2010 “Հայկական սփյուռքի ծախսատար հաղթանակը”, կայացել է Վաշինգտոնում ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի որոշումից հետո: Կինիկլիօղլուն հայտարարել է. “Չնայած թվերի առումով աղյունքը մեր դեմ էր, բայց այստեղ գտնվող յուրաքանչյուրը տեսավ, որ սա շատ ծախսատար հաղթանակ էր հայկական Սփյուռքի համար: Այդ

պատճառով, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր ջանքեր են գործադրել այս խնդրում”: http://www.suatkiniklioglu.org/en/etkinlikler/kiniklioglu-a-costly-victory-for-the-armenian-diaspora.html

Հարցազրույց: 22 փետրվար 2009, Sunday’s Zaman, “Թուրքիան և Հայաստանը մոտենում են հարաբերություններում զգալի բեկման սահմանագծին”: http://www.suatkiniklioglu.org/en/interviews/turkey-and-armenia-nearing-major-breakthrough-in-relations.html

Խմբագրական 26 ապրիլ 2006, Turkish Daily News, “Թուրքերը և հայերը” http://www.suatkiniklioglu.org/en/op-eds/turks-and-armenians.html

Կանոնավոր կերպով հոդվածներ է հրապարակում Today’s Zaman պարբերականում. http://www.todayszaman.com/tz-web/80-suat-kiniklioglu.html

Կայք: http://www.suatkiniklioglu.org/en/home.html

Կապի միջոցներ
Թուրքիայի ազգային մեծ ժողով
Հեռախոս: +90 312 420 5840
Ֆաքս: +90 312 420 6961
Կայք http://www.suatkiniklioglu.org/en/contact-information/suat-kiniklioglu.html

**Ուֆուկ Ուրաս,** Խաղաղություն և ժողովրդավարություն կուսակցություն



2007 թ. հուլիսի ընտրություններում պատգամավոր է ընտրվել որպես անկախ թեկնածու Ստամբուլի անատոլիական ափից: Քրդական DTP կուսակ ցության փակումից և նրա անդամ երկու պատգամավորների վրա դրված քաղաքական գործունեության արգելքից հետո, Ուրասը միացել է DTP-ի հաջորդ ԽԺԿ կուսակցությանը, որպեսզի վերջինս կարողանա խորհրդարանական խմբակցություն ձևավորել:

Միակ պատգամավորն էր, ով ուղեկցել է նախագահ Գյուլին Երևան կատարած այցելության ընթացքում 2008 թ. սեպտեմբերի 6-ին: 2010 թ. ապրիլի 24-ին Ստամբուլում կայացած հիշողության միջոցառումների կազմակերպիչներից մեկն է:

Կոնտակտ : ufukuras@tbmm.gov.tr
Համացանց: http://www.ufukuras.net

http://twitter.com/UfukUras

**Մևլութ Չավուշօղլու (Արդարություն և զարգացում կուսակցություն)**



ԵԽԽՎ գործող նախագահն է: Թուրքիայի խորհրդարանում ներկայացնում է Անթալիան: Առաջին անգամ պատգամավոր է ընտրվել 2002 թ., "Արդարություն և զարգացում" կուսակցության հիմնադիր անդամներից է:
2010 թ. մայիսի կեսերին որպես ԵԽԽՎ նախագահ այցելել է Հայաստան, հանդիպել նախագահ Սարգսյանի, քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Հայոց ցեղասպանության հուշահամալիր այցելության մերժումը հանգեցրեց այցի` "պաշտոնականից" "աշխատանքայինի" փոփոխմանը, և Դաշնակցության կողմից նրա հետ նախատեսված հանդիպումը բոյկոտելու պատճառ դարձավ:



Անձնական կայք (թուրքերենով) http://www.mevlutcavusoglu.com/
Ֆաքս +90 312 420 69 72
Էլեկտրոնային փոստ bilgi@mevlutcavusoglu.com

**Նախկին դիվանագետներ**

**Թեմել Իսկիթ (նախկին դեսպան)**



Պաշտոնաթող դեսպան Թեմել Իսկիթն արտգործնախարարությունում աշխատանքի է անցել 1963 թ.: Շուրջ քառասուն տարի տևողությամբ դիվանագիտական կարիերայի ընթացքում աշխատել է տարբեր դեսպանատներում, զբաղեցրել է պաշտոններ

արտգործնախարարության կենտրոնական կառույցում, այդ թվում Եվրամիության հետ հարաբերությունների գլխավոր տնօրենի և տնտեսական հարաբերությունների գծով փոխարտգործնախարարի պաշտոնները: Պաշտոնաթողությունից հետո հինգ տարի դասավանդել է Սաբանջի համալսարանում, ինչպես նաև Բիլգի համալսարանում: Ներկայումս հոդվածներ է հրապարակում TARAF պարբերականում (նրա հոդվածները տես՝ http://taraf.com.tr/temel-iskit/):

Կապ: tiskit@turk.net

### Վոլքան Վուրալ



Թուրքիայի դեսպանն էր Մոսկվայում այն ժամանակ, երբ Հայաստանը, խորհրդային այլ հանրապետությունների հետ անկախություն ստացավ: 1991 թ. ապրիլին առաջին բարձրաստիճան թուրք պաշտոնյան էր, ով այցելեց Հայաստան՝ քննարկելու երկկողմ դիվանագիտական հարաբերությունների ստեղծման խնդիրը: Եղել է նաև Թուրքիայի դեսպանը Թեհրանում, Արևմտյան Գերմանիայում, Իսպանիայում, զբաղեցրել է վարչապետի գլխավոր խորհրդականի, փոխարտգործնախարարի և Եվրամիության հետ հարաբերությունների գլխավոր քարտուղարի պաշտոնները: Պաշտոնաթող է եղել 2006 թ. և ներկայումս Դողան խմբի խորհրդականն է, ինչպես նաև TUSIAD-ի (Թուրք արդյունաբերողների և գործարարների միություն) վարչության անդամ: Նրա ղեկավարության ներքո TUSIAD-ը Թուրքիա-Հայաստան հարաբերությունների առնչությամբ փակ քննարկում է անցկացրել 2009 թ.:

2008 թ., Նեսե Դուզելի հետ հարցազրույցում, Վուրալը արեց հայտարարություններ, որոնք մեծ հնչեղություն ստացան երկկողմ հարաբերությունների վերաբերյալ ընթացող բանավեճում: http://www.taraf.com.tr/nese-duzel/makale-volkan-vural-ermeni-ve-rumlar-tekrar-vatandas.htm

Հարցազրույցում նա հայտարարել է, որ եթե պաշտոնյա լիներ, ներողություն կխնդրեր օսմանյան կայսրության տարիներին հույներին և հայերին հասցված ցավի համար: Նա պնդում էր, որ նրանց ժառանգներին պետք է Թուրքիայի քաղաքացիություն առաջարկել:

Կապ TÜSIAD
Türk Sanayicileri ve İşadamları Derneği
Meşrutiyet Cad. No:74
Tepebaşı 34420 - Ստամբուլ
Հեռախոս: 0 212 249 54 48 /249 19 29
Ֆաքս :0 212 293 37 83

## Գործարար միություններ / Գործարարներ

### Թուրք-հայկական բիզնես զարգացման խորհուրդ

Հիմնադրվել է 1997 թ. մայիսի 3-ին Ստամբուլում և Երևանում, առաջին և միակ պաշտոնական կապն է երկու երկրների համայնքների հանրային և մասնավոր հատվածների միջև: Կազմակերպության համանախագահներն են Արսեն Ղազարյանը և Քաան Սոյակը:

Կազմակերպության նպատակն է սերտ համագործակցություն հաստատել Հայաստանի և Թուրքիայի գործարար շրջանակների միջև, օգնել հայկական և թուրքական ընկերություններին պարզեցնել գործողություններն ու հաղորդակցության ուղիները: Թուրք-հայկական բիզնես զարգացման խորհուրդը աշխատում է տարբեր ոլորտներում ուղիղ առևտրական և գործարար կապերի, Հայաստանի և Թուրքիայի կառավարությունների միջև սերտ հարաբերությունների հաստատման ուղղությամբ, որպեսզի նրանք հնարավորություն ունենան գլոբալ տնտեսական քաղաքականություն ձևավորել:

Թուրքական կողմից նախագահ՝ Քանան Սոյակ



Առաջինն էր, ով կազմակերպեց ԱՄՆ կառավարության հումանիտար օգնության տեղափոխումը Կովկաս և Կենտրոնական Ասիայի երկրներ”: Սոյակը միջազգային հարաբերությունների և քաղաքագիտության բակալավրի կոչում է ստացել Թուրքիայի Միջին Արևելքի տեխնիկական համալսարանից: Նա նաև առաջինն էր, որ հիմնադրեց թուրք-ռուսական համատեղ ձեռնարկություն՝ ռուսական կապիտալը ներկայացնելով Թուրքիայում: Պարոն Քանանը ծնվել է 1961 թ., ներկայումս զբաղեցնում է Mr. Kaan Alyans-Tempo Logistics and Transportation Management կազմակերպության նախագահի և գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնները: noyan.soyak@tabdc.org

Քանան Սոյակ, Nisan 2010’a dogru Türk-Ermeni Normallesme Süreci ve Rusya’nin Kafkasya Politikalari, TABDC ապրիլ 2010, քաղաքական վերլուծություն.

Թուրք-հայկական բիզնես զարգացման խորհուրդ **(Թուրքիա)**

Հեռախոս: + 90 (212) 236 00 17 Fax: 90 (212) 259 72 51
Էլեկտրոնային փոստ: tabdc@tabdc.org

**Հանրային կապերի կոորդինատոր**

Ալին Օզինյան (alineozinian@gmail.com)

# ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆ



## ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Պաշտոնական անվանումը՝ Հայաստան[6]
Բնակչությունը: **3.238.000**
Տարածքը: 29.743 կմ. քառակուսի
Բնակչության խտությունը: **109 մարդ/կմ. քառակուսի**
Հիմնական քաղաքներ/բնակչություն:
Երևան, 1.111.300
Գյումրի, 146.438
Վանաձոր, 104.800
Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն: 1.127.400 դրամ (1 դոլար = 400 դրամ)
Պետության ղեկավար: Նախագահ՝ Սերժ Սարգսյան
Գործող կառավարություն
Վարչապետ՝ Տիգրան Սարգսյան
Քաղաքական կուսակցություններ (խորհրդարանում):

**Խորհրդարանական ընտրություններ, մայիս 12, 2007**
մանդատների քանակը (եթե այլ բան չի նշվում)

| | **Համամաս.** | **Մեծամաս.** | **քվե տոկոս** | **Ընդ** |
|---|---|---|---|---|
| Հանրապետական | 41 | 24 | 33.8 | 65 |
| Բարգավաճ Հայաստան | 18 | 6 | 15.1 | 24 |
| ՀՅԴ | 16 | 4 | 13.1 | 20 |
| Օրինաց երկիր | 8 | 1 | 7.1 | 9 |
| Ժառանգություն | 7 | 0 | 6.0 | 7 |
| այլ/անկախ | 0 | 6 | 24.9 | 6 |
| **Ընդհանուր** | **90** | **41** | **100.0** | **131** |

[6] Հիմնված է Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայության վերջին տեղեկությունների վրա www.armstat.am

Ազգային օրենսդրություն; ՀՀ սահմանադրություն (Ընդունվել է հանրաքվեով 1995 թ. և փոփոխությունների է ենթարկվել 2005 թ. հանրաքվեով):

Հաջորդ համապետական ընտրություններ: 2012 (խորհրդարանական) և 2013 (նախագահական):

Գրանցված ասոցիացիաների թիվը; ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ՀԿ-ների կայունության համաթվի համաձայն (հունիս 2009),[7] Հայաստանում գրանցված հասարակական կազմակերպությունների թիվը, ներառյալ ՀԿ-ներ, հիմնադրամներ և ասոցիացիաներ, անցնում է 4.000ը:

## ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐ ԹՎԱԿԱՆՆԵՐ 2008-2010

21 փետրվար 2008

Նախագահ Աբդուլա Գյուլը շնորհավորում է նախագահ Սերժ Սարգսյանին նախագահական ընտրություններում տարած հաղթանակի կապակցությամբ. "Ես հուսով եմ, որ Ձեր նոր պաշտոնը թուրք և հայ ժողովուրդների հարաբերությունների նորմալացման հնարավորություն կստեղծի" ասել է Գյուլը Սարգսյանին ուղղված ուղերձում:

5 հուլիս 2008

Սարգսյանը Թուրքիայի նախագահին սեպտեմբերի 6-ին հրավիրում է Հայաստան՝ դիտելու Հայաստանի և Թուրքիայի հավաքականների միջև աշխարհի առաջնության որակավորման փուլի հանդիպումը:

18 հուլիս 2008

Ալի Բաբաջանը հաստատում է, որ Հայաստանը և Թուրքիան մի շարք գաղտնի հանդիպումներ են անցկացրել Բեռնում մայիսին և հուլիսին: (Արտգործնախարարի տեղակալ Էրթուղրուլ Ապականը և նրա տեղակալ Ունալ Չևիկոզը գլխավորել են թուրքական պատվիրակությունը, հայկական պատվիրակությունը գլխավորել է փոխարտգործնախարար Արման Կիրակոսյանը): Բաբաջանը և Սարգսյանը սակայն, մեծ կարևորություն չեն տվել այդ հանդիպումներին: Հայաստանի վարչապետը հայտարարել է. "Չկա որևէ գաղտնիք կամ զարմանալու պատճառ: Հայաստանի և Թուրքիայի դիվանագետների միջև նման շփումները երբեք չեն դադարել և միշտ տեղի են ունենում":

30 օգոստոս 2008

[7] http://www.usaid.gov/locations/europe_eurasia/dem_gov/ngoindex/2008/armenia.pdf

Նախագահ Գյուլը ընդունում է Սարգսյանի հրավերը

<u>7 սեպտեմբեր 2008</u>

Թուրքական և հայկական պատվիրակությունները արտգործնախարարների գլխավորությամբ քննարկում են Կովկասում նոր տարածաշրջանային ֆորում ստեղծելու թուրքական կողմի առաջարկը, Լեռնային Ղարաբաղի խնդիրը և այլ տարածաշրջանային հարցեր: Բաբաջանը Նալբանդյանին ասում է, որ Թուրքիան աջակցում է Մինսկի գործընթացը Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման ուղղությամբ, և ավելացնում, որ Թուրքիան հարգում է տարածաշրջանի բոլոր երկրների տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը:

<u>12 դեկտեմբեր 2008</u>

Թուրքիայի խորհրդարանը կոչ է անում այլ երկրների խորհրդարաններին չխոչընդոտել Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների նորմալացման գործընթացը 1915 թ. իրադարձությունները ցեղասպանություն ճանաչելու ջանքերի միջոցով: Խորհրդարանի խոսնակ Քոկսալ Թոփթանը հայտարարում է, որ քաղաքական գործիչները և խորհրդարանները չեն կարող դատել պատմությունը:

<u>15 դեկտեմբեր 2008</u>

Մի խումբ թուրք ինտելեկտուալներ և գիտնականներ հրապարակավ ներողություն են խնդրում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի սպանությունների համար: Շուրջ 30.000 մարդու կողմից ստորագրված տեքստում նշվում է:

> *"Իմ խիղճը թույլ չի տալիս ընդունել 1915 թ. Օսմանյան հայերի մեծ աղետի հանդեպ առկա անզգացմունքայնությունն ու այդ փաստի մերժումը: Ես մերժում եմ այդ անարդարությունը և իմ կողմից իմ համակրանքն եմ արտահայտում իմ հայ եղբայրների զգացմունքներին և կրած ցավին: Ես ներողություն եմ խնդրում նրանցից":*

Այս նախաձեռնության հրապարակումից քիչ անց, 146 պաշտոնաթող թուրք դեսպաններ հակադարձ հայտարարություն հրապարակեցին. "Այսօր հայկական սփյուռքն ու տիրապետությունն ավարտին հասցրեց իր առաքելությունը" - նշվում էր այնտեղ. "Մենք տեղյակ ենք, որ ծրագրի երկրորդ փուլը ներառում է ներողությունը, իսկ հաջորդ քայլը կլինի հողի և փոխհատուցման պահանջը":

<u>16 հունվար 2009</u>

"Մենք երբեք այսքան մոտ չենք եղել Հայաստանի հետ հարաբերությունների վերջնական կարգավորման ծրագրին" հայտարարում է Բաբաջանը:

22 հունվար 2009

“Մենք շատ մոտ ենք կանգնած հայ-թուրքական հարաբերությունների նորմալացմանը”,- ասել է Նալբանդյանը,- “Մենք կարող ենք կատարել հաջորդ քայլը և լուծել խնդիրը, եթե Թուրքիան, Հայաստանի նման, մոտենա խնդրին առանց նախապայմանների և բացի սահմանը: […] Սահմանի բացումից հետո, մենք պատրաստ ենք հանձնաժողով ստեղծել և քննարկել երկու երկրների համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրներ”:

22 ապրիլ 2009

Ինտենսիվ դիվանագիտական գործընթացից հետո (որտեղ առաջատար դեր էր խաղում Միացյալ Նահանգները), Անկարան և Երևանը կեսգիշերին համատեղ հայտարարություն են հրապարակում՝ շեշտելով, որ համաձայնության են եկել ճանապարհային քարտեզի և երկկողմ հարաբերությունների նորմալացման ամբողջական շրջանակի շուրջ:

13 մայիս 2009

Հայաստանի հետ սահմանը փակ կմնա քանի դեռ ադրբեջանական տարածքների օկուպացիային վերջ չի տրվել - Բաքվում հայտարարել է վարչապետ Էրդողանը:

> *“Այստեղ պատճառահետևանքային կապ կա: Լեռնային Ղարաբաղի օկուպացիան այստեղ պատճառ է, իսկ սահմանի փակումը հետևանք. մենք չենք կարող բացել սահմանը քանի դեռ օկուպացիային վերջ չի տրվել”*

31 օգոստոս 2009

Դիվանագիտական հարաբերությունների հաստատման և հարաբերությունների զարգացման մասին արձանագրությունները հրապարակվում են Թուրքիայի և Հայաստանի արտգործնախարարների կողմից: Արձանագրությունները նախատեսում են դիվանագիտական հարաբերությունների հաստատում և միջկառավարական հանձնաժողովի ստեղծում երկու երկրների միջև առկա բոլոր հարցերը քննարկելու նպատակով, ներառյալ պատմության ենթահանձնաժողովը: Արձանագրությունները խիստ քննադատության են արժանանում հայկական սփյուռքի, Հայաստանի ընդդիմության, Ադրբեջանի և Թուրքիայի ազգայնական շրջանակների կողմից:

10 հոկտեմբեր 2009

Արձանագրությունները ստորագրվում են Էդվարդ Նալբանդյանի և Ահմետ Դավութօղլուի կողմից Ցյուրիխի համալսարանի մեծ դահլիճում: Շվեյցարիայի արտգործնախարար Միշելին Քալմի Ռեյը, ԱՄՆ պետքարտուղար Հիլարի

Քլինթոնը, Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը, Ֆրանսիայի արտգործնախարար Բեռնար Քուշները, Եվրամիության գլխավոր հանձնակատար Խավիեր Սոլանան և Սլովենիայի արտգործնախարար Սամուել Զբոգարը մասնակցում են արարողությանը:

14 հոկտեմբեր 2009

Սերժ Սարգսյանը այցելում է Թուրքիա Աբդուլա Գյուլի հետ միասին Բուրսայում կայանքլիք Հայաստան - Թուրքիա ֆուտբոլային հանդիպումը դիտելու: Նախքան խաղը երկու նախագահները հանդիպում են միմյանց:

21 հոկտեմբեր 2009

Արձանագրությունները ուղարկվում են Թուրքիայի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողով:

24 նոյեմբեր 2009

Հայաստանի և Թուրքիայի խորհրդարանների նախագահները հանդիպում են Մոսկվայում Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի շրջանակում:

12 հունվար 2010

Հայաստանի սահմանադրական դատարանը հաստատում է արձանագրությունների համապատասխանությունը ՀՀ սահմանադրությանը: Որոշման նախաբանում դատարանը հայտարարում է, որ արձանագրությունները չեն կարող մեկնաբանվել այնպիսի ձևով, որը կհակասի Հայաստանի անկախության հռչակագրի 11-րդ հոդվածին, որտեղ ասվում է, որ Հայաստանը աջակցում է Օսմանյան կայսրությունում և Արևմտյան Հայաստանում 1915 թ. տեղի ունեցած ցեղասպանության միջազգային ճանաչմանը:

18 հունվար 2010

Հայաստանի Սահմանադրական դատարանի որոշումը մեկնաբանող հայտարարության մեջ Թուրքիայի արտործնախարարությունը նշել է.

> *“Դիտարկվել է, որ այս որոշումը պարունակում է նախապայմաններ և սահմանափակիչ կետեր, որոնք վնասում են Արձանագրությունների տառին և ոգուն: Նշված որոշումը վնասում է արձանագրությունների բանակցման բուն պատճառին ինչպես նաև դրանց հիմնական նպատակին: Այս մոտեցումը չի կարող ընդունվել մեր կողմից”:*

9 փետրվար 2010

Հայաստանի նախագահը ուղերձ է հղում Թուրքիայի նախագահին՝ կոչ անելով նրան հավատարիմ մնալ արձանագրություններին և առաջ շարժվել նորմալացման գործընթացով: Մեկ օր անց Թուրքիայի նախագահը դրական պատասխան է տալիս:

7 ապրիլ 2010

Երևանում Էդվարդ Նալբանդյանը հանդիպում է Էրդողանի հատուկ բանագնաց Ֆերիդուն Սինիրլիօղլուի և փոխարտգործնախարարի գլխավորած թուրքական պատվիրակությանը: Նույն օրը, մի փոքր ավելի ուշ, Սինիրլիօղլուն հանդիպում է Սերժ Սարգսյանին և նրան է փոխանցում Էրդողանի, Գյուլի և Դավութօղլուի գրավոր ուղերձները:

12 ապրիլ 2010

Էրդողանն ու Սարգսյանը հանդիպում են Վաշինգտոնում, նախագահ Օբամայի հրավիրած միջուկային անվտանգությանը նվիրված գագաթնաժողովի շրջանակում: ԶԼՄ-ների հաղորդագրությունների համաձայն, <<երկու ղեկավարները համաձայնել են շարունակել հարաբերությունների նորմալացման գործընթացն արտաքին գործերի նախարարների կանոնավոր հանդիպումների միջոցով>>: Հաջորդ օրը Նալբանդյանն ու Դավութօղլուն հանդիպում են աշխատանքային ճաշի ժամանակ, որը կազմակերպել էր Հիլարի Քլինթոնը: Նրանց զրույցը կենտրոնանում է նախորդ օրը Սարգսյանի և Էրդողանի միջև կայացած քննարկումների վրա:

22 ապրիլ 2010

Հայաստանը կասեցնում է արձանագրությունների վավերացման գործընթացը: Հայաստանի նախագահը հայտարարում է.

> ՝Մեկ տարի շարունակ Թուրքիայի բարձրաստիճան պաշտոնյաների կողմից նախապայմանների լեզվով շարադրված հրապարակային խոսքերի պակաս չի զգացվել, մեկ տարի շարունակ Թուրքիան ամեն ինչ արել է ժամանակ ձգելու և գործընթացը տապալելու համար: Հետևաբար մեր եզրակացությունն ու դիրքորոշումն էլ միանշանակ է.
>
> *1.* Թուրքիան պատրաստ չէ սկսված գործընթացը շարունակել և առանց նախապայմանների, արձանագրությունների տառին համապատասխան քայլերով առաջ շարժվել:
>
> 2. Ողջամիտ ժամկետները, մեր կարծիքով, ավարտվել են: Ամեն գնով ապրիլի 24-ն անցկացնելու թուրքական գործելաոճը պարզապես անընդունելի է:
>
> 3. Մենք անընդունելի ենք համարում նաև Հայաստան-Թուրքիա երկխոսությունն ինքնանպատակ դարձնելու անիմաստ ձեռագիրը և այս պահից սկսած՝ հարաբերությունների կարգավորման ներկա փուլը համարում ենք սպառված:

*[…]*Այս ընթացքում Թուրքիայի հետ սկսված գործընթացի ապագայի վերաբերյալ ես քննարկումներ եմ ունեցել և շարունակում եմ դրանք Ֆրանսիայի Նախագահ Նիկոլա Սարկոզիի, ԱՄՆ Նախագահ Բարաք Օբամայի, Ռուսաստանի Նախագահ Դմիտրի Մեդվեդևի, ինչպես նաև եվրոպական մի շարք կառույցների մեր գործընկերների հետ: Ես շնորհակալ եմ նրանց՝ մեր նախաձեռնությանը ցուցաբերած օժանդակության, գործընթացին սատարելու և դրա առաջընթացին միտված ջանքերի համար: Չեմ թաքցնում, մեր գործընկերները հորդորել են ինձ շարունակել գործընթացը, հորդորել են չկանգնեցնել այն:

Եվ հարգելով նրանց, նրանց ջանքերն ու անկեղծ ցանկությունները, կոալիցիոն գործընկերների հետ և Անվտանգության խորհրդում քննարկումներից հետո, մենք վճռել ենք առայժմ դուրս չգալ գործընթացից, այլ միայն կասեցնել արձանագրությունների վավերացման ընթացակարգը: Վստահ եմ՝ սա է պահանջում մեր ազգային շահը: ”[8]

Օտարերկրյա առաջնորդները (ԱՄՆ, Ֆրանսիա, Շվեյցարիա, Եվրամիություն և այլն) ողջունեցին գործընթացից ամբողջությամբ դուրս չգալու որոշումը:
Թուրքիան հայտարարեց, որ շարունակում է հավատարիմ մնալ գործընթացին:

<u>24 ապրիլ 2010</u>

Հայերի հիշողության օրը Օբաման հայտարարեց:

“Հիշատակի այս հանդիսավոր օրը մենք կանգ ենք առնում՝ հիշելու, որ 95 տարի առաջ սկսվեց 20-րդ դարի ծանրագույն եղեռնագործություններից մեկը: Պատմության այդ մութ շրջանում՝ Օսմանյան Կայսրության մայրամուտի օրերին, 1.5 միլիոն հայեր կոտորվեցին կամ իրենց մահը գտան տեղահանության ճանապարհին», - իր ուղերձում ասել է Բարաք Օբաման՝ հավելելով. - «Ես մշտապես հայտարարել եմ իմ սեփական տեսակետը 1915 թվականին կատարվածի վերաբերյալ, և իմ տեսակետն այդ պատմության վերաբերյալ չի փոխվել: Մեր բոլորի շահերից է բխում փաստերի լիարժեք, անկեղծ և արդարացի ճանաչմանը հասնելը: Մեծ Եղեռնը հայ ժողովրդի պատմության կործանարար էջերից է, և մենք պետք է կենդանի պահենք այդ մասին հիշողությունը՝ ի նշան զոհերի հանդեպ հարգանքի և որպեսզի խուսափենք անցյալի սահմռկեցուցիչ սխալներից»:

«Ես ողջունում եմ այն թուրքերին, ովքեր 1915 թվականին փրկել են

[8] ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը; Ապրիլ 22 2010, http://www.president.am/events/statements/eng/?id=60

հայերի, եւ քաջալերված եմ պատմության այս ցավալի դրվագի շուրջ թուրքերի և հայերի միջև երկխոսությամբ, ինչպես նաև հենց Թուրքիայում ծավալվող քննարկումներից: Միասնաբար թուրք և հայ ժողովուրդները ավելի կուժեղանան՝ ճանաչելով իրենց ընդհանուր պատմությունը և ընդունելով իրենց ընդհանուր մարդկայնությունը" [9]:

ԱՄՆ նախագահը <u>չօգտագործեց ցեղասպանությունը եզրույթը</u>:

<u>24 ապրիլ 2010</u>

Ստամբուլում մի քանի հարյուր մտավորականներ աննախադեպ ժողով էին կազմակերպել՝ նշելու Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը:

### ԶԼՄ-ներ

#### Լրագրեր/Լրագրողներ/հոդվածագիրներ/խմբագիրներ

#### Առավոտ

*Առավոտը հիմնադրվել է* 1994 թ.: Անկախ լրագիր է, ունի շուրջ 3.000 տպաքանակ և Հայաստանի առավել հարգված և կարդացվող պարբերականներից մեկն է: Տպագիր մամուլի հատվածում Առավոտը հիմնական լրագրերից էր, որ անդրադառնում էր հայ-թուրքական հարաբերություններին: Եվրասիա համագործակցության հիմնադրամի կողմից ֆինանսավորված և «Լրագրողների թիմը հանուն կայուն ապագայի» ՀԿ-ի կողմից վերջերս իրականացված հետազոտության համաձայն, 2006-2009 թթ. Առավոտը 350 հոդվածներ է հրապարակել Հայաստան-Թուրքիա հարաբերությունների առնչությամբ:

[9] Սպիտակ Տան վեբ-կայք, http://www.whitehouse.gov/the-press-office/statement-president-barack-obama-armenian-remembrance-day

 *Արամ Աբրահամյան*

*Առավոտը հիմնադրվել է* 1994 թ. Արամ Աբրահամյանի կողմից, որը մինչ օրս շարունակում է զբաղեցնել գլխավոր խմբագրի պաշտոնը: Կրթությամբ երաժշիտ լինելով, ստացել է գիտությունների թեկնածուի կոչում՝ արվեստի տեսության գծով՝ Երևանի պետական կոնսերվատորիայում: Ավարտելուց հետո աշխատել է որպես երաժշտության ուսուցիչ: Այնուհետև աշխատել է Գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտում՝ որպես գիտաշխատող մինչև 1991 թ՝ Հայաստանի անկախության հռչակումը: Դրանից հետո ընդգրկվել է քաղաքական լրագրության մեջ: 1992-1994 զբաղեցրել է նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի մամուլի խոսնակի պաշտոնը: Աբրահամյանը, ինչպես և «Առավոտը», լիբերալ հայացքների կրող է: Իր խմբագրականներում աջակցություն է արտահայտում հայ-թուրքական հարաբերությունների նորմալացմանը և քննադատում է ազգայնական հռետորաբանությունը: Նա հայկական հեռուստատեսության կանոնավոր հյուրերից է: Աբրահամյանը մասնակցում է Երևանի մամուլի ակումբի աշխատանքներին և կազմակերպել է հայ-թուրքական ծրագիր՝ լրագրողների համար: Եղել է Թուրքիայում: aram@aravot.am

 Մարգարիտ Եսայանը «Առավոտի» թղթակից է 1996 թվից: esmargo@rambler.ru

 Աննա Իսրայելյան, մեկ այլ ճանաչված լրագրող, «Առավոտում» է 1997 թվից: annais-1@yandex.ru

*Առավոտ օրաթերթ*
Հայաստան, 0023, Երևան, Արշակունյաց պողոտա, շենք 2ա, 15-րդ հարկ
Հեռ: +374 10 528752 (Գլխավոր խմբագիր, +374 10 568868)
ֆաքս: +374 10 528752, +374 10 529752
Էլեկտրոնային փոստ: news@aravot.am, Համացանց http://www.aravot.am

**Ազգ**

*Ազգը հիմնադրվել է* 1991 թ.: 1992 թ. դարձել է օրաթերթ: Հիմնադիր խմբագիր Հակոբ Ավետիքյանը Ռամկավար ազատական կուսակցության անդամ է: 1999 թ. սկսած Ազգն ունի ինտերնետային կայք չորս լեզուներով, այդ թվում նաև թուրքերեն: Նա մանրամասնորեն անդրադառնում է հայ սփյուռքին, հայկական մշակույթին, Հայաստան-Թուրքիա հարաբերություններին, միջին արևելքի և Թուրքիայի քաղաքական խնդիրներին: Տպաքանակը` մոտ 3.000 է:
Պարբերաբար և մանրամասն անդրադարձել է հայ-թուրքական հարաբերություններին` ուշադրություն դարձնելով թուրքական ներքին քաղաքականությանը, Ստամբուլի հայ համայնքին և այլն: Ազգը հաճախ է թարգմանություններ տպագրում թուրքական պարբերականներից: Նաև հրապարակումներ է կատարում սփյուռքահայ պարբերականներից:


Հակոբ Ավետիքյան

Լիբանանում ծնված Հակոբ Ավետիքյանը բանասիրություն է սովորել ԵՊՀ-ում: Այնուհետև վերադարձել է Լիբանան, և աշխատել Ռամկավար ազատական կուսակցության պաշտոնաթերթ «Զարթոնք»-ում՝ 1980 – 1990 թթ. աշխատելով որպես գլխավոր խմբագիր: 1990 թ. հիմնադրել է «Ազգը» դառնալով գլխավոր խմբագիր: Նա ուշադիր հետևում և գրում է Թուրքիայի քաղաքականության և Ստամբուլի հայկական համայնքի մասին, խոսում է թուրքերեն:



Հակոբ Չաքրյան

Թուրքահայ Հակոբ Չաքրյանը «Ազգի» լրագրող է և մասնագիտացել է Թուրքիայի և Հայաստան-Թուրքիա հարաբերություններում: Վարժ տիրապետում է թուրքերենին: Նրա ընտանիքը Յոզղաթից տեղափոխվել է Ստամբուլ և բնակվել է այնտեղ մինչև 1968 թ, երբ նրա հայրը որոշել է տեղափոխվել Խորհրդային Հայաստան: Չաքրյանը աշխատել է Գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիուտում՝ որպես գիտաշխատող, այնուհետև տեղափոխվել Պատմության ինստիտուտ, այդ ողջ ընթացքում աշխատելով նաև «Ազգ»-ի համար: Հայտնի թուրքագետ է, հաճախ է դասախոսություններ կարդում, մամուլի ասուլիսներ կազմակերպում հայ-թուրքական հարաբերությունների և Թուրքիայի քաղաքականության վերաբերյալ:

Ազգ օրաթերթ; 47 Հանրապետության փողոց, Երևան 0010, Հայաստան
Հեռախոս: 374 10 529353, +374 10 581841, +374 10 582483;
Ֆաքս: +374 10 562863
Էլեկտրոնային փոստ: azg2@arminco.com, azg@azg.am
Համացանց: http://www.azg.am

## Հայկական Ժամանակ

Հիմնադրվել է 1997 թ., չնայած կարճ ժամանակ անց փակվել է: Վերաբացվել է 1999 թ. Նիկոլ Փաշինյանի կողմից: Պարբերականը միշտ քննադատաբար է մոտեցել նախագահներ Քոչարյանի և Սարգսյանի կառավարություններին: Նախքան 2007 թ. խորհրդարանական ընտրությունները հստակ պաշտպանել է ընդդիմադիր շարժումը: Փաշինյանը դարձել է «Այլընտրանք» քաղաքական շարժման առաջատար ակտիվիստներից, խումբ, որը միավորում էր Հայաստանի հիմնական ընդդիմադիր ուժերի մեծ մասին: Այնուհետև դարձել է ժողովրդական շարժման ակտիվ անդամ, որը աջակցում էր Լևոն Տեր-Պետրոսյանին 2008 թ. փետրվարի նախագահական ընտրություններում: Նաև կազմակերպել և ղեկավարել է հետընտրական հանրահավաքների ու երթերի մեծ մասը: Երբ 2008 թ. մարտի 1-ին ընդդիմության ակտիվիստների և ոստիկանության միջև արյունալի բախումներ տեղի ունեցան, Փաշինյանն ընդհատակ անցավ: Նրան մեղադրանք առաջադրվեց մարդկանց բռնության դրդելու և բռնությամբ կառավարությանը տապալելու փորձի մեջ: Նա հանձնվեց իշխանություններին 2009 թ. հուլիսի 1-ին: Ձերբակալությունից անմիջապես հետո հայտարարեց, որ մասնակցելու է Ազգային Ժողովի թափուր տեղի ընտրություններին: Ընտրարարշավին մասնակցելով բանտախցից, Փաշինյանը պարտություն կրեց ընտրություններում: (Ընդդիմությունը մեղադրեց իշխանություններին ընտրությունները կեղծելու մեջ): Չնայած նա բանտում է, սակայն նրա հոդվածներն ու խմբագրականները կանոնավոր տպագրվում են Հայկական Ժամանակում:

Պարբերականը հրապարակում է ընդդիմադիր Ժողովրդական շարժման (2008 թ. կեսերից հայտնի է որպես Հայ ազգային կոնգրես) հայտարարությունները, Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթները, և ընդդիմադիր գործունեության մանրամասն հաշվետվություններ: Միջին տպաքանակը 3.000 է, չնայած քաղաքական ակտիվության ժամանակաշրջանում կարող է հասնել մինչև 10.000:

Որպես Հայաստանի ամենամեծ և ամենաազդեցիկ օրաթերթերից մեկը, Հայկական Ժամանակը ակտիվորեն անդրադառնում է հայ-թուրքական հարաբերություններին: Պարբերականը Լևոն Տեր-Պետրոսյանի նման, աջակցում է նորմալացման գործընթացին, սակայն քննադատում է կառավարությանը գործընթացը վարելու ձևի համար: Հայ-թուրքական ԶԼՄ-ների վերաբերյալ Եվրասիա համագործակցության հիմնադրամի իրականացրած հետազոտության համաձայն (տես ստորև), պարբերականն այդ խնդրի վերաբերյալ 230 հոդված է հրատարակել 2006-2009 թթ.: Հիմնական ժանրը մեկնաբանություններ/վերլուծություններն են:

 Նիկոլ Փաշինյան

Փաշինյայնը (ծնված 1975 թ. Իջևանում) բանասիրություն է սովորել ԵՊՀ-ում: Պրոֆեսիոնալ լրագրության մեջ է ընդգրկվել 1993 թ.: 1994-1997 թթ. աշխատել է "Լրագիր" պարբերականում, (անկախ ինտերնետային պարբերական, որը բացահայտորեն քննադատում էր կառավարությանն ու նրա քաղաքականությունը): 1999 թ. դարձել է Հայկական Ժամանակի գլխավոր խմբագիր: Փաշինյանի կինը՝ Աննա Հակոբյանը, պարբերականի համահիմնադիրն է, հոդվածներ է հրատարակում Հայաստանի արտաքին քաղաքականության, այդ թվում Թուրքիայի հետ հարաբերությունների վերաբերյալ: Հակոբյանը նաև Հայկական Ժամանակը հրատարակող ընկերության տնօրենն է:

Հայկական Ժամանակ
37 Իսրայելյան փողոց, Երևան, Հայաստան;
Էլեկտրոնային փոստ: info@armtimes.com, editor@armtimes.com
Հեռախոս: +37410 581175, +37410 544339
Համացանց www.armtimes.com

**Գոլոս Արմենիի (Հայաստանի Ձայն)**

Գոլոս Արմենիին ռուսալեզու պարբերական է, որի ընթերցողները գտնվում են նաև Հայաստանից դուրս՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի հայ համայնքներ և այլն:
Պարբերականի խմբագիրն է Թբիլիսիում ծնված Ֆլորա Նախշկարյանը: Թբիլիսիում ծնված Մարինա Գրիգորյանը պարբերականի հիմնական լրագրողն է, ով անդրադառնում է նաև հայ-թուրքական հարաբերությունների տարբեր ասպեկտներին: Նախշկարյանը, ով մասնագիտությամբ բանասեր է, լրագրող է աշխատում 1971 թ., խմբագիր է դարձել 1992 թ.՝ պարբերականի բացումից մեկ տարի անց: Մարինա Գրիգորյանը, նույնպես բանասեր,

նախկինում աշխատել է Կոմունիստ, Ռեսպուբլիկա Արմենիի, Նովոյե Վրեմյա ռուսալեզու հայկական պարբերականներում: Գոլոսում աշխատում է 1993 թ.: 2004 թ. ժամանակավորապես դուրս է եկել Գոլոսից՝ զբաղեցնելով Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի տեղեկատվության և հանրային կապերի վարչության պետի պաշտոնը, որտեղ աշխատել է մինչև 2006 թ.: Նաև վեց տարի աշխատել է Ֆրանսիական միջազգային ռադիոյում: 2008 թ. նա «Արմենիա Նաու» պարբերականի ռուսերեն տարբերակի խմբագիրն է: (www.armenianow.com).


Մարինա Գրիգորյան

Հայաստան-Թուրքիա նորմալացման գործընթացի մեկնարկին զուգահեռ, Գոլոսը պետք է միջոցներ գտներ հավասարակշռելու գործընթացի հանդեպ իր ավանդական սկեպտիկ մոտեցումը Սարգսյանի կառավարությանը ցուցաբերվող աջակցության հետ: Այնուամենայնիվ, խորհրդարանում վավերացման գործընթացի կասեցումից հետո, և Թուրքիայի հանդեպ Հայաստանի կառավարության քննադատական մոտեցման պայմաններում Գոլոսը ի վիճակի է հարմարավետորեն շարունակել իր քննադատական մոտեցումը Հայաստան-Թուրքիա հարաբերություններին առնչվող խնդիրներին:

*Գոլոս Արմենիի,* Հայաստան, 0023, Երևան, Արշակունյաց Պողոտա, շենք 2ա, 7-րդ հարկ Հեռ: +374 10 529245
Գլխավոր խմբագիր: +374 10 527723
Ֆաքս: +374 10 528908,
Էլեկտրոնային փոստ: info@golosarmenii.am
Համացանց: http://www.golos.am

Մարինա Գրիգորյանի կոնտակտները:
Հեռ. +374 10 52 88 39 (աշխատանք)
Էլեկտրոնային փոստ: magrin18@yahoo.com

### Հայոց աշխարհ



Հիմնադրվել է 1997 թ. մասնավոր սեփականատիրոջ կողմից: Բավականին ինքնավստահ (ներկայումս կառավարամետ) պարբերական է 3.500 տպաքանակով: Քոչարյանի իշխանության տարիներին խիստ քննադատաբար էր տրամադրված հայ-թուրքական հարաբերությունների նորմալացմանը, սակայն Սարգսյանի կողմից գործընթացի նախաձեռնումից հետո քննադատությունը նվազել է: Պարբերականը մանրամասն ներկայացրել է հայ-թուրքական հարաբերությունները, այդ խնդրի վերաբերյալ 344 հոդված հրապարակելով 2006-2009 թթ.: Հիմնադիր խմբագիրն է Գագիկ Մկրտչյանը: Մինչ 1997 թ. նա աշխատել է Գոլոս Արմենիի և Երկիր (ՀՅԴ-ի օրգան, արգելվել է 1995 թ.) պարբերականներում:


Գագիկ Մկրտչյան

Վարդան Գրիգորյանը Հայաստան-Թուրքիա հարցերով զբաղվող հիմնական լրագրողն է:

Հայոց աշխարհ, 38 Թումանյան փողոց, Երևան, Հայաստան,

Հեռ: +374 10 53 88 65 (խմբագրություն), +374 10 53 28 06 (խմբագրի տան համար)
Ֆաքս: +374 10 533221
Էլեկտրոնային փոստ: hayashkh@arminco.com
http://www.armworld.am

## Հեռուստատեսություն: Մեկնաբաններ/խմբագիրներ

### Հ1, հանրային հեռուստաընկերություն

Հանրային (պետական) հեռուստաալիք է, հիմնադրվել է 1956 թ.: Հեռարձակվում է ամբողջ աշխարհում արբանյակի օգնությամբ: Անդրադառնում է բոլոր խնդիրներին՝ քաղաքականությունից մինչև սպորտ և մշակույթ: Հեռարձակումը միշտ իրականացվում է հայերեն լեզվով:

“Հայլուր”-ը Հ1-ի լրատվական ծառայությունն է: Կիրակի օրը վերլուծում է շաբաթվա իրադարձությունները, առավել կարևոր խնդիրների մանրամասն քննարկմամբ:

 Արմեն Ամիրյան

Արմեն Ամիրյանը հայկական ռադիոյի տնօրենն էր: Վերջերս նշանակվել է Հանրային ռադիոյի և հեռուստատեսության տնօրեն, որին պատկանում է Հ1-ը:

Հայաստանի նախագահի մամուլի նախկին խոսնակ Սամվել Ֆարմանյանը նշանակվել է Հ1-ի քաղաքական-վերլուծական ծրագրերի տնօրեն:

Արթուր Գրիգորյանը առավել փորձառու հեռուստավերլուծաբաններից է, ով անդրադառնում է տարածաշրջանային իրադարձություններին, հատկապես Լեռնային Ղարաբաղին և հայ-թուրքական հարաբերություններին: 1986 թ. ավարտելով Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտը, աշխատել է հայկական պետական հեռուստատեսության առաջին ալիքում՝ որպես ինժեներ: Մեկ տարվա ընթացքում դարձել է ֆիլմի ռեժիսորի օգնական, ռեժիսոր, օպերատոր, հաղորդավար: Այնուհետև աշխատել է որպես հետաքննող լրագրող, ռեժիսոր և օպերատոր: Հայտնի լինելով Ղարաբաղի և Թուրքիայի վերաբերյալ իր հաղորդումներով, Գրիգորյանը Հայաստանի առավել ճանաչված լրագրողներից մեկն է:

 Արթուր Գրիգորյան

tv1news@yahoo.com

Արտակ Ալեքսանյանը երիտասարդ մեկնաբան է արտաքին խնդիրների իմացությամբ: Հաճախ թոք շոուներ է վարում տարբեր քաղաքական և սոցիալական խնդիրների վերաբերյալ և մեկնաբանություններ է կատարում Հ1-ի “Հայլուր” ծրագրի համար:

 Արտակ Ալեքսանյան

Հայկարամ Նահապետյանը փորձառու լրագող է և "Հայլուր" - ում է 2003 թ.: Բացի տարածաշրջանային խնդիրներից, Հայաստան-Թուրքիա, ԱՄՆ-Հայաստան հարաբերություններից, Ղարաբաղի պրոբլեմին անդրադառնալուց, նա հոդվածներ է հրապարակում գիտական ամսագրերում, պարբերականներում և ինտերնետ կայքերում, այդ թվում նաև Ակոսում:

 Հայկարամ Նահապետյան

Հ1 հանրային հեռուստաընկերություն
26, Գնորգ Հովսեփյան
375047, Երևան, Հայաստան

Հեռ. +374 10 552751, 551953; (կենտրոնական բաժին) 650015

www.armtv.com
Էլեկտրոնային փոստ: support@armtv.com; hailur@armtv.com

**Շանթ հեռուստաընկերություն**

Հիմնադրվել է Գյումրիում 1994 թ.: Հայաստանում առավել շատ դիտվող հեռուստաալիքներից է: Ունի զվարճալի հաղորդումների հզոր համախումբ՝ Հայ սուպերսթար, Ժողովրդական երգիչ, Թաքնված տաղանդ, ինչպես նաև հայկական մի քանի հեռուստասերիալներ: Շանթի լրատվական բաժինը նույնպես բավականին բարձր վարկանիշ ունի, չնայած համեմատաբար սահմանափակ միջոցներին մարտահրավեր նետելով շատ ավելի մեծ հեռուստաընկերություններին:

Արբանյակային հեռարձակում ունի ողջ աշխարհում:

Հիմնական լրատվական հաղորդումը "Հորիզոնն է", որին հետևում է "Հեռանկար" ծրագիրը՝ վերլուծական ծրագիր, որի հաղորդավար Նվեր Մնացականյանը հյուրընկալում է հայտնի մարդկանց՝ քննարկելու օրվա գլխավոր նորությունը:


Նվեր Մնացականյան

Շանթի մեկ այլ հայտնի մեկնաբանը Արտյոմ Երկանյանն է
1980-ական թվականների վերջին և 90-ական թվականների սկզբին ռուսական գրականություն է ուսումնասիրել Բրյուսովի անվան պետական լեզվաբանական ինստիտուտում: Ավարտելուց հետո աշխատել է մի շարք ռուսալեզու պարբերականներում: 1998-1999 թթ. եղել է ռուսական ORT-ի արտահաստիքային թղթակից Հայաստանում: 2000-2003 թթ. աշխատել է Հայաստանի ազգային հեռուստատեսության ռուսական բաժնում: 2003 թ. դարձել է Շանթի լրատվական ծառայության խմբագիր: 2002 թ. նաև աշխատում է ռուսական Կոմերսանտ թերթի Հայաստանի թղթակից:
Շանթում Հայաստանի արտաքին քաղաքականության վերաբերյալ վերլուծություններ կատարելուց բացի (հատկապես Ադրբեջանի և Թուրքիայի մասով), Երկանյանը վավերագրական ֆիլմեր է նկարել հայ-թուրքական հարաբերությունների առնչությամբ: (Ֆիլմեր է պատրաստել Կարսի, Թուրքիայի վրա հարձակվելու Ստալինի պլանի և Թուրքիայի ներողության արշավի մասին):


Արտյոմ Երկանյան

Կապ:

Հեռ. +374 10 568769
Էլեկտրոնային փոստ: yerkanyan@rambler.ru

Հասցե, Կիևյան 16, 10-րդ հարկ
Հեռ: +374 10 277668
www.shanttv.com
Էլեկտրոնային փոստ: info@shanttv.am

### Երկիր Մեդիա

Երկիր Մեդիա հեռուստաընկերության հովանավորն է ՀՅԴ-ը: Հիմնադրվելով 2003 թ, այն եթեր է հեռարձակել 2004 թ. մայիսից՝ ծածկելով Երևանը և շրջակա շրջանները, (լսարանը մինչև երկու միլիոն մարդ). 2010 թ. մայիսի 28-ից հեռարձակվում է Hotbird արբանյակով:
Երկիր մեդիա
Հայաստան, 0025, Երևան, Չարենցի փողոց 94
Հեռախոս. +374 10 576512
http://www.yerkirmedia.am/

Գեղամ Մանուկյան
"Երկիր Մեդիա"-ի քաղաքական և վերլուծական հաղորդումների տնօրենն է: 1990 թ.-ից ՀՅԴ անդամ է և նրա Կենտրոնական կոմիտեի անդամ: 1997-2004 թթ. եղել է Դաշնակցության գերագույն մարմնի անդամ, որը կուսակցության ղեկավար մարմինն է: Ծնվել է 1970 թ. Արմավիրում: Սովորել է թուրքական բանասիրություն ԵՊՀ-ում 1987-1993 թթ., որից հետո աշխատել է Երկիր պարբերականում: ՀՅԴ արգելումից հետո, որը մեղադրվեց ուժով իշխանությունը զավթելու փորձի մեջ, Գեղամը ձերբակալվեց և բանտում մնաց 1995-ից մինչև 1997 թ.[10]: Ազատվելուց հետո ակտիվորեն ներգրավվել է կուսակցական և լրագրողական գործունեության մեջ, եղել է ՀՅԴ Գերագույն մարմնի անդամ 1997-2004 թթ., և Երկրի խմբագիր 2002-2004 թթ.: 2004 թ. միացել է Երկիր Մեդիային՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ:

[10] Թեև ՀՅԴ անդամների մեծ մասը դուրս եկան բանտից 1997-1998 թթ., սակայն նրանց մի մասը դեռևս բանտում է:

Գեղամը վարում է «Եռման կետ» հաղորդաշարը, որը հեռարձակվում է ամեն ուրբաթ: Հաճախ հրավիրում է վերլուծաբանների, քաղաքական գործիչների, լրագրողների և գիտնականների՝ քննարկելու համար հայ-թուրքական հարաբերությունները: Նրա հաղորդումներին մասնակցել են մի խումբ թուրք լրագրողներ և հայ-թուրքական լրագրողական տարբեր ծրագրերի մասնակիցներ:

Էլեկտրոնային փոստ: news@yerkirmedia.am or gegham@yerkirmedia.am

Բջջային +374 91 40 98 46

**Արմենիա TV**

Հիմնադրվել է 1999 թ., ունի մեծ լսարան և արբանյակային հեռարձակում (Hotbird և Eutelsat) Եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում, Ռուսաստանում, Միջին Արևելքում և Ասիայում: 2001 թ. միլիարդատեր Ջերար Գաֆեսճյանը դարձավ Արմենիայի բաժնետեր Գաֆեսճյան ընտանեկան հիմնադրամի միջոցով: Ալիքը դարձավ ամենամեծ մասնավոր հեռուստաընկերությունը Հայաստանում: Պատրաստում է հաղորդումներ սեփական ստուդիաներում (10 ստուդիա 42.400 քառակուսի ֆուտ տարածքով, և ժամանակակից տեխնոլոգիաներով), օգտագործում է իր սեփական տեխնիկական և կազմակերպչական միջոցները: Տասնյակ հաղորդումներ, շոուներ և լրատվական թողարկումներ են հեռարձակվում ամեն օր: Համագործակցում է Warner Bros-ի և Universal Pictures-ի հետ:

Հեռուստաընկերության զվարճանքի բաժինը շատ ավելի ազդեցիկ է, քան քաղաքական վերլուծությունների հատվածը: Սեփականատեր է նաև երկու այլ հեռուստաալիքների՝ TV5 և Արմնյուզ/Euronews.

Գևորգ Ալթունյանը, ով վարում է վերլուծական «Տեսանկյուն» հաղորդումը, TV5-ի հայտնի մեկնաբան է: Վերջին տարիներին վարել է վերլուծական ծրագրեր, լրատվական հաղորդումներ, շոուներ: Մասնագիտությամբ պատմաբան լինելով՝ լրագրողական ասպարեզում է 1990-ական թթ. կեսերից: Արմենիայի հիմնական մասնագետն է միջազգային հարցերի, այդ թվում հայ-թուրքական հարաբերությունների գծով:



Գնորդ Ալթունյան

Կապ:

Armenia TV

Եղվարդի խճուղի 1, Երևան 0054, Հայաստանի Հանրապետություն

Հեռ: +374 10 366925

Ֆաքս: +374 10 366852

Էլեկտրոնային փոստ: info@armeniatv.am

www.armeniatv.am

Գնորգ Ալթունյանի կոնտակտները:

TV 5, Եղվարդի խճուղի, Երևան, Հայաստան, Հեռ. (374 10) 36 69 45 (աշխատանք)

Էլեկտրոնային փոստ: express@armeniatv.am

**Կենտրոն**

Հիմնադրվել է 2002 թ.: Սեփականատերն է Հայաստանի ամենահարուստ օլիգարխներից մեկը՝ Գագիկ Ծառուկյանը, ով պատգամավոր է և կոալիցիայի անդամ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ: Ծառուկյանը նաև Հայաստանի օլիմպիական կոմիտեի նախագահն է:

Կենտրոնը հեռարձակվում է Երևանում և հարակից շրջաններում՝ հասնելով շուրջ երկու միլիոն մարդու: Առավել հայտնի հաղորդումն է “Ուրվագիծը”, որը վարում է Պետրոս Ղազարյանը: Նրան հետևում են շուրջ 30.000 - 50.000 մարդ, և այն ամենաշատ դիտվող հաղորդումն է Հայաստանում: Ղազարյանը հյուրընկալում է ամենատարբեր տիպի անձնավորությունների, այդ թվում ընդդիմության ներկայացուցիչների: Ղազարյանը հարցազրույցներ է անցկացրել Թուրքիայի ժողովրդավարական կուսակցության առաջնորդ Ջեմ Թոքերի, Եվրոպական կայունության նախաձեռնության ավագ վերլուծաբան Նիգար Գյոկսելի և Եվրոպական կայունության նախաձեռնության նախկին վերլուծաբան Տիգրան Մկրտչյանի հետ:


Պետրոս Ղազարյան

Պետրոս Ղազարյանը Ուրվագիծ հաղորդման հեղինակն ու վարողն է 2003 թ. սկսած: Ավարտել է ԵՊՀ թուրքագիտության բաժինը, աշխատել է «Հայկական Ժամանակ» պարբերականում, Առավոտ օրաթերթում և Իրավունք պարբերականում: 2003 թ. ստացել է Երևանի մամուլի ակումբի տարեկան մրցանակը հեռուստատեսությունում կարծիքների բազմազանություն ապահովելու համար: Աջակցում է հայ-թուրքական հարաբերությունների նորմալացմանը, մասնակցել է մեծ թվով հայ-թուրքական ծրագրերի և լրագրողական հանդիպումների:

Կենտրոն TV
0036 Երևան, Ալիխանյան եղբայրների փողոց, շենք 2
Հեռ: +374 10 391039, +374 10 393232, +374 10 349053, +374 10 396464
Ֆաքս: +374 10 349968
“Ուրվագիծ” էլեկտրոնային փոստ: urvagic@rambler.ru

### Քաղաքական գործիչներ: Հաստատություններ և մարդիկ

### Արտաքին Գործերի Նախարարություն

**Էդվարդ Նալբանդյան**



Էդվարդ Նալբանդյանը Հայաստանի արտգործնախարարն է 2008 թ. ապրիլից: Ավարտել է հեղինակավոր Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը, քաղաքական գիտությունների թեկնածուի կոչում է ստացել ԽՍՀՄ Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում: Նալբանդյանը ԽՍՀՄ արտգործնախարարությունում սկսել է աշխատել 1970 ական թվականների վերջից՝ գործուղվելով Եգիպտոս և Լիբանան: Հայաստանի անկախությունից հետո հրավիրվել է աշխատելու Հայաստանի ԱԳՆ-ում: Եղել է Հայաստանի դեսպանը Եգիպտոսում, Մարոկկոյում և Օմանում (նստավայրը Կահիրե) 1994-1998 թթ.: 1999-2008 եղել է դեսպան Ֆրանսիայում: Նրա միջազգային պարգևների թվում են ԽՍՀՄ Ժողովուրդների բարեկամության պարգևը (1982), Ֆրանսիայի Հանրապետության պատվի լեգեոնի շքանշանը (2001), և Վատիկանի Սուրբ Գրիգորի մեծ խաչի դեկորացիան (2003):

2008 թ. սեպտեմբերին Նալբանդյանն ու նրա թուրք գործընկերը բանակցությունների շարք սկսեցին, որոնք ավարտվեցին երկու արձանագրությունների տեսքով: Դրանք ստորագրվեցին 2009 թ. հոկտեմբերի 10-ին:

ԱԳՆ կայք
http://www.armeniaforeignministry.com/
ԱԳՆ, Կառավարական շենք #2,
Հանրապետության հրապարակ, Երևան 0010,
Հայաստանի Հանրապետություն,
Հեռ: +374 10 544041,
Ֆաքս: +374 10 543925,
Էլեկտրոնային փոստ: info@ArmeniaForeignMinistry.com

**Արման Կիրակոսյան**

Զբաղեցնում է փոխարտգործնախարարի պաշտոնը: Ղեկավարել է թուրք դիվանագետների հետ գաղտնի բանակցությունները, որոնք ճանապարհ հարթեցին ֆուտբոլային դիվանագիտության համար:

(2008 թ. սեպտեմբերի 6-ից հետո բանակցություններն ընթանում էին երկու երկրների արտգործնախարարների միջև):



Կիրակոսյանը ծնվել է 1956 թ., հայտնի գիտնական և դիվանագետ Ջոն Կիրակոսյանի որդին է, ով Խորհրդային Հայաստանի արտգործնախարարն էր 1975-1985 թթ: Կրթությամբ պատմաբան է: Հրապարակել է բազմաթիվ հոդվածներ և մենագրություններ 19-րդ դարի վերջի 20-րդ դարի սկզբի հայոց պատմության վերաբերյալ, մասնավորպես հայկական կոտորածների և Հայոց ցեղասպանության մասին բրիտանական և ամերիկյան աղբյուրներում առկա տվյալների մասին:

1991 թ. սեպտեմբերին, Հայաստանի անկախությունից անմիջապես հետո, հրավիրվել է ԱԳՆ՝ զբաղեցնելով առաջին փոխարտգործնախարարի պաշտոնը: 1992 թ. հոկտեմբերից մինչև 1993 թ. մարտ աշխատել է որպես արտգործնախարարի պաշտոնակատար: Այնուհետև եղել է դեսպան Հունաստանում և ԱՄՆ-ում: 2005 թ. զբաղեցնում է առաջին փոխարտգործնախարարի պաշտոնը:

Էլեկտրոնային փոստ: A.Kirakossian@mfa.am,
Հեռ: +374 10 544041 (ներքին 309)

**Արսեն Ավագյան**



ԱԳՆ Թուրքիայի բաժնի վարիչն է: Հայաստանում Թուրքիայի գծով առաջատար մասնագետ է: Նախարարությունում է 1994 թ., եղել է Հայաստանի ներկայացուցիչը Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության Ստամբուլի քարտուղարությունում 2001-2005 թթ.: Միաժամանակ դասավանդում է ԵՊՀ-ում: Հրատարակել է հինգ մենագրություն և ավելի քան 30 հոդված Հայաստանի, Թուրքիայի և Ռուսաստանի վերաբերյալ:
Էլեկտրոնային փոստ: A.Avagyan@mfa.am
Հեռ: +374 10 544041 ներքին. 261

**Տիգրան Մկրտչյան**



Նախարարության մամուլի և տեղեկատվության վարչության պետի պաշտոնակատարն է, միաժամանակ նախարարի խորհրդականը: Նախկինում եղել է Եվրոպական կայունության նախաձեռնության վերլուծաբան (2007-2010), Հայկական միջազգային քաղաքական հետազոտությունների խմբի գործադիր տնօրեն (2006-2008), որտեղ աշխատել է հայ-թուրքական հարաբերությունների ուղղությամբ՝ մի քանի գիտական և լրագրողական հոդվածներ հրապարակելով Հայաստանում և արտերկրում: Ստացել է միջազգային հարաբերությունների մագիստրոսի աստիճան Քեմբրիջի համալսարանից (Chevening հետազոտող), Անտիկ աշխարհի պատմության մագիստրոսի և պատմության բակալավրի աստիճան ԵՊՀ-ից: Քեմբրիջի մագիստրոսական թեզը նվիրված է եղել ՆԱՏՕ-ին և Հարավային Կովկասին: 2006 թ. եղել է John Smith Fellow Հայաստանից և World Vision-ի պատանի դեսպան Հայաստանից 1998 թ.:

Էլեկտրոնային փոստ: T.Mkrtchyan@mfa.am
Հեռ: +374 10 544041 ներքին. 356

**Տիգրան Բալայան**



Տիգրան Բալայանը ԱԳՆ մամուլի քարտուղարն է: Նախարարությունում աշխատում է 2002 թ.: Ավարտել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որտեղ էլ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման և Լեռնային Ղարաբաղի խնդրի վերաբերյալ մի շարք հոդվածների հեղինակ է: Աշխատել է Ռուսաստանում և Բելգիայում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում: Միջազգային հարաբերություններ է դասավանդում ԵՊՀ-ում:

Էլեկտրոնային փոստ: T.Balayan@mfa.am
Հեռ: +374 10 544041 ներքին. 214

### Նախագահի աշխատակազմ

**Վիգեն Սարգսյան**



Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալն է: Նախագահի հիմնական խորհրդականն է արտաքին հարաբերությունների հարցերով՝ ուղեկցելով նրան օտարերկրյա այցելությունների մեծ մասի ընթացքում:

Սովորել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, Սանկտ Պետերբուրգի Քաղաքացիական ծառայության Հյուսիս-արևմտյան ակադեմիայում և Իրավունքի ու դիվանագիտության Ֆլեթչերի դպրոցում: Նախքան ներկայիս պաշտոնը եղել է Ազգային ժողովի նախագահի խորհրդական, պաշտպանության նախարարի օգնական: Ֆլեթչերի թեզի վերնագիրն էր "Լեռնային Ղարաբաղը երեկ, այսօր, վաղը. Իրավական շրջանակ": Դասավանդում է Հայաստանի ամերիկյան համալսարանում և հաճախ մասնակցում է տարբեր միջազգային ֆորումների:

Էլեկտրոնային փոստ: vsargsyan@president.am

Հեռախոս: +374 10 588712

### Խորհրդարան. քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ

**Էդվարդ Շարմազանով**



Պատգամավոր է, կառավարող հանրապետական կուսակցության խոսնակը, ինչպես նաև Ազգային Ժողովում կուսակցության խմբակցության

քարտուղարը: Նաև կուսակցության հանրային պատասխանատուն է արտաքին հարաբերությունների հարցերով: Սովորել է Երևանի պետական մանկավարժական համալսարանի պատմության ֆակուլտետում և Քաղաքական հետազոտությունների Մոսկվայի դպրոցում: 2005-2007 թթ. վարչապետի օգնականն էր: 2007 թ. ընտրվել է պատգամավոր, սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ է:
Էլեկտրոնային փոստ: eduard.sharmazanov@parliament.am

**Արամ Սաֆարյան**



Երկրորդ խոշոր խորհրդարանական կուսակցության՝ Բարգավաճ Հայաստանի խմբակցության քարտուղարն է, որը Հանրապետականի և Օրինաց երկրի հետ միասին կոալիցիայի անդամ է: Հրապարակում է կուսակցության դիրքորոշումը արտաքին քաղաքականության վերաբերյալ: Ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը և բանասիրական գիտությունների թեկնածու է (ժուռնալիստիկա): 1980-ական թվականների վերջին աշխատել է Ակադեմիայում և 1990-ական թվականների սկզբին զբաղվել է ակտիվ լրագրողական գործունեությամբ: 1993-1998 թթ. աշխատել է արտաքին գործերի նախարարությունում, սկզբում որպես մամուլի քարտուղար, հետո Իրանի դեսպանատանը: 1998 թ. վերադարձել է լրագրողական դաշտ և աշխատանքի անցել համալսարանում: 2001-2006 թթ. եղել է Պրոմեթևս ալիքի (Հ2) լրատվական և հասարակական-քաղաքական հաղորդումների փոխտնօրեն: Բարգավաճ Հայաստան կուսակցության համամասնական ցուցակով ընտրվել է պատգամավոր 2007 թ.: Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահն է:
Էլեկտրոնային փոստ: aram.safaryan@parliament.am

Արտաքին հարաբերությունների հանձնաժողով

**Արմեն Ռուստամյան**

Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահն է, ՀՅԴ ներկայացուցիչ, որը ՀՀԿ-ի և ԲՀԿ-ի հետ կազմեց կոալիցիա 2007 թ: 2008 թ. նախագահական ընտրություններից հետո կոալիցիային միացավ ՕԵԿ-ը: ՀՅԴ-ն իր մտահոգություններն արտահայտեց ֆուտբոլային դիվանագիտության մեկնարկի կապակցությամբ և դուրս եկավ կոալիցիայից 2009 թ. ապրիլի 22-ին Ճանապարհային քարտեզի ստորագրումից հետո: ՀՅԴ-

ը հրաժարվեց կոալիցիոն բոլոր պաշտոններից, բացառությամբ Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի (ղեկավարում է Արմեն Ռուստամյանը) և Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի հանձնաժողովի (ղեկավարում է Հրայր Կարապետյանը) նախագահների պաշտոններից:




Ռուստամյանը մասնագիտությամբ ֆիզիկոս է, ավարտել է Ժողովուրդների բարեկամության Պ. Լումումբայի անվան Մոսկվայի ինստիտուտը: Աշխատել է որպես գիտնական մինչև 1990-ական թվականների առաջին կեսը, երբ միացել է ՀՅԴ-ին: Ձերբակալվել է 1995 թ. և բանտում մնացել մինչև 1998 թ.: Ազատ արձակվելուց հետո 1999 թ. ընտրվել է խորհրդարանի պատգամավոր, դարձել արտաքին հարաբերությունների հանձնաժողովի փոխնախագահ: 2003 թ. (նաև 2007 թ. ընտրություններից հետո) զբաղեցրել է այդ հանձնաժողովի նախագահի պաշտոնը: Նրա նախագահության օրոք կազմակերպվել են խորհրդարանական լսումներ հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ 2007 թ. դեկտեմբերին և 2009 թ. հոկտեմբերին: Երկու դեպքում էլ հիմնականում արտահայտվել են կոշտ մոտեցումներ:.
Էլեկտրոնային փոստ: artakin@parliament.am

**Կիրո Մանոյան**



Գիրո (կամ Կիրո) Մանոյանը ծնվել է Լիբանանում: Մայրական կողմից նրա տատիկն ու պապիկը եղել են հարավարևելյան Անատոլիայի Խարբերդ քաղաքից: 1915 թ. ցեղասպանության ընթացքում փրկվել են թուրք ընկերների կողմից: Մանոյանը 1976 թ. տեղափոխվել է Կանադա և քաղաքագիտություն սովորել Մոնրեալի Կոնկորդիա համալսարանում: 1982-1989 եղել է Կանադայի հայ ազգային կոմիտեի գործադիր տնօրենը: 1989–1991 աշխատել է

կանադահայ «Հորիզոն» շաբաթաթերթի խմբագրի օգնական, իսկ 1991–1999 թթ.՝ խմբագիր:

Այժմ բնակվում է Երևանում և չնայած խորհրդարանի անդամ չէ, ՀՅԴ հիմնական խոսափողն է արտաքին հարաբերությունների և «Հայկական հարցի» առնչությամբ: Հաճախ է հանդես գալիս ԶԼՄ-ներով՝ մեկնաբանելով հայ-թուրքական հարաբերությունները:
Էլեկտրոնային փոստ: intsec@arf.am

**Ստյոպա Սաֆարյան**

«Ժառանգություն» կուսակցության հիմնադիր անդամ է: Ժառանգությունը խորհրդարանում առկա երկու ընդդիմադիր կուսակցություններից մեկն է: ԵՊՀ-ում ստացել է երկրաբանական կրթություն, միաժամանակ քաղաքականություն և տեղական ինքնակառավարում սովորելով կառավարման դպրոցում: 1990-ական թվականների երկրորդ կեսին աշխատել է Սեյամիկ պաշտպանության ազգային ծառայությունում: 1998 թ. աշխատում է Կառավարման ակադեմիայում:



2002 թ. միացել է Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնին (հիմնադրվել է նախկին արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանի կողմից), որտեղ հակամարտությունների վերաբերյալ մի քանի տասնյակ հոդվածներ է հրապարակել:
Պատգամավոր է ընտրվել 2007 թ. որպես <<Ժառանգության>> հիմնադիր անդամ, շուտով դարձել է խմբակցության քարտուղար և 2009 թ. սեպտեմբերի դրությամբ՝ խմբակցության ղեկավար: Նաև արտաքին հարաբերությունների և եվրաինտեգրացիայի հարցերով հանձնաժողովների անդամ է: Սաֆարյանի կուսակցությունը հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման գործընթացի և արձանագրությունների ամենախիստ քննադատողներից էր:
Էլեկտրոնային փոստ: ssafaryan@parliament.am

**Արտախորհրդարանական ընդդիմություն: Հայ Ազգային Կոնգրես-ՀԱԿ**

ՀԱԿ-ը քաղաքական շարժում է, որի ղեկավարն է նախկին նախագահ (1991-1998) Լևոն Տեր-Պետրոսյանը: ՀԱԿ-ը հիմնվել է 2008 թ. մայիսին, 2008 թ. փետրվարի նախագահական ընտրություններից (որտեղ Տեր-Պետրոսյանը երկրորդն էր ձայների 21% տոկոսով) և հետագա բռնություններից հետո (10

զոհ և ընդդիմության հարյուրավոր անդամների ձերբակալություններ): ՀԱԿ-ը բաղկացած է շուրջ 20 քաղաքական կուսակցություններից և շարժումներից: Հիմնական նպատակն է երկրում արտահերթ ընտրությունների անցկացումը: Առավել հզոր ընդդիմադիր ուժն է խորհրդարանի պատերից դուրս:

**Լևոն Զուրաբյան**



Տեր-Պետրոսյանի նախկին մամուլի քարտուղարն է, ՀԱԿ-ի համակարգողը: Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո, Muskie կրթաթոշակով մագիստրոսական կրթություն է ստացել Կոլումբիայի համալսարանում: Հայաստան վերադարձից հետո աշխատել է Միջազգային ճգնաժամային խմբում որպես վերլուծաբան, այլ հարցերի հետ միասին հետազոտություններ է իրականացրել Ղարաբաղի խնդրում: 2007 թ. սեպտեմբերին Տեր Պետրոսյանի քաղաքականություն վերադարձից հետո, Զուրաբյանը դուրս է եկել Միջազգային ճգնաժամային խմբից և միացել է ՀԱԿ-ին: Հաճախ ներկայացնում է Կոնգրեսի տեսակետը հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ:
Էլեկտրոնային փոստ: levonar@gmail.com

## ՀԿ-ներ

**Եվրասիա համագործակցության հիմնադրամ**

EURASIA PARTNERSHIP FOUNDATION

Հիմնադրվել է Վաշինգտոնում 1992 թ. որպես շահույթ չհետապնդող կազմակերպություն (հովանավորվում է ԱՄՆ պետդեպարտամենտի կողմից): Հայաստանի գրասենյակը բացվել է 1995 թ.:
2006 թ. գործարկել է Հայաստան-Թուրքիա միջսահմանային երկխոսության և համագործակցության ծրագիրը: Ծրագրի նպատակն էր աջակցել հայ-թուրքական հարաբերությունների նորմալացմանը՝ ՀԿ-ների, ՁԼՄ-ների և բիզնես ոլորտի կարողությունները ուժեղացնելով և միջսահմանային համագործակցությունը զարգացնելու և պահպանելու միջոցով: (Եվրասիան

սկզբում հանդես էր գալիս որպես դոնոր, հետագայում ընդգրկվեց նաև ծրագրերի իրականացման գործընթացում):

Հայ-թուրքական ծրագրեր իրականացնելու համար ֆինանսավորել է այնպիսի կազմակերպությունների, ինչպիսիք են Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը, Հայկական միջազգային քաղաքական հետազոտությունների խումբը, Երևանի մամուլի ակումբը, Patker Photo ՍՊԸ-ն, Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնը, Քաղաքների կայուն զարգացման հիմնադրամը և Երիտասարդական ակադեմիան: Եվրասիա համագործակցության հիմնադրամը կենտրոնացել է երեք ոլորտներում.
(ա) աջակցություն մշակութային ծրագրերին
(բ) հետազոտություններ
(գ) հայտնի լրագրողների և կարծիքներ ձևավորողների փոխայցելություններ (պաշտոնաթող պաշտոնյաներ, գիտնականներ, և այլն) Հայաստան և Թուրքիա:

**Մշակութային ծրագրեր**
2007 և 2008 թթ., որպես <<Հայաստան-Թուրքիա սահմանին անցկացված երաժշտական կամուրջ>> ծրագրի մաս կազմակերպությունն աջակցեց Կոմիտասի անվան պետական քառյակի այցելությանը և համերգի կայացմանը Թուրքիայում, և Բոսֆորի քառյակի փոխադարձ այցելությունը Հայաստան: 2008 թ. այն աջակցեց Կոմիտասի պետական քառյակի անդամ Էդվարդ Թադևոսյանի և հայտնի թուրք ջութակահար Չիհատ Ասկինի համերգին (և դասախոսությանը) Ստամբուլում: 2008 թ. հուլիսին և դեկտեմբերին Եվրասիա համագործակցության հիմնադրամը և թուրքական Անադոլու Կուլտուր կազմակերպությունը թուրք և հայ ռեժիսորների համար սեմինարներ կազմակերպեցին: Սեմինարը ներառում էր թուրք ռեժիսորների և լրագրողների այցելություն Երևան:

Առաջին այցելուների թվում էին Ազիզե Թանը՝ Ստամբուլի միջազգային կինոփառատոնի տնօրենը, Չիգդեմ Մաթերը՝ Անադոլու Կուլտուր մշակութային կենտրոնի համակարգողը, Ալին Թաշչյանը՝ կինոքննադատ և FIPRESCI ժյուրիի անդամ, Ժանետ Բարիսը՝ կինոլրագրող, Էվրիմ Կայան՝ կինոլրագրող, ռեժիսորներ Մեհմետ Բինայը, Արին Ինան Արսլանը, Սեյֆեթին Թոքմակը և Մելեք Ուլագահ Թայլանը:

Երկրորդ այցելության մասնակիցներն էին (դեկտեմբերին) Չիգդեմ Մաթերը, լրագրող Սին Դինքը, կինոլրագրող Ալին Թաշչյանը, ռեժիսորներ Էզել Աքայը, Մուջդե Արսլանը, Ինան Արսլանը, Սենեմ Թուզենը, Զեյնեփ Գյուզելը, Էկլեմ Քաֆթանը, Ֆիրաթ Մանչուհանսը, Սիբիլ Չեկմենը և Ջեմ Ոզթուֆեկչին:

2008 թ. դեկտեմբերին Եվրասիան, Հայաստանի ամերիկյան համալսարանը և Անադոլու Կուլտուրը աջակցեցին Օսման Քոքերի “Հայերը Թուրքիայում 100 տարի առաջ” ցուցահանդեսին:

**Հետազոտություններ**

*Միգրացիայի ուսումնասիրում*

2009 թ. Եվրասիան Ալին Օզինօղլուին (Օզինյան) հանձնարարեց հետազոտել Թուրքիայում աշխատող հայ միգրանտների վիճակը: “Պարզաբանում Թուրքիայի հայ միգրանտների վիճակի վերաբերյալ” վերնագրով հետազոտությունն իրականացվել է 2009 թ. ապրիլ-օգոստոս ամիսներին Նորվեգիայի կառավարության աջակցությամբ: Զեկույցը կարելի է ներբեռնել այս կայքում: http://epfound.am/files/epf_migration_report_feb_2010_final_march_5_1.pdf

*Մեդիայի ուսումնասիրություն*

ԱՄՆ ՄԶԳ և Նորվեգիայի կառավարության աջակցությամբ Ստամբուլում գործող Գլոբալ քաղաքական ուղենիշերի կենտրոնի հետ համագործակցությամբ իրականացված “Նվազեցնել ԶԼՄ-ների աչառու վերաբերմունքը Հայաստանում և Թուրքիայում” ծրագիրը իրենից ներկայացնում է հետազոտությունների զույգ, որոնք վերաբերում են Թուրքիայում և Հայաստանում հայ-թուրքական հարաբերությունների ներկայացմանը ԶԼՄ-ներում: Երկու զեկույցներն էլ հրապարակվել են ինտերնետում 2009 թ. հոկտեմբերին: Հայաստանի ԶԼՄ-ներին առնչվող զեկույցը, որը վերնագրված է “հայ-թուրքական հարաբերություններին և Թուրքիային առնչվող հրապարակումները հայկական ԶԼՄ-ներում 2006-2009 թթ”, կարելի է ներբեռնել այս կայքից՝
http://epfound.am/files/cjteam_research_report_final_english.pdf

Թուրքական ԶԼՄ-ների հրապարակումներին առնչվող զեկույցը կարելի է ներբեռնել այս կայքից՝
http://epfound.am/files/gpot_analysis.pdf

**Այցելություններ**

2009 թ. հոկտեմբերին Եվրասիան և Հրանտ Դինքի հիմնադրամը կազմակերպեցին հայ լրագրողների այցելություն Բուրսա՝ Հայաստանի և Թուրքիայի ֆուտբոլի հավաքականների խաղի կապակցությամբ (հոկտեմբերի 14-ին): Հայ լրագրողների թվում էին Բորիս Նավասարդյանը (Երևանի մամուլի ակումբ), Պետրոս Ղազարյանը, (Կենտրոն), Յուրի Մանվելյանը (tert.am-ի խմբագիր), Ռուբեն Մարգարյանը (Երկիր շաբաթաթերթի խմբագիր), Հակոբ Չաքրյանը (Ազգ), Աննա Իսրայելյանը (Առավոտ), Թաթուլ Հակոբյանը (*Armenian Reporter*), Լևոն Բարսեղյանը (Ասպարեզ լրագրողների ակումբ, Գյումրի):

Երկու ամիս անց, 2009 թ. դեկտեմբերի 17-20-ը, Եվրասիան կազմակերպեց թուրք լրագրողների այցելություն Հայաստան: Խումբը հանդիպեց Թուրքիա այցելած հայ լրագրողներին, հայ պաշտոնյաների (այդ թվում ԱԳՆ-ից), մամուլի ասուլիսներ և հարցազրույցներ տվեց: Թուրք մասնակիցներն էին Ֆերիաթ Բորատովը (CNN Turk), Քադրի Գուրսելը (*Milliyet*), Իզգուր Ոււլուսոյը

(*Cumhuriyet*), Սենայ Յլդըզը (*Aksam*), Իփեք Եզդանին (*Milliyet*), Դեյվիդ Ջադսոնը (*Hurriyet Daily News*), Բիլգե Էսերը (*Sabah*), Իրեմ Քոքերը (*Hurriyet*), Գոկչե Այթուլուն (*Referans*) և Մարգար Եսայանը (*Taraf*), ինչպես նաև Մեննուր Ակգյունը, Սիլվիա Թիրաքին և Չան Յըրըկը (Գլոբալ քաղաքական ուղենիշերի կենտրոնից):

2010 թ. մարտի 25-27-ը Եվրասիան և Գլոբալ քաղաքական ուղենիշերի կենտրոնը կազմակերպեցին թուրք պաշտոնաթող պաշտոնյաների և հայտնի լրագրողների բարձր մակարդակի այցելություն Հայաստան: Խմբի կազմում էին Յալմ Երալփը (Թուրքիայի ԱԳՆ նախկին խոսնակը և վարչապետներ Մեսութ Յլմազի և Թանսու Չիլերի նախկին խորհրդականը), Սադի Էրգուվենչը (թուրքական օդուժի պաշտոնաթող գեներալ-լեյտենանտ, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարության հետախուզության վարչության նախկին պետ և Գլխավոր շտաբի ռազմավարության և պլանավորման բաժնի պետ), Մեհմեդ Ալի Բիրանդը, (CNN Turk-ի գործադիր խմբագիր և Kanal D-ի առանցքային աշխատակից), Էրդել Գյուվենը (*Radikal-ի թղթակից*), Սամի Կոհենը (*Milliyet-ի թղթակից*), Աննա Թուրայը (Group 7-ի հարանյին կապեր) և Դիլհան Դենիզ Քիլիսլիօղլուն (CNN Turk-ի լրագրող):

Եվրասիա համագործակցության հիմնադրամի աշխատակազմը
**Գևորգ Տեր Գաբրիելյան, տնօրեն**



Գևորգ Տեր-Գաբրիելյանն ունի ավելի քան տասնութ տարվա աշխատանքային փորձ մասնավոր, պետական և հասարակական սեկտորներում: Նախկինում Գևորգն աշխատել է որպես ավագ խորհրդատու և Եվրասիա ծրագրի ղեկավար Լոնդոնի International Alert կազմակերպությունում, ինչպես նաև Տարածքային հետազոտական կենտրոնի փոխտնօրեն Երևանում: Երևանի պետական համալսարանում և ԱՄՆ-ի Բոուլինգ Գրինի համալսարանում նա դասավանդել է քաղաքագիտական մի շարք առարկաներ Կովկասյան տարածաշրջանի և Միացյալ Նահանգների վերաբերյալ: Նա նաև աշխատել է որպես խորհրդատու Մոսկվայի մի քանի ձեռնարկություններում: Գևորգն ունի գիտությունների թեկնածուի կոչում՝ թյուրքական լեզվաբանությունից՝ Մոսկվայի պետական համալսարանից և Ռուսաստանի գիտությունների ակադեմիայից, մագիստրոսի կոչում՝ հասարակական և քաղաքական գիտությունների գծով՝ Լանքաստերի համալսարանից և հանրային կառավարման գծով՝ Բոուլինգ Գրինի համալսարանից:

Էլեկտրոնային փոստ: gtergabrielyan@epfound.am

**Vazgen Karapetyan**

Փոխտնօրեն



Վազգեն Կարապետյանն անդամակցել է հիմնադրամին 1998 թվից որպես ծրագրի համակարգող նոր հիմնադրված Հարավկովկասյան համագործակցության ծրագրի շրջանակներում: 2003-2004 թթ. նա սովորել է Հյուսիսային Կալիֆոռնիայի համալսարանի Հանրային կառավարում ֆակուլտետում՝ Հերբերթ Համփրի երիտասարդական ծրագրի շրջանակներում, Չեփլ Հիլում: Նախքան 2006 թվին Եվրասիա հիմնադրամին վերաանդամակցելը նա աշխատել է որպես ծրագրերի համակարգող Հայաստանի Կաթոլիկական օգնության կենտրոնում: Վազգենն ավարտել է Երևանի պետական բժշկական համալսարանը: Վազգենը նաև ստացել է մագիստրոսի կոչում՝ Քաղաքական գիտություններ և միջազգային հարաբերություններ մասնագիտությունից՝ Հայաստանի ամերիկյան համալսարանից: Վազգենը Թրանսփերենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի անդամ է (2006-ից Խորհրդի անդամ):

Էլեկտրոնային փոստ: vkarapetyan@epfound.am

**Արտակ Շաքարյան**

Հայ-թուրքական ծրագրի համակարգող



Արտակ Շաքարյանն անդամակցել է Հիմնադրամին 2009 թ. որպես Հայաստանի ու Թուրքիայի մամուլում կողմնակալության ու անաչառության և Թուրքիայում հայերի աշխատանքային միգրացիայի վերաբերյալ նախագծերի համակարգող: Նախքան ԵՀՀ-ին անդամակցելը, նա զբաղեցրել է առաջատար պաշտոններ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում, ՀՀ Սպորտի ու

երիտասարդության հարցերի նախարարությունում: Արտակը թուրքագիտության բակալավրի ու մագիստրոսի աստիճան է ստացել Երևանի պետական համալսարանից, իսկ թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում: Ազատ տիրապետում է թուրքերենին: Որպես թուրքագետ հաճախ է մասնակցում ակադեմիական կոնֆերանսների և մամուլի ասուլիսների՝ խոսելով հայ-թուրքական հարաբերություններում առկա զարգացումների մասին: Մեկնաբանություններ է հրապարակում իր բլոգում http://www.blog.co.uk/user/sugartak/(անգլերեն) և http://www.turkaget.wordpress.com/ (հայերեն և ռուսերեն).

ashakaryan@epfound.am

**Եվրասիա համագործակցության հիմնադրամ**
56 Զարոբյան փողոց, Երևան 0009, Հայաստան
Հեռ: +374 10 586095,
Ֆաքս: +374 10 586096
Էլեկտրոնային փոստ: info@epfound.am

**Երևանի մամուլի ակումբ**

Երևանի մամուլի ակումբը հիմնադրվել է 1995 թ., որպես հետկոմունիստական Հայաստանի լրագրողների առաջին պրոֆեսիոնալ միավորում (Հայաստանի լրագրողների մեծ մասը ակումբի անդամներ են): ԵՄԱ-ը Հայաստանում լրատվամիջոցների ազատության համար պայքարող առաջատար կազմակերպություններից մեկն է: Ներգրավվել է Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման ջանքերում 2000 -ականների սկզբից:

2001 և 2002-2003 թթ.. ԵՄԱ-ը Թուրք լրագրողների միության, Թուրքիայի ժողովրդական հիմնադրամի և դիվանագիտական թղթակիցների ասոցիացիայի հետ համատեղ իրականացրել է լրագրողների փոխանակման ծրագիր: Ծրագրի ընթացքում կազմակերպվել են այցելություններ Երևան, Անկարա, Ստեփանակերտ, (Լեռնային Ղարաբաղ) և Ստամբուլ, ինչպես նաև քննարկումներ և հրապարակումներ ԶԼՄ-ներում:

2007-2009 թթ. ԵՄԱ-ն իրականացրել է մեկ այլ ծրագիր "Հայ-թուրքական թիմային զեկուցում", որը բաղկացած է եղել ԶԼՄ դիտարկումներից, սեմինարներից, այցելություններից (Հայաստան և Թուրքիա) և հրատարակություններից: Ծրագրին աջակցել է Եվրասիա համագործակցության հիմնադրամը: Մասնակիցներն են եղել Ժաննա Անդրեասյանը (*168Ժամ*), Մարինա Անդրեասյանը (PanArmenian.net), Աշոտ Սողոմոնյանը (Առավոտ), Լևոն Բարսեղյանը (Շրջապատ), Վերջիհան Զիֆլիօղլուն (*Turkish Daily News*), Բերիվան Թափանը (*Cumhurriyet*), Նազեղան Ալչին (*Aksam*) և Մուստաֆա Աքյոլը (*Turkish Daily News* and *Star*).

Բորիս Նավասարդյան



ԵՄԱ-ի նախագահն է: Սովորել է Դոնի Ռոստովում (Ռուսաստան), աշխատել է մի շարք ռուսալեզու հայկական պարբերականներում (այդ թվում *Komsomolets*, *Respublika Armenii* և *Zerkalo*) 1979–1995 թթ.: 1995 թ. հիմնադրել է ԵՄԱ-ն: Նորմալացման գործընթացի լավատես աջակից լինելով, վերջերս հայտարարել է.

"Գուցե առաջին փուլն ավարտվել է, սակայն դա չի նշանակում, որ չեն լինի այլ փուլեր, որոնք կարող են ավելի հաջող լինել: Այսօր մենք այն փուլում ենք, երբ վերլուծվում են երկու երկրներին ցանկալի արդյունքի հասնելուն խոչընդոտող դժվարությունները: Մեր նպատակներից մեկը պետք է լինի վերլուծել անցած մեկուկես տարին և փորձել կոնկրետ նախաձեռնություններ առաջ քաշել, որոնք հնարավորություն կտան առաջիկա փուլերն ավելի արդյունավետ իրականացնել":

Էլեկտրոնային փոստ: boris@ypc.am

9բ, Ղազար Փարպեցի փողոց. 0002 Երևան, Հայաստան

Հեռ.: +374 10 53 00 67; 53 35 41; 53 76 62

Ֆաքս: +374 10 53 56 61

Էլեկտրոնային փոստ: pressclub@ypc.am

Համացանց. www.ypc.am

### Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

INTERNATIONAL
CENTER FOR
HUMAN
DEVELOPMENT
THINK TANK

Հիմնադրվել է 2000 թ. մարտին, Կովկասի առավել հայտնի <<ուղեղային կենտրոններից է>>: 2007 թ. դարձել է բաց հասարակության քաղաքականության ասոցիացիայի անդամ (PASOS), որը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հետազոտական կենտրոնների ցանց է: Կենտրոնի տարեկան շրջանառությունը (2009-2010) ավելի քան 1.5 միլիոն ԱՄՆ դոլար է: <<Ուղեղային կենտրոնների>> վարկանիշային հետազոտության արդյունքների համաձայն, նա ճանաչվել է Արևելյան Եվրոպայի 25 լավագույն կենտրոններից մեկը 2008 թ., և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների 30 լավագույն կենտրոններից մեկը 2009 թ.:

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը հետազոտություններ է իրականացնում կոռուպցիայի դեմ պայքարի, միգրացիայի, տնտեսական ծրագրավորման և Հայաստան-Սփյուռք հարաբերությունների առնչությամբ: Հիմնական հայկական ուղեղային կենտրոնն էր, որ ներգրավված էր 2000–ականների սկզբին մեկնարկած հայ-թուրքական հանրային դիվանագիտության մեջ, որը վերահսկվում էր Ամերիկյան համալսարանի Գլոբալ խաղաղության կենտրոնի կողմից (ԱՄՆ պետդեպարտամենտի ֆինանսական օժանդակությամբ): Իրականացրել է հայ-թուրքական հարաբերություններին առնչվող հետևյալ ծրագրերը:

- 2001-2003 Առաջնորդության զարգացում և կարողությունների ստեղծում Կովկասում, վերապատրաստում հարյուր հոգու համար Երևանում, Վիեննայում, Փարիզում, Նյու յորքում, Պրագայում, Սանկտ Պետերբուրգում և Աթենքում:
- 2001-2002 Վիրտուալ գյուղատնտեսական մեծածախ շուկա (VAWM), ցուցահանդես (Գյումրի) և կայքի գործարկում:
- 2002-2003 Տարածաշրջանային տնտեսական աշխատանքային խումբ, երկու կոնֆերանսներ Ստամբուլում:
- 2003-2004 Բիզնես առաջնորդներ, կոնֆերանսներ և սեմինարներ Շիրակում, Լոռիում և Ստամբուլում:
- 2003-2004 Կովկասի մարքեթինգային ցանց, MANEC. բիզնես խորհրդատվության կայքի գործարկում:

2009 թ.  կենտրոնը կազմակերպել է 14 հանդիպում-քննարկումների շարք Հայաստանի տարածքում՝ հայ-թուրքական հարաբերությունների ապագայի առնչությամբ (համացանցում առկա է դրա մասին մանրամասն տեղեկատվություն հայերեն լեզվով): Ծրագրին աջակցել է Եվրասիա համագործակցության հիմնադրամը:

2010 թ. ապրիլին կենտրոնը հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման խնդրով համագործակցության հուշագիր է ստորագրել երեք գործընկերների հետ, Հայաստանի Արդյունաբերողների և գործարարների միություն, Երևանի մամուլի ակումբ, և Եվրասիա համագործակցության հիմնադրամ:

Ունի երկու հրատարակություն հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ՝

**Հայ-թուրքական հանրային դիվանագիտություն: Լավագույն կիրառումների գնահատում**



Քննարկում է Հայաստանի և Թուրքիայի միջև 2001 թ. մեկնարկած հանրային դիվանագիտության հաջողություններն ու ձախողումները և հետաքրքրված շահառուներին է ներկայացնում առաջարկությունների ցանկ:

http://www.ichd.org/download.php?f=374&fc=Download the publication

**Գաղտնազերծելով անցյալը**



Դեյվիդ Ֆիլիպսի հայերեն հրատարակված գիրքը, որ նախաձեռնվել էր ԱՄՆ պետդեպարտամենտի կողմից, թուրք-հայկական հանրային դիվանագիտության ծրագրերի անձնական հաշվետվություն է: Հիմնական

շեշտը դրվում է այդ ժամանակաշրջանի առավել մեծ և ամենաշատ քննարկված ծրքագրի՝ Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի վրա:

ԹՀՀԿ-ն հիմնադրվել է 2001 թ. Հուլիսին, Ժնևում: Նրա գործունեության համակարգումը վստահվել էր Դեյվիդ Ֆիլիպսին, Պետդեպարտամենտի պաշտոնյա, ով հանրային դիվանագիտության փորձ ուներ Թուրքիայում և Կիպրոսում: Հանձնաժողովի աշխատանքի հիմքը կազմում էին հանդիպումներն ու քննարկումները սահմանի բացման, տնտեսական, մշակութային հարաբերությունների վերաբերյալ: Ամենաբաժանարարը Հայոց ցեղասպանության խնդիրն էր, որը խոչընդոտում էր առաջխաղացմանը գրեթե բոլոր դեպքերում:

Հանձնաժողովի անդամներ էին

Գունդուզ Ակտանը (Անկարա), Ուստուն Էրգուդերը (Ստամբուլ), Սադի Էրգուվենչը (Ստամբուլ), Օզդեմ Սանբերկը (Ստամբուլ), Իլթեր Թուրքմենը (Ստամբուլ), Ալեքսանդր Արզումանյանը (Երևան), Դավիթ Հովհաննիսյանը (Երևան), Վան Զ. Գրիգորյանը (Նյու Յորք) և Անդրանիկ Միհրանյանը (Մոսկվա).

Գրքի հայերեն տարբերակը մատչելի է այս կայքում՝ http://www.ichd.org/download.php?f=387&fc=

Գրախոսության համար այցելել այս կայք՝ http://www.esiweb.org/index.php?lang=en&id=322&debate_ID=2&slide_ID=22

Կենտրոնի հոգաբարձուների խորհրդի նախագահն է նախկին վարչապետ Արմեն Դարբինյանը:

Թևան Պողոսյանը գործադիր տնօրենն է 2000 թ. հիմնադրումից ի վեր



2001 թ. Պողոսյանը դարձել է նաև Հայաստանի ատլանտյան ասոցիացիայի գործադիր տնօրեն: 2002 թ. սկսել է դասավանդել Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանում՝ հակամարտությունների կառավարում և առաջնորդություն առարկան: 1997–1999 թթ. աշխատել է ԱՄՆ-ում՝ Լեռնային Ղարաբաղի հանրային հարաբերությունների գրասենյակի տնօրեն: 1996–1997 թթ. աշխատել է Հայաստանի Կենտրոնական բանկում: 1996 թ. ավարտել է Հայաստանի Ամերիկյան համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետը և Երևանի պետական ճարտարագիտական համալսարանի համակարգչային ֆակուլտետը 1994 թ.:

Նա վերջերս նշել է, որ հայ-թուրքական սահմանի խնդիրը միայն Հայաստանին և Թուրքիային չի վերաբերում, այն կլինի ճանապարհ, որը կբացի տարածաշրջանը[11]:

Էլեկտրոնային փոստ: tpoghosyan@ichd.org

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
19 Սայաթ Նովա պողոտա, Երևան 0001, Հայաստան
Հեռախոսներ: +374 10 582638, +374 10 528321
Ֆաքս: +374 10 527082
Էլեկտրոնային փոստ: mail@ichd.org

**Հակամարտությունների կարգավորման ոչ ավանդական մեթոդների առաջարկման կենտրոն**

Հիմնադրվել է 1999 թ. դեկտեմբերին, որպես ՀԿ գրանցվել է 2001 թ: Գործունեությունը հիմնականում կենտրոնացած է Մեծ Կովկասի վեց պետությունների շուրջ՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Թուրքիա և Իրան: Հետազոտում է Կովկասում հակամարտությունների հիմնական պատճառները և փնտրում է դրանք կանխելու միջոցներ: Իր առաքելությունն իրականացնում է՝ (ա) տարածաշրջանային ինտեգրացիայի, խաղաղության առաջ մղման նախաձեռնությունների, (բ) տարածաշրջանային տնտեսական համագործակցության (բիզնես և հակամարտություն) նախաձեռնություններով:

2002 թ. տարածաշրջանի քաղաքագլուխներ ծրագրի կազմակերպիչներից է, որի ընթացքում Թուրքիայից (Կարս, Էրզրում, Իգդիր և Արդվին), Հայաստանից (Գյումրի, Վանաձոր, Իջևան և Արթիկ), Ադրբեջանից (Գյանջա, Աղստաֆա և Ղազախ) և Վրաստանից (Նինոծմինդա, Ախալքալակ, Ախալցխա և Մառնեուլ) ժամանած քաղաքապետերը Կարսում և Գյումրիում մասնակցել են հանդիպումների, քննարկումների և վերապատրաստման դասընթացների:

2007 թ. կենտրոնի ներկայացուցիչները մասնակցել են Կարսի ֆորումին՝ ներկայացնելով Հայաստանի պանիրը և ձուկը (Գյումրի): Կենտրոնը հետագայում իրականացրել է “Կովկասյան պանիր” ծրագիրը՝ 2008 թ. մայիսին Գյումրիում կազմակերպելով պանրի ցուցահանդես: Ցուցահանդեսին մասնակցել են պանիր արտադրողներ Թուրքիայից, Ադրբեջանից, Աբխազիայից, Հարավային Օսիայից, Լեռնային Ղարաբաղից,

[11]Եվրոպական կայունության նախաձեռնության հարցազրույցը Թևան Պողոսյանի հետ

Հայաստանից և Վրաստանից: Կարսում և Գյումրիում արտադրված "Կովկասյան պանիրը" սահմանափակ քանակով վաճառվում է Թուրքիայում (Կարս), Վրաստանում (Թբիլիսի, Ջավախք) և Հայաստանում (Գյումրի, Երևան):



Արտուշ Մկրտչյանը "Խաղաղության պանիր" արտադրողների հետ

Արտուշ Մկրտչյանը, նախկինում Հայաստանի վարչապետի խորհրդական և 1999 թ. Կենտրոնի գործադիր տնօրեն, ակտիվորեն մասնակցել է Թուրքիայի հետ նորմալացման և հաշտեցման գործընթացի առաջ մղմանը: Մկրտչյանն ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտը, Երևանի տնտեսագիտական ինստիտուտի Գյումրու մասնաճյուղը և հաճախել է Թբիլիսիի արվեստի ակադեմիա: 1980-1990-ական թթ. սկզբներին աշխատել է արդյունաբերության ոլորտում: 1994 թ. Style Arts թանգարանի հիմնադիրներից մեկն է եղել, որը Հայաստանի առաջին արվեստի մասնավոր թանգարանն էր: 1999 թ. դարձել է Գյումրու զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն:



Մկրտչյանը հոդվածներ է հրապարակել հակամարտությունների կարգավորման և կանխման վերաբերյալ: Մասնակցել է Թուրքիայի հետ երկկողմ բազմաթիվ ծրագրերի, այդ թվում գործարարների ֆորումների, լրագրողների փոխանակման ծրագրերի, ուսանողական այցելությունների, և պանրի համատեղ արտադրության նախաձեռնությանը:

Էլեկտրոնային փոստ: gdf@web.am, caucasuscenter@web.am

Կենտրոնը կազմակերպել է (կամ մասնակցել է) հայ-թուրքական հարաբերություններին առնչվող հետևյալ նախաձեռնություններին:

- Դեկտեմբեր 2001 - նոյեմբեր 2002. "Վիրտուալ գյուղատնտեսական մեծածախ շուկա և տոնավաճառ" - ֆինանսավորվել է Ամերիկյան համալսարանի Գլոբալ խաղաղության կենտրոնի կողմից:
- Մարտ-մայիս 2003. "Խաղաղություն տանը, խաղաղություն աշխարհում" վերապատրաստում ուսուցիչների և աշակերտների համար Գյումրիում, հովանավորվել է ԱՄՆ դեսպանատան կողմից:
- Սեպտեմբեր 2003 - դեկտեմբեր 2003. "Բարեկամական Կովկաս 1" վերապատրաստում հայ, թուրք և ադրբեջանցի լրագրողների համար, ֆինանսավորվել է զարգացման և համագործակցության ICCO-Interchurch կազմակերպության կողմից:
- Մայիս - Դեկտեմբեր 2004. "Բարեկամական Կովկաս 1" վերապատրաստում հայ, թուրք և ադրբեջանցի լրագրողների և ՀԿ-ների ղեկավարների համար, ֆինանսավորվել է Եվրոպայի խորհրդի վստահության աջակցման միջոցների ծրագրի կողմից:
- 2004 թ. "Կովկասի գործարար շտեմարան", Ֆինասանվորվել է ամերիկյան համալսարանի գլոբալ խաղաղության կենտրոնի կողմից:
- 2007 թ. Բիզնես ֆորում, Կարս:
- 2007 թ. "Մենք նույն նավակում ենք", Եվրոպական երիտասարդական դաշնություն, որբանոցների հաշմանդամ երեխաների ճամբար Հայաստանից, Ադրբեջանից, Վրաստանից և Թուրքիայից:
- 2008 թ. Եվրոպական երիտասարդական դաշնություն, հայ և թուրք երիտասարդ առաջնորդների և աշխատակիցների կոնտակտների ստեղծման և տեղեկատվական սեմինարներ:
- 2008-2009 թթ. Կովկասյան պանիր, Հայաստանում ԱՄՆ դեսպանատուն, International Alert:
- 2008 թ. Կովկասյան պանիր, ներկայացումներ Երևանում, Թբիլիսիում, Գյումրիում, Կարսում, Լոնդոնի Քինգս Քոլեջում (Կովկասի գործարար և զարգացման ցանց), Եվրոպական անվտանգության ինստիտուտում (CBDN), Անկարայում՝ եվրոպական տարբեր երկրների դեսպանատներում (CBDN):
- 2009-2010 թթ. Կովկասյան գինիների փունջ, Երևանում ԱՄՆ դեսպանատուն, International Alert:
- 2010 թ. "Պանրային դիվանագիտություն", ընդլայնելով համագործակցության և հասարակական երկխոսության տարածությունը Կովկասում խաղաղության գործընթացի նոր խաղացողներով, Black Seat Trust:

Տես 2008 թ. մայիսի 22-ի հոդվածը Կովկասյան պանրի մասին ("Պանիր և քաղաքականություն") *The Economist պարբերականում*
http://www.economist.com/displayStory.cfm?Story_ID=E1_TTQTNJNV

Հակամարտությունների կարգավորման ոչ ավանդական մեթոդների առաջարկման կենտրոն (CCPNTCRM)
12 Գայի փողոց, 3104 Գյումրի, Հայաստան;
Հեռ: 374 312 46044;

Ֆաքս: 374 312 46044;
Էլեկտրոնային փոստ: caucasuscenter@web.am

AIPRG (Հայկական միջազգային տնտեսական հետազոտությունների խումբ)

ՀԿ է, որը հետազոտում և քաջալերում է Հայաստանում հանրային քաղաքականությանն առնչվող խնդիրների ուսումնասիրումը: Հետազոտման թիրախներն են Հայաստանի զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող տնտեսական և հանրային քաղաքականության ոլորտները:
Ունի մեծ թվով ծրագրեր և ակտիվ գործունեություն է իրականացնում: Կազմակերպում է կոնֆերանսներ և սեմինարներ, հետազոտություններ է իրականացնում դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, աջակցում է հանրային և մասնավոր հատվածների միջև բանավեճին, հրատարակում է գիտական ամսագիր և տարածում հետազոտության արդյունքները:

2006-07 թթ. զբաղվել է հայ-թուրքական սահմանի բացման տնտեսական հետևանքների ուսումնասիրմամբ՝ աջակցելով հետազոտական ծրագրերին և կազմակերպելով քննարկումներ: 2007 թ. հունվարին հետազոտությունների արդյունքները ներկայացվել են "Հայ-թուրքական սահմանի բացման սոցիալ-տնտեսական հետևանքները" թեմայով միջազգային գիտաժողովում: Բոլոր զեկույցները կարելի է ներբեռնել այս կայքից՝ http://www.aiprg.net/en/content/29/#Turkey-Armenia

2006 թ. դեկտեմբերին Երևանում քննարկումներ է անցկացրել TESEV-ի Կովկասյան հետազոտական ռեսուրսների կենտրոնի հետ՝ քննարկելու համար Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման ճանապարհին առկա խոչընդոտները: 2007 թ. հրապարակել է Հայաստանում (սահմանամերձ շրջաններում) և Թուրքիայում (Ստամբուլ և Անկարա, ARI շարժման և TABDC-ի հետ համագործակցությամբ) կատարված հետազոտությունների արդյունքները: Թուրքական մամուլը մանրամասն ներկայացրել է խմբի այցելությունը (տես http://www.aiprg.net/UserFiles/File/Media_reactions.pdf)
Խմբի գործադիր տնօրենն է Արման Գաբրիելյանը: Կոնստանտին Աթանեսյանը հիմնադիր անդամներից է և տնօրենների խորհրդի անդամ:

Վաշինգտոն:
P.O. Box 28179, Վաշինգտոն 20038-9998, ԱՄՆ;
Հեռ: +1 202 458-2589, +1 202 623-4327;

Ֆաքս: +1 202 522-3124
Էլեկտրոնային փոստ: info@aiprg.net;

Երևան:
Հայաստանի տնտեսագիտական պետական համալսարան, Սենյակ 202,
128 Նալբանդյան փողոց, Երևան 25, Հայաստան.
Էլեկտրոնային փոստ: arman.gabrielyan@yahoo.com

Կոնստանտին Աթանեսյան
Գնահատման ավագ պաշտոնյա, IEGCR
Հեռ: +1 202 458-2589
Ֆաքս: +1 202 522-3124
katanesyan@worldbank.org
www.worldbank.org/IEG

### Խաղաղության աջակցման նախաձեռնությունների կովկասյան կենտրոն

alternative
SOUTH CAUCASUS INTEGRATION

Կենտրոնը Հայաստանում և Թուրքիայում ավելի շատ հայտնի է հայ-թուրքական և հայ- ադրբեջանական ֆիլմերի փառատոնների կազմակերպմամբ: Հիմնադրվել է Երևանում 1997 թ. և պաշտոնապես գրանցվել է 2002 թ: Նպատակն է համախմբել Հարավային Կովկասում խաղաղության և բարիդրացիական հարաբերությունների վերականգնման սոցիալական պահանջը և առաջ մղել "սառեցված" հակամարտությունների կարգավորումը մարդու իրավունքների և ազատությունների հիման վրա: Կազմակերպել է հանրային միջոցառումներ, քննարկումներ, կոնֆերանսներ և ներկայացումներ:

**Հայաստան-Թուրքիա ֆիլմերի փառատոններ**
CCPMI-ը 2009 և 2010 թթ. Հայաստանում կազմակերպել է թուրքական ֆիլմերի փառատոն: 2009 թ. մարտին "23.5" փառատոնն անցկացվել է Մոսկվա կինոթատրոնում: Ներկայացվել են յոթ թուրքական կարճամետրաժ ֆիլմեր՝ մուլտիպլիկացիայի, թատրոնի և վավերագրական կինոյի ժանրերում (ցուցադրվել են միասին, տևողությունը 90 րոպե): Միջոցառումը հովանավորվել է Երևանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան կողմից:




Երկրորդ փառատոնը կազմակերպվել է 2010 թ. մարտի 25-27-ը: Աջակցություն է ստացել Մեծ Բրիտանիայի դեսպանատնից, Ակոս շաբաթաթերթից և 1,500,000+1 միջազգային հիմնադրամից, որը նպաստում է սպանված լրագրող Հրանտ Դինքի հիշատակի պահպանմանը: Թուրքական տարբեր քաղաքներից (Անկարայից մինչև Իզմիր) ներկայացվել էին 77 կարճամետրաժ ֆիլմեր փառատոնին մասնակցելու համար: Նրանցից ընտրվել և ցուցադրվել է տասը (հայերեն տիտրերով կամ անգլերեն թարգմանությամբ): Փառատոնն անցկացվել է Հայաստանում Ամերիկյան համալսարանի բիզնես կենտրոնում:




Ավելի վաղ 2008 թ. փետրվարին Գեորգի Վանյանը (տես ստորև) փորձել էր կազմակերպել նմանատիպ առաջին փառատոնը Հայաստանում: Սակայն կազմակերպիչը՝ խաղաղության նախաձեռնությունների կենտրոնը, հանդիպել էր կազմակերպչական և քաղաքական դժվարությունների և ի վիճակի չէր եղել կազմակերպել միջոցառումը:

Դասընթաց

2007 թ. դեկտեմբերին կենտրոնը կազմակերպեց New Anatolia-*ի* ներկայացուցիչ Նուրսուն Էրելի դասընթացը ժուռնալիստիկա ուսուցանող հայ ուսանողների համար: (Էրելը նախկին վարչապետ Թանսու Չիլերի խորհրդականն էր): Յուրաքանչյուր դասընթացի (օրական չորս ժամ) տևողությունը յոթ օր, մասնակցում էին 40 ուսանողներ: Կենտրոնը կազմակերպեց Էրելի հանդիպումները ՀՅԴ-ն, արտգործնախարարության և մի խումբ հայ ակտիվիստների հետ: Էրելը ուղիղ եթերում հարցազրույց տվեց Շանթ հեռուստաընկերությանը:

**Գեորգի Վանյան**



Գեորգի Վանյանը Խաղաղության աջակցման նախաձեռնությունների կովկասյան կենտրոնի նախագահն է: Երևանում սովորել է դերասանական արվեստ: 1984-1994 թթ. աշխատել է Երևանի մնջախաղի պետական թատրոնում, “Երևան” թատրոն ստուդիայում և Հայֆիլմ-ում: 1997 թ. տեղափոխվել է կրթության ոլորտ, աշխատել է Երևանի դպրոցներից մեկում մինչև 2005 թ.: 1998 թ. փետրվարին դարձել է Նոր Ուղի կուսակցության անդամ: Մեկ տարի անց դարձել է կուսակցության վարչության անդամ և փոխնախագահ: 1998 թ. նախագահական ընտրություններում նա նախկին կրթության նախարար Աշոտ Բլեյանի նախընտրական շտաբի ղեկավարն էր: 2002 թ. հեռացել է քաղաքականությունից և դարձել է կենտրոնի հիմնադիրների խորհրդի անդամ: Այժմ կենտրոնի նախագահն է:
Էլեկտրոնային փոստ: vanyan@southcaucasus.com

Խաղաղության աջակցման նախաձեռնությունների կովկասյան կենտրոն

Բնակարան. 53, 14 Շինարարների փողոց, Երևան, 0038, Հայաստան
Հեռ: +374 91 401459 (Հայաստան), +995 99 753754 (Վրաստան)
Էլեկտրոնային փոստ: ccpmiam@yahoo.com, info@southcaucasus.com; vanyan@southcaucasus.com

Համացանց: www.southcaucasus.com

**Քաղաքացիական հասարակության ինստիտուտ**

Չնայած հայտնի չէ որպես հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ հետազոտություններ իրականացնող կամ այդ ոլորտում խոշոր ծրագրեր կատարող կազմակերպություն, ինստիտուտն առաջ է մղում Հայաստանի և Թուրքիայի քաղաքացիական հասարակությունների երկխոսությունը: Հիմնադրվելով 1998 թ. (որպես Քաղաքացիական հասարակության

զարգացման միություն), ինստիտուտը մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի անդամ է:

2009 թ. մարտի 14-15-ը ինստիտուտը և Անկարայում գործող Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոնը կազմակերպեցին Հայաստան-Թուրքիա ՀԿ-ների ֆորում, երկօրյա հանդիպմանը մասնակցեցին ՀԿ-ների շուրջ 50 ներկայացուցիչներ: Միջոցառումը կազմակերպվել էր Թուրքիայում Մեծ Բրիտանիայի դեսպանատան աջակցությամբ: ՔՀԻ-ն հաճախ է կազմակերպում դասախոսություններ և ներկայացումներ հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ, այն կազմակերպում է նաև հանդիպումներ պրոֆեսորների, ԶԼՄ-ների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

- 10 մայիսի, 2010 թ.: Դասախոսություն "Թուրքիայի արտաքին քաղաքականությունը 2009 թ." թուրքագետ Արտակ Շաքարյանի կողմից: Բանախոսը անդրադարձել է Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքներին, հայոց ցեղասպանությանը, Թուրքիայի ներքաղաքական խնդիրներին և հայ-թուրքական սահմանի հարցին:
- Դեկտեմբեր 2009: Հանդիպում Արեգնազանի դպրոցի բարձր դասարանի աշակերտների և Բուրչու Բեչերմենի միջև, որը ներկայացնում էր Ստամբուլում գործող Հրանտ Դինքի միջազգային հիմնադրամը:
- 2 դեկտեմբեր 2009: Հայկական ավելի քան 20 ՀԿ-ների ներկայացուցիչների հանդիպում Դինքի հիմնադրամի անդամների հետ:
- 11 դետեմբեր 2008: Հանդիպում քաղաքական զարգացումների հետազոտությունների կենտրոնի փորձագետ Սերգեյ Հարությունյանի հետ: Հարությունյանը խոսել է Աթաթուրքի հայեցակարգի և Թուրքիայի արտաքին քաղաքականության հոլովույթի, Թուրքիայի և հարևանների հարաբերությունների, ինչպես նաև Թուրքիա-Եվրամիություն խնդիրների մասին:
- 4 դեկտեմբեր 2008: Քննարկում Գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Հարություն Մարությանի հետ՝ ցեղասպանությունը որպես գործոն Հայաստանի և Թուրքիայի քաղաքականության մեջ թեմայով:
- 19 մայիս 2008: "Հայաստան և Թուրքիա: տարածաշրջանային շահեր Եվրամիության հետ ինտեգրացիայի գործընթացի լույսի ներքո", բանավեճ հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ: Սեմինարին մասնակցել են, ուսանողներ, դասախոսներ և փորձագետներ Թուրքիայից և Հայաստանից: Ելույթ է ունեցել Ստեփան

Գրիգորյանը (Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի ղեկավար), Նաիրա Գևորգյանը (Friedrich Ebert հիմնադրամի Հայաստանի ներկայացուցիչ), Դիբա Նիգար Գյոկսելը (Եվրոպական կայունության նախաձեռնության վերլուծաբան և *Turkish Policy Quarterly-ի խմբագիր*), Ջեմ Թոքերը (Թուրքիայի լիբերալ-դեմոկրատական կուսակցության ղեկավար), Արդա Բատուն (Արի շարժման վարչության անդամ և Yeditepe համալսարանի դասախոս), և Կարեն Նահապետյանը (ԵՊՀ պրոֆեսոր):

- 26 սեպտեմբեր - 2 հոկտեմբեր, Հայաստանի և Թուրքիայի միջազգային հարաբերությունների և քաղաքագիտության գծով ուսանողների համար սեմինար հակամարտությունների տրանսֆորմացիայի վերաբերյալ: Կազմակերպվել են նաև քննարկումներ հայ-թուրքական հարաբերությունների մասին փոխարտգործնախարար Արման Կիրակոսյանի, ՀՅԴ միջազգային քարտուղարության ղեկավար Կիրո Մանոյանի, Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպան Չարլզ Լոնսդեյլի և "Ժառանգություն" կուսակցության ղեկավար Արմեն Մարտիրոսյանի հետ: Ուսանողները նաև մասնակցել են կլոր սեղանի "Հայ-թուրքական սահմանի բացման հեռանկարները" թեմայով Ազգային և միջազգային հետազոտությունների հայկական կենտրոնում:

- Դեկտեմբեր 2007: Կոնֆերանս Հայ-թուրքական սահմանի բացման ազդեցության մասին: ՔՀԻ-ին հյուրընկալել է Հայաստանի միջազգային քաղաքական հետազոտությունների խմբի ներկայացուցիչների, ովքեր ներկայացրել են սահմանի բացման սոցիալ-տնտեսական հետևանքների մասին իրենց կատարած ուսումնասիրությունը: Հանդիպմանը մասնակցել են նաև ուսանողներ, լրագրողներ և գիտնականներ (ինչպես նաև Սեֆա Կապլանը *Hurriyet-ից*): Անցկացվել են քննարկումներ հայ-թուրքական հարաբերությունների մասին:

- Ապրիլ 2007: Քննարկում (կազմակերպվել է Դիլիջանի երիտասարդական ակումբի հետ միասին) Հայոց ցեղասպանության և Թուրքիայի հետ հարաբերությունների թեմայով: Դասախոսություն է կարդացել Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ներկայացուցիչ Տիգրան Զաքարյանը:


**Քաղաքացիական հասարակության ինստիտուտ**
Այգեստան 11 փողոց, 43 շենք
Երևան, Հայաստան
Հեռ: (+37410) 574317
Ֆաքս: (+37410) 559634
csi@csi.am
www.csi.am

**Կովկասի ինստիտուտ**

Կովկասի ինստիտուտը միաժամանակ և կրթական հաստատություն է և վերլուծական կենտրոն:
Կրթության ոլորտում ինստիտուտը կազմակերպում է մեկ տարի տևողությամբ մագիստրոսական կուրսեր ժուռնալիստիկայի և քաղաքագիտության ոլորտում: Որպես վերլուծական կենտրոն այն ֆորում է բանավեճերի համար, հետազոտություններ է իրականացնում և խորհրդատվություն տրամադրում Կովկասի զարգացումների վերաբերյալ: Նրա հրատարակությունները տարածվում են Կովկասում և նախկին ԽՍՀՄ հանրապետություններում՝ վերլուծելով տարածաշրջանի խնդիրները:
Կովկասի ինստիտուտը դրամաշնորհների վրա հենված հաստատություն է: Ֆինանսավորում է ստացել ՄԱԿ-ի զարգացման ծրագրից, Եվրասիա հիմնադրամից, Բաց հասարակության ինստիտուտից, Եվրոպայի խորհրդից, Heinrich Boll հիմնադրամից, ինչպես նաև Եվրամիության անդամ երկրների տարածաշրջանային դեսպանություններից:

**Ալեքսանդր Իսկանդարյան**

Մի քանի տարի ներգրավված է Հայաստան-Թուրքիա հարաբերություններին առնչվող ծրագրերում: Heinrich Boll-ի հիմնադրամի հետ միասին կազմակերպել է ուսանողների փոխանակում Լեհաստանի (տասն ուսանող երկու շաբաթ տևողությամբ) և Թուրքիայի (3 ուսանող մեկ շաբաթ տևողությամբ) դպրոցների հետ: Կովկասի ինստիտոտի տնօրեն Ալեքսանդր Իսկանդարյանը հաճախ է հրավիրվում Թուրքիա՝ մասնավորապես Բիլգի և Բոսֆորի համալսարաններ, Ստամբուլ՝ դասախոսություններ կարդալու համար:



Իսկանդարյանը Կովկասի քաղաքականության հարցերով առավել հայտնի փորձագետներից է, հաճախ է հանդես գալիս ԶԼՄ-ներով տարածաշրջանային, միջազգային և ներքին քաղաքական հարցերի վերաբերյալ մեկնաբանություններով: Խորհրդային շրջանում նա սովորել և

բնակվել է Մոսկվայում: Եղել է Գիտությունների ակադեմիայի կովկասյան հետազոտությունների կենտրոնի փոխտնօրեն:
Էլեկտրոնային փոստ: iskand@caucasusinstitute.org

**Սերգեյ Մինասյան**



Սերգեյ Մինասյանը 2006 թ. մարտից ղեկավարում է Կովկասի ինստիտուտի քաղաքական հետազոտությունների բաժինը: Սովորել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: Քաղաքագետ է և պատմական գիտությունների թեկնածու, ատենախոսության թեման առնչվում է Հայաստանի ռազմական պատմությանը: Նրա բազմաթիվ հրապարակումները վերաբերում են Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգությանը և հակամարտություններին: 2002 թ. նա Հայաստանի տարբեր ինստիտուտներում և համալսարաններում դասավանդում է միջազգային հարաբերությունների տեսություն: Հաճախ հանդես է գալիս ԶԼՄ-ներով՝ հայ-թուրքական հարաբերությունների և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի առնչությամբ:
Էլեկտրոնային փոստ: sergey@caucasusinstitute.org
Կովկասի ինստիտուտը 2006 թ. սկսած մի շարք կլոր սեղաններ և սեմինարներ է անցկացրել հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ, որոնց մասնակցել են հայտնի գիտնականներ, լրագրողներ և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ Հայաստանից և Թուրքիայից:

***Հայաստան-Թուրքիա հարաբերություններին առնչվող կլոր սեղաններ***

27 ապրիլ 2010: Ինստիտուտի զեկույցի ներկայացում "Հայաստանը և հայերը, Թուրքիան և թուրքերը հայկական ԶԼՄ-ներում": Կլոր սեղանը սկսվել է Հրանտ Միքայելյանի ելույթով, որից հետո անցկացվել է քննարկում հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ:

5 մարտ 2010: "Թուրքիա-Հայաստան երկխոսության շարք. Գնահատելով նորմալացման գործընթացը", կլոր սեղան քննարկում TESEV-ի հետ միասին:

3 հոկտեմբեր 2008: "Հայ-թուրքական դիվանագիտություն. հայացք Թուրքիայից և հետևանքներ թուրք-ադրբեջանական հարաբերությունների վրա", մասնակցել է Ռիչարդ Կիրակոսյանը՝ Jane's Information Group-ի վերլուծաբան, և Ալեքսանդր Իսկանդարյանը, Կովկասի ինստիտուտի տնօրեն:

10 հունիս 2008: “Թուրքիայի եվրոպական ինտեգրացիան և Հայաստանը” կլոր սեղան, որին աջակցել է Heinrich Boll հիմնադրամի հարավկովկասյան բյուրոն: Քննարկմանը, որին մասնակցել է Ռալֆ Ֆաքսը, Heinrich Boll հիմնադրամի համանախագահը և Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռուբեն Սաֆրաստյանը, ուշադրություն է դարձվել Եվրամիության երկրների հետ Թուրքիայի հարաբերությունների զարգացմանը և դրա ազդեցությունը Հարավային Կովկասի և Անկարայի հարաբերությունների վրա:

16-18 մարտ 2008: Հայ և թուրք ուսանողների փոխանակում: Կովկասի ինստիտուտի ուսանողներ Անգելինա Հարությունյանը և Նիկոլայ Թորոսյանը այցելել են Թուրքիա, ինստիտուտի և  Heinrich Boll հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի շրջանակում: Այցելել են Բոսֆորի, Գալաթասարայի համալսարաններ և Ակոսի խմբագրություն, հանդիպել հելսինկյան ասոցիացիայի ներկայացուցիչների հետ:

29 նոյեմբեր 2007: “Թուրքիան նախագահական ընտրություններից հետո: Ինստիտուցիոնալ փոփոխություններ և ներքին տրանսֆորմացիա”, դասախոսություն Ռուբեն Սաֆրաստյանի կողմից: Քննարկումը կենտրոնացել է Թուրքիայի քաղաքական համակարգի տրանսֆորմացիայի, քաղաքացիական հասարակության երևան գալու, Թուրքիայի քաղաքական կյանքում զինվորականության դերի նվազման, Թուրքիայի ներքաղաքական փոփոխությունների՝ տարածաշրջանային քաղաքականության և տնտեսության վրա ունեցած ազդեցության և հայ հասարակության և քաղաքական վերնախավի՝ Թուրքիայի հանդեպ առկա ընկալման վրա:

11 դեկտեմբեր 2006: “Թուրք-հայկական հարաբերությունների հեռանկարը”: Բանավեճը կենտրոնացել է Հայաստանի և Թուրքիայի միջև քաղաքական կոնտակտներ հաստատելու հեռանկարի և պատմական վեճի՝ հայ-թուրքական հարաբերությունների նկատմամբ ունեցած ազդեցության վրա: Թուրքիայից մասնակցել են՝
- Մենսուր Ակգյունը, Սաբիհա Գունդոզարը, Սանեմ Գյուները, Ուկտու Կունդակչին, TESEV-ի արտաքին քաղաքականության ծրագրից,
- Սիլվիա Թիրյաքին՝ TESEV-ի Կիպրոսի ծրագրի համադասողը և *Hurriyet Daily News-ի* թղթակից,
- Էթյեն Մահչուփյանը, TESEV-ի ժողովրդավարացման գործընթացի ղեկավար և *Zaman-ի* թղթակից,
- Բերիլ Դեդեօղլուն, Գալաթասարայի համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի պրոֆեսոր,
- Բուրչու Գյուլթեկինը, Միջին Արևելի տեխնիկական համալսարանի գիտաշխատող,
- Մուստաֆա Կարալիօղլուն, *Yeni Safak* պարբերականի գլխավոր խմբագիր:

***Կովկասի ինստիտուտի սեմինարները Հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ***

21 նոյեմբեր 2008: “Թուրքիա-Հայաստան երկխոսության շարք: Կոտրելով արատավոր շրջանը”, սեմինար Թուրքիա-Հայաստան հարաբերությունների առկա վիճակի և խոչընդոտների վերաբերյալ:

1-4 օգոստոս 2008: “Կովկասյան հարևանություն. Թուրքիան և Հարավային Կովկասը”, միջազգային կոնֆերանս Ստամբուլում: Մասնակցել են փորձագետներ և ՀԿ-ների ներկայացուցիչներ Թուրքիայից, Հարավային Կովկասի պետություններից և չճանաչված միավորումներից:

Հրատարակություններ
Թուրքիա-Հայաստան երկխոսության շարք



Այբարս Գյորգուլու, Ալեքսանդր Իսկանդարյան և Սերգեյ Մինասյան “Գնահատելով նորմալացման գործընթացը”, աշխատանքային զեկույց, մայիս 2010:



“Կոտրելով արատավոր շրջանը”, TESEV-կովկասի ինստիտուտ համատեղ զեկույց, Ստամբուլ, ապրիլ 2009: [http://www.tesev.org.tr/UD_OBJS/PDF/DPT/ERM/TESEV-CI%20Turkey%20Armenia%20Rapor.pdf](http://www.tesev.org.tr/UD_OBJS/PDF/DPT/ERM/TESEV-CI%20Turkey%20Armenia%20Rapor.pdf)

Ա. Իսկանդարյան (խմբ), “Կովկասյան հարևանություն. Թուրքիան և Հարավային Կովկասը”, 2008 թ. (ռուսերեն և անգլերեն): Ուշադրություն է դարձվում Թուրքիայի և Հարավային Կովկասի պետությունների ու չճանաչված միավորումների դերակատարությանը տարածաշրջանային ինտեգրացիայի և տեղի էթնո-քաղաքական հակամարտությունների կառավարման գործընթացում:




Կովկասի Ինստիտուտ

39 Եզնիկ Կողբացի, 0010 Երևան, Հայաստան, Հեռ : 00 374 10 54 06 31, 54 06 32
Ֆաքս: 00 374 10 54 06 32
Էլեկտրոնային փոստ: contact@caucasusinstitute.org Համացանց
www.caucasusinstitute.org

**Սիվիլիթաս հիմնադրամ**

ՀԿ-է, հիմնադրվել է նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանի կողմից: Տնօրենն է Սալբի Ղազարյանը, նախկինում եղել է Օսկանյանի հատուկ օգնականը: Ունի ծրագրերի երկու ոլորտ՝ Միջազգային հարաբերությունների խորհուրդ և ժողովրդավարության ու զարգացման նախաձեռնություն:

Միջազգային հարաբերությունների խորհրդի շրջանակներում Սիվիլիթասը ընդգծում է Հայաստանի դերը գլոբալ և տարածաշրջանային գործընթացներում: Զարգացման և ժողովրդավարության նախաձեռնությունը օգտագործում է տեղական, միջազգային և Սփյուռքի ռեսուրսները Հայաստանում փոփոխություններ արձանագրելու համար: Ի աջակցություն ժողովրդավարացման գործընթացին, Սիվիլիթասը ուշադրությունը կենտրոնացնում է կրթության և ԶԼՄ-ների վրա: Համամասնական զարգացում ապահովելու նպատակով հիմնադրամը նպաստում է գյուղի զարգացմանը, բնապահպանական գիտելիքների տարածմանը և կրթությանը:

*Հարևանները մեկը մյուսի մասին*

http://www.caucasusneighbors.com

2009 թ. սեպտեմբերին Սիվիլիթասը Եվրասիա համագործակցության հիմնադրամի աջակցությամբ և Հրանտ Դինքի հիմնադրամի հետ համագործակցությամբ սկսեց իրականացնել “Հարևանները մեկը մյուսի մասին” ծրագիրը: Ծրագիրը փորձում է բարձրացնել ընկալումների, վախերի, սպասելիքների մասին առկա պատկերացումների մակարդակը թուրք և հայ հասարակություններում: Սիվիլիթասը ընտրում և թարգմանում է թուրքական մամուլից Հայաստանի և հայերի մասին հոդվածներ՝ դրանք վերահրատարակելի դարձնելով Հայաստանում: Դինքի հիմնադրամը նույն աշխատանքը կատարում է Թուրքիայում: Բոլոր հոդվածները թարգմանվում են նաև անգլերեն:

Փորձնական ծրագիրը մեկնարկել է 2009 թ.: Մինչև դեկտեմբերի վերջ շուրջ 90 հոդվածներ են թարգմանվել հայերեն, այդ թվում հետևյալ պարբերականներից՝ *Hurriyet*, *Milliyet*, *Yeni Safak*, Sezonlinenet, *Sabah*, *Taraf*, *Action*, *Zaman*, *Agos*, *Dunya*, *Radikal*, *Turkiye*, *Referans*, *Star*, *Yeni Cag*, *Bugun*, *Gunes*, CNN Turk և *Posta*.
Հայկական աղբյուրների թվում են 168 ժամ, Ազգ, Հայկական Ժամանակ, Ժամանակ, Lragir.am, Azatutyun.am (Ազատություն ռադիոկայանի հայկական ծառայություն), Հայոց աշխարհ, Չորրորդ ինքնիշխանություն, Հրապարակ, 7or.am և Առավոտ:

Հայերեն, թուրքերեն և անգլերեն հոդվածները տեղադրված են հետևյալ կայքում՝ http://www.caucasusneighbors.com.: Թուրքերեն հոդվածները դրված են այս կայքում՝ www.agos.com.tr.



Թաթուլ Հակոբյան

Ավարտել է ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետը և սովորել է Վրաստանի ժուռնալիստիկայի և ԶԼՄ-ների կառավարման դպրոցի մագիստրատուրայում: Աշխատել է տարբեր ԶԼՄ-ներում, այդ թվում Անկախություն շաբաթաթերթ, Երկիր օրաթերթ (1998-2000), Ազգ օրաթերթ (2000-2005), Հայաստանի հանրային ռադիո (2004-2008) և ԱՄՆ-ում գործող *Armenian Reporter* (2008-2009): Միացել է Սիվիլիթաս հիմնադրամին որպես վերլուծաբան 2009 թ. նոյեմբերին:

Մանրամասն անդրադարձել է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին և հայ-թուրքական հարաբերություններին: Նրա լրագրողական ոճի գիրքը Ղարաբաղի հակամարտության մասին՝ “Կանաչ և սև, արցախյան օրագրեր”, հրատարակվել է 2008 թ. սեպտեմբերին և Լեռնային Ղարաբաղի հակամարտության առավել մանրամասն վերլուծություններից մեկն է: 2010 թ. գիրքը թարգմանվել և հրատարակվել է ռուսերեն, անգլերեն և արևմտահայերեն: 2007 թ. աշխատում է երկրորդ գրքի՝ “Նայելով Արարատից. հայերը և թուրքերը” վրա, որը հրատարակվելու է 2011 թ.:
Հակոբյանի հոդվածները *Armenian Reporter-ում տեղադրված են այս կայքում՝*

http://www.reporter.am/index.cfm?objectid=0071BA40-9920-11DE-AD800003FF3452C2
http://www.reporter.am/index.cfm?objectid=6C5C88D6-512F-11DE-92C40003FF3452C2
Էլեկտրոնային փոստ: tatul.hakobyan@gmail.com
Հասցե: Նորք-Մարաշ, Արմենակյան փողոց, 202 v, Երևան, Հայաստան
Հեռախոս: + 374 10 500 119 (գրասենյակ)

Սիվիլիթաս հիմնադրամ
Հյուսիսային պողոտա 1, բնակարան 30,
Երևան, Հայաստան
info@civilitasfoundation.org
www.civilitasfoundation.org
Հեռ./Ֆաքս: (+374 10) 500 119

**Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն**

Կենտրոնը հայկական հանրային քաղաքականության ինստիտուտ է: Առավել հայտնի է իր կազմակերպած միջազգային կոնֆերանսներով, որոնք Հայաստանի ԶԼՄ-ների կողմից զգալի ուշադրության են արժանանում: (Սովորաբար կոնֆերանսների արդյունքները հրատարակում է գրքերով): Վերջին տարիներին ներգրավված է եղել հայ-թուրքական քաղաքացիական հասարակության շփումների առաջ մղմամբ: Բացի Թուրքիայից, կենտրոնը գործընկերներ ունի Գերմանիայում, Չեխիայի Հանրապետությունում, Լեհաստանում, Լիտվայում, Էստոնիայում, Ռումինիայում, Բուլղարիայում, Վրաստանում, Ադրբեջանում, Ուկրաինայում, Մոլդովայում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Բելառուսում և այլ երկրներում:

**<u>Հայ-թուրքական ծրագրեր</u>**

**Հայ-թուրքական քաղաքացիական դիվանագիտության երկխոսություն (2009-2010)**
Կազմակերպել է երեք սեմինար (երկուսը Երևանում և մեկը Ստամբուլում) և հիմնադրել է հարթակ Հայաստանի և Թուրքիայի բարձրակարգ փորձագետների համար (յուրաքանչյուր երկրից 12 հոգի):
**Հայ-թուրքական արձանագրություններ (2009-2010)**

Հինգ սեմինարներ է անցկացրել հայ-թուրքական արձանագրությունների վերաբերյալ Երևանում, Վանաձորում, Եղեգնաձորում և Գյումրիում, յուրաքանչյուրը մեկ օր տևողությամբ:
**Թուրքիա-Հայաստան երկխոսություն (2009-2010)**
Կազմակերպել է:
-Մեկ օր տևողությամբ սեմինար "Եվրամիությունը և Թուրքիան. Թուրքիայի եվրոպական ինտեգրման խնդիրները և հեռանկարները",
- Կլոր սեղան թուրք փորձագետների հետ, "Առավոտի" խմբագրատանը,
- Սեմինար Վանաձորում "Հայ-թուրքական միջսահմանային համագործակցությունը. տեսանելի նախաձեռնություններ հայկական և թուրքական կողմից",
- Սեմինար միջսահմանային համագործակցության մասին Գյումրիում: Սեմինարին հաճախել են քաղաքացիական հասարակության, դասախոսների, ուսանողների և երիտասարդական միությունների 80 ներկայացուցիչներ:

**Վստահության ձևավորում հայ-թուրքական հարաբերություններում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համագործակցության ճանապարհով (2008)**
Ծրագրի շրջանակում երկու հայտնի թուրք փորձագետ՝ Դիբա Նիգար Գյոկսելը (*Turkish Policy Quarterly-ի գլխավոր խմբագիր և Եվրոպական կայունության նախաձեռնության ավագ վերլուծաբան*) և Օզգուլ Էրդեմլի Մութլուն (ARI շարժման անդամ, կանանց ձեռներեցության և առաջնորդության կենտրոնի կառավարիչ) այցելեցին Հայաստան: Նրանք հարցազրույցներ տվեցին հայկական ԶԼՄ-ներով, այցելեցին մի շարք վերլուծական կենտրոններ և ՀԿ-ներ:
Հայաստանի և Թուրքիայի վերլուծաբանների և քաղաքացիական հասարակության ակտիվիստների համագործակցությունը որպես հայ-թուրքական հարաբերությունների միավորիչ գործոն (2007-2008):
Կենտրոնը կազմակերպել է երկու միջազգային կոնֆերանս "Հայաստան և Թուրքիա: Տարածաշրջանային շահեր եվրոպական ինտեգրացիայի լույսի ներքո" և "Հայաստան և Թուրքիա: Տարածաշրջանային շահեր եվրոպական ինտեգրացիայի լույսի ներքո": Կենտրոնը նաև հարցազրույցներ է անցկացրել Հայաստանի և Թուրքիայի քաղաքական կուսակցությունների և ՀԿ-ների ներկայացուցիչների հետ: Որոշ հարցազրույցներ հրապարակվել են *Turkish Policy Quarterly-ում:*

**<u>Հրատարակություններ</u>**

- "Ակնարկներ Հարավային Կովկասի երկրների պատմության վերաբերյալ" (2009)
- "Հարավային Կովկասի երկրների և ժողովուրդների պատմությունից համատեղ գոյակցության դրական օրինակներ. Վերլուծաբանների և պատմաբանների զեկույցների հավաքածու Հայաստանից, Վրաստանից և Ադրբեջանից" (2009)
- "Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգ 2009-2010" (2009)

http://domkaukaski.org/index.php?option=com_content&task=view&id=314&Itemid=37

- Հանրային զեկույց. "Վստահության ձևավորում հայ-թուրքական հարաբերություններում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համագործակցության ճանապարհով" ծրագրի վերաբերյալ (2009)
- Միջազգային կոնֆերանսի նյութեր. "Գլոբալ մարտահրավերներ և սպառնալիքներ: Հնարավոր են համատեղ ջանքեր Հայաստանի և Թուրքիայի միջև" (2008)
- Նյութեր միջազգային կոնֆերանսից. "Հայաստան և Թուրքիա. Տարածաշրջանային շահեր եվրոպական ինտեգրացիայի լույսի ներքո" (2008):

**Ստեփան Գրիգորյան**

Ստեփան Գրիգորյանը կենտրոնի տնօրենն է



Ֆիզիկա մաթեմատիկական գիտությունների թեկնածու է: 1990–1995 թթ. եղել է Ազգային ժողովի պատգամավոր: 1995–2000 թթ. աշխատել է արտաքին գործերի նախարարությունում՝ նախ որպես դիվանագետ Ռուսաստանում հայաստանի դեսպանատանը, այնուհետև որպես արտաքին գործերի նախարարի խորհրդական: 2002 թ. դարձել է կենտրոնի վարչության հիմնադիր նախագահ: Մասնակցել է Վիլնյուսի ֆորումին և աշխատել է որպես փորձագետ տարածաշրջանային անվտանգության Հարավկովկասյան ինստիտուտում, (SCIRS) Վրաստանում: Ավելի քան 300 հոդվածների հեղինակ է: Էլեկտրոնային փոստ: grigoryanstepan@yahoo.com

42 բնակարան, 22բ Հալաբյան, 0036 Երևան, Հայաստանի Հանրապետություն
Հեռ/Ֆաքս: + 374 10 35-70-26
Հեռ/բջջային: + 374 91 30-85-57

**Ազգային և միջազգային հետազոտությունների հայկական կենտրոն (ACNIS)**

Երևանում գործող ռազմավարական հետազոտությունների կենտրոն է: Հիմնադրվել է 1994 թ., որպես Հայաստանի առաջին արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանի նախաձեռնություն, ով մնում է կենտրոնի նախագահ: Այժմ կենտրոնի ղեկավարը Ռիչարդ Կիրակոսյանն է, ով հաճախ է թուրքական և միջազգային ԶԼՄ-ներով հանդես գալիս Հայաստանին և տարածաշրջանին առնչվող խնդիրների վերաբերյալ: Կիրակոսյանը միջազգային հարաբերությունների վերլուծաբան է, ում ուշադրության կենտրոնում են տնտեսական, ռազմական անվտանգությունը և նախկին ԽՍՀՄ-ի, ինչպես նաև Միջին Արևելքի և Ասիայի քաղաքական զարգացումները: Նաև հոդվածներ է հրապարակում *Newsweek-ի* թուրքերեն հրատարակությունում, *Turkish Policy Quarterly-ի* խմբագրական խորհրդատու է: Ինը տարի աշխատել է ԱՄՆ Կոնգրեսում: Նաև աշխատել է խորհրդական տարբեր կազմակերպություններում, այդ թվում ԵԱՀԿ, Համաշխարհային բանկ, Միջազգային ճգնաժամային խումբ և ԱՄՆ զինված ուժեր: Էլեկտրոնային փոստ director@acnis.am, giragosi@msn.com



Կենտրոնը կազմակերպել է մի շարք միջոցառումներ, այդ թվում սեմինարներ, կլոր սեղաններ և զեկույցների հրապարակումներ, որոնք վերաբերել են արտաքին քաղաքականությունից մինչև ներքին քաղաքականության կարևոր խնդիրներին: Միջոցառումների մեծ մասի ամփոփ նկարագիրը և բոլոր զեկույցները տեղադրված են կենտրոնի կայքում (www.acnis.am).

**Կենտրոնի վերջին աշխատանքները հայ-թուրքական հարաբերությունների առնչությամբ**

**“Հայ-թուրքական դիվանագիտություն: Թարմացում”**

2009 թ. ապրիլի 22-ին կենտրոնը սեմինար անցկացրեց հայ-թուրքական դիվանագիտության զարգացումների խնդրի շուրջ, որը համընկավ ապրիլի 24-ի Հայոց ցեղասպանության հիշատակման միջոցառումների նախապատրաստության հետ: Հյուրերի թվում էին ամերիկահայ հայտնի պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանը՝ UCLA համալսարանի պրոֆեսոր, և կենտրոնի հիմնադիր Րաֆֆի Հովհաննիսյանը:

Սեմինարն ուներ չորս հիմնական զեկուցողներ: Տնօրեն Ռիչարդ Կիրակոսյանի զեկույցը վերաբերում էր վերջերս Թուրքիա կատարած այցելության և հայ-թուրքական բանակցությունների ներկա փուլի գնահատականին: Պրոֆեսոր Դավիթ Հովհաննիսյանը՝ ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնի տնօրեն, ամփոփ ներկայացրեց հայ-թուրքական հարաբերությունների պատմությունը: Վերչիհան Զիֆլիօղլուն Ստամբուլի *Hurriyet Daily News-ի* թղթակից, ներկայացրեց վերջին զարգացումների վերաբերյալ թուրքական տեսակետը, ԵՊՀ-ից Աշոտ Սողոմոնյանը հանդես եկավ “հայ-թուրքական հարաբերությունների մարտահրավերը” զեկույցով:

***“Փակ քննարկում” վերջին զարգացումների վերաբերյալ***

2009 թ. օգոստոսի 6-ին կենտրոնը կազմակերպեց փակ քննարկում տարածաշրջանի երեք առավել կարևոր զարգացումների վերաբերյալ. Իրանի հետընտրական ճգնաժամի հետևանքները՝ Հայաստանի հանդեպ հնարավոր հետևանքներով և դասերով, թուրք-հայկական դիվանագիտության առկա վիճակը և Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանն ուղղված միջնորդական ջանքերը:

***Հայ-թուրքական դիվանագիտությունը և Լեռնային Ղարաբաղը “Լուծու՞մ, թե ոչ”***

2009 թ. նոյեմբերի 5-ին կենտրոնը կլոր սեղան քննարկում էր կազմակերպել հայ-թուրքական հարաբերությունների և Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ վերջին զարգացումների վերաբերյալ: Միջոցառմանը ներկա էին մի քանի դեսպաններ, Եվրահանձնաժողովի բարձրաստիճան դիվանագիտական պաշտոնյաներ, Հարավային Կովկասում Եվրամիության հատուկ ներկայացուցիչը, Եվրոպայի խորհրդի և ԵԱՀԿ ներկայացուցիչներ, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ դեսպանատան ու Հայաստանի պաշտպանության նախարարության ներկայացուցիչներ:

Կենտրոնի ավագ վերլուծաբան Մամվել Սարգսյանը ներկայացրեց հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում ստորագրված հայ-թուրքական արձանագրությունների վերլուծությունը, Ռիչարդ Կիրակոսյանը ներկայացրեց արձանագրությունների ստորագրումից հետո զարգացումների գնահատականը: Այնուհետև տեղի ունեցավ ակտիվ քննարկում խորհրդարանականների, առաջատար փորձագետների, վերլուծաբանների և լրագրողների մասնակցությամբ:

Կենտրոնը հրապարակել է երկու զեկույցները և քննարկման մասին առանձին զեկույց:

2009 թ. Թուրքիայի վերաբերյալ հրատարակված զեկույցների համառոտ ցանկ.

**Կենտրոնի աշխատակազմի վերլուծություններ**

“Իշխանությունների լեգիտիմության պակասը և հասարակության հոգեբանական խնդիրները հայ-թուրքական դիվանագիտության շրջանակում” - կենտրոնի վերլուծաբան Արմինե Ղազարյան, մայիս 2009 (հայերեն):

**Կենտրոնի աշխատակազմի վերլուծություններ**

“Ինչ կարող է ասել Էրդողանը Ադրբեջանին” - կենտրոնի ավագ վերլուծաբան Մամվել Սարգսյան, մայիս 2009 (ռուսերեն):

**Կենտրոնի հատուկ զեկույցների շարք թիվ 1. Իրան, Թուրքիա-Հայաստան, Լեռնային Ղարաբաղ**

Հատուկ զեկույց 1: “Ճգնաժամը Իրանում. Մտորումներ Հայաստանի համար”:

Հատուկ զեկույց 2: “Թուրք-հայկական դիվանագիտություն. Որտե՞ղ ենք մենք”:

Հատուկ զեկույց 3: “Լեռնային Ղարաբաղի հակամարտություն. Հիմնական քննարկումներ”, Ռիչարդ Կիրակոսյան, օգոստոս 2009 (անգլերեն):

**Կենտրոնի աշխատակազմի վերլուծություններ**

“Հայ-թուրքական հարաբերություններ. դժվարին երկխոսություն” - Մանվել Սարգսյան, սեպտեմբեր 2009 (ռուսերեն):

**Կենտրոնի աշխատակազմի վերլուծություններ**

“Հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման հոգեբանական յուրահատկությունները” - Արմինե Ղազարյան, հոկտեմբեր 2009 (հայերեն):

**Կենտրոնի աշխատակազմի վերլուծություններ**

“Ցեղասպանության գործոնը հայ-թուրքական հարաբերություններում” - Մանվել Սարգսյան, հոկտեմբեր 2009 (ռուսերեն):

**Կենտրոնի զեկույց թիվ 4. հայ-թուրքական դիվանագիտությունը և Լեռնային Ղարաբաղը**

“Լեռնային Ղարաբաղը կրկին միջազգային ուշադրության կենտրոնում է” - Մանվել Սարգսյան (ռուսերեն):

“Հայ թուրքական դիվանագիտությունը և Լեռնային Ղարաբաղը. Լուծո՞ւմ, թե ոչ” Ռիչարդ Կիրակոսյան, նոյեմբեր 2009 (անգլերեն):

Ազգային և միջազգային հետազոտությունների հայկական կենտրոն
75 Երզնկյան փողոց, Երևան 0033, Հայաստան
Հեռ: +374 10 528780 or 274818;
Ֆաքս: +374 10 524846
Էլեկտրոնային փոստ: root@acnis.am or info@acnis.am
Կայք: www.acnis.am

Մոդուս Վիվենդի. Արա Պապյան




Արա Պապյանը Մոդուս Վիվենդիի ղեկավարն է.
Պապյանն ավելի հայտնի է, քան իր ղեկավարած կենտրոնը: Սովորել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության բաժնում: Ասպիրանտական կրթությունն անցել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում և Մոսկվայի դիվանագիտական ակադեմիայում: Աֆղանական պատերազմի ժամանակ խորհրդային բանակում ռազմական թարգմանիչ է եղել (1981-1982 և 1984-1986): 1991 թ. Հայաստանի անկախությունից հետո աշխատանքի է անցել արտաքին գործերի նախարարությունում: Ուղարկվել է Ռումինիա, Իրան, 1999 թ. նշանակվել է նախարարության մամուլի քարտուղար: 2000–2006 թթ. Զբաղեցրել է Կանադայում Հայաստանի դեսպանի պաշտոնը: (Նրա պաշտոնավարման օրոք Կանադայի խորհրդարանը ճանաչեց Հայոց ցեղասպանության փաստը):



Այն տեսակետի առավել հայտնի պաշտպաններից է, որոնց համաձայն Հայաստանը իրավական առումով կարող է պահանջ ներկայացնել Արևելյան Թուրքիայի տարածքների նկատմամբ: Այդ պահանջը, պնդում է նա, ոչ թե ցեղասպանության ճանաչման գործոն է, այլ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրականացրած քաղաքականության և Սևրի պայմանագրի իրավական հետևանքների արդյունք: Պապյանն իր կյանքը նվիրել է Հայաստանի տարածքային պահանջների խնդրի ուսումնասիրմանը՝ հեռանալով արտգործնախարարությունից իր ուսումնասիրությունն առաջ տանելու համար: Խնդրի վերաբերյալ մի քանի հոդվածներ է հրատարակել, մասնակցել հեռուստահաղորդումների և այլ միջոցառումների՝ մեկնաբանություններ ներկայացնելով հայ-թուրքական հարաբերությունների առնչությամբ:
Հայաստանի կողմից տարածքային պահանջների ներկայացման խնդրի վերլուծությունը տեղադրված է Մոդուս Վիվենդի կենտրոնի կայքում: Հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ նրա քննադատական վերլուծությունը կարելի է գտնել այս կայքում՝

http://www.wilsonforarmenia.org/Articles/SardEng.pdf
Պապյանի կոնտակտներն են.
Հեռախոս:  +374 10 25-73-02; Mob +374 93-30-52-82
Էլեկտրոնային փոստ:  ara.Papyan@gmail.com
Կայք: www.wilsonforarmenia.org/index.htm

**Արարատ կենտրոն**

Արմեն Այվազյան

Ռազմավարական հետազոտությունների Արարատ կենտրոնի տնօրենն է: Քաղաքագիտության պրոֆեսոր է Կառավարման պետական Ակադեմիայում, պայմանագրային հիմունքներով դասավանդում է Հայաստանի ամերիկյան համալսարանում, նաև Մատենադարանում ավագ գիտաշխատող է (միջնադարյան ձեռագրերի ինստիտուտ):



Այվազյանը դոկտորի գիտական աստիճան է ստացել 2004 թ., ատենախոսության թեման է՝ “Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի կարևոր տարրերը”: 1997-1998 Ֆուլբրայթի ծրագրով եղել է Ստենֆորդի համալսարանում: 1992–1994 թթ. Աշխատել է նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի օգնական, արտգործնախարարի խորհրդական, ԵԱՀԿ-ում Հայաստանի պատվիրակության ղեկավարի պաշտոնակատար:

Այվազյանի դրքորոշումը հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ, որը նա հաճախ է ներկայացնում առաջատար հայկական պարբերականներում, հայկական և ռուսական համացանցային կայքերում,

ծայրահեղ կոշտ է: Նա պնդում է, որ հարաբերությունների նորմալացում չպետք է տեղի ունենա, քանի դեռ Թուրքիան չի իրականացրել որոշ պայմաններ. Դադարեցրել է շրջափակումը, ճանաչել է ցեղասպանությունը, վճարել է փոխհատուցում և վերադարձրել է Արևելյան Թուրքիայում գտնվող տարածքները: Այվազյանը կարծում է, որ Թուրքիայի լիակատար աջակցությունը Ադրբեջանին նշանակում է, որ որ այդ երկիրը հակված է թուլացնել և կործանել Հայաստանը: Նա տասնյակ հոդվածներ է գրել հայ-թուրքական հակամարտության և այն կարգավորելու ձևերի մասին: Դրանք տեղադրված են Այվազյանի անձնական կայքում (ինչպես նաև կենտրոնի կայքում).
http://www.hayq.org/index.php?p=8&l=eng
http://www.ararat-center.org/index.php?p=22&l=eng#haytur
“Արարատ” Ռազմավարական հետազոտությունների կենտրոն
Երևան, Հայաստան
Հեռ: + 374 10 274833
ayvazyan@ararat-center.org,
www.ararat-center.org, www.hayq.org

## Ասպարեզ Լրագրողների ակումբ Գյումրի

Գյումրիում գործող լրագրողական կազմակերպություն է: Հիմնադրվել է 2000 թ., աջակցում է խոսքի ազատությանը, քաղաքացիների և լրագրողների պաշտպանությանը և տեղեկատվության մատչելիությանը: Հաճախ է քննադատում կառավարությանն ու տեղական իշխանություններին: Վերջին տասնամյակի ընթացքում կազմակերպել է 950 մամուլի ասուլիսներ և 250 բանավեճեր հարցերի բավականին մեծ շրջանակի վերաբերյալ՝ ժողովրդավարությունից և մամուլի ազատությունից մինչև հայ-թուրքական հարաբերություններ և սահմանի բացում: Իրականացրել է 45 ծրագիր, որոնցից 28-ը դրամաշնորհների օգնությամբ:



Լևոն Բարսեղյանը Ասպարեզի հիմնադիր նախագահն է: ԵՊՀ-ում ստանալով դիպլոմներ աշխարհագրությունից և ֆոտոժուռնալիստիկայից, եղել է աշխարհագրության ուսուցիչ 1991-1992 թթ.: Այնուհետև ամբողջովին կենտրոնացել է ժուռնալիստիկայի ուղղությամբ: 1992-1994 եղել է Գյումրիում գործող "Ցայգ" հեռուստաընկերության լրագրող, օպերատոր, գլխավոր խմբագիր, տնօրենի պաշտոնակատար: Այնուհետև տեղափոխվել է Շանթ հեռուստաընկերություն, որտեղ աշխատել է որպես լրագրող, օպերատոր և լրատվական ծառայության տնօրեն (1995-1996), տնօրենի պաշտոնակատար (1996), արտադրական տնօրեն (1997-2000), հաղորդավար (1996-2000): 2000 թ. հիմնադրել է Ասպարեզը, որի նախագահն է մինչ օրս:

*Հայ-թուրքական հարաբերություններին առնչվող ծրագրեր*

Իրականացրել է փոքրածավալ սոցիոլոգիական հարցումներ (մինչև 1000 մարդ) սահմանի բացման խնդրով՝ 2002, 2004 և 2005 թթ.: 50% - 60% տոկոսը կողմ են արտահայտվել սահմանի բացմանը, 25%՝ դեմ, մնացածը հստակ կարծիք չեն ունեցել:

2007 թ. ապրիլ-նոյեմբերին Ասպարեզի անդամները այցելել են Կարս, հանդիպել լրագրողների, ՀԿ-ների ներկայացուցիչների, գիտնականների հետ: Ասպարեզի կայքում զեկուցել են հանդիպումների մասին, երկու ծավալուն հոդված է հրապարակվել նաև Գյումրիում հրատարակվող "Շրջապատ" շաբաթաթերթում: Սեպտեմբերին և հոկտեմբերին հայ և թուրք լրագրողական հատվածի և ՀԿ-ների ներկայացուցիչները Կարսում և Գյումրիում ֆուտբոլային ընկերական հանդիպումներ են անցկացրել: Մայիսին և հունիսի սկզբին Ասպարեզի անդամները Լևոն Բարսեղյանի գլխավորությամբ այցելել են Կարս, հանդիպել CNN Turk-ի, Իհլաս և Դողան լրատվական գործակալությունների, ՀԿ-ների և տեղական լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ:

Բարսեղյանը այցելել է Կարս նաև նախագահ Գյուլի՝ Հայաստան կատարած այցելությունից հետո, որպես հայ-թուրքական թիմային զեկույցի մաս: Նա հանդիպել է ռեժիսոր Իսրաֆիլ Փարլակին, *Kars Postasi*, *Huryurt* and *Olcek* պարբերականների խմբագիրներին, Kavkaz Radio-ի լրագրողներին, քրդական DTP կուսակցության անդամներին և Ալիջան Ալիբեյօղլուի հետ, որը Կարսի նախկին քաղաքապետի եղբայրն էր: Իր այցելության մասին նա հոդված է

հրապարակել "Շրջապատ" պարբերականում: ("Երկաթե վարագույրի վերջին 200 կիլոմետրը"):[12]

Ասպարեզ ակումբ
96 Պուշկինի փողոց, Գյումրի, Հայաստան
Հեռ: + 374 312 30622
Էլեկտրոնային փոստ: info@asparez.am կամ levon@asparez.am

## Գիտական հաստատություններ, գիտնականներ

### ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետ

http://www.ysu.am/site/index.php?lang=1&page=3&p_num=&id=17

Հայտնի լեզվաբան Հրաչյա Աճառյանի ջանքերի շնորհիվ 1940 թ.ԵՊՀ-ում բացվել է արևելյան բանասիրության ֆակուլտետ: Դրան հետևել է արևելյան լեզուների և գրականության ֆակուլտետի հիմնադրումը երկու բաժիններով՝ պարսկերեն և արաբերեն: 1968 թ. Արևելագիտության ֆակուլտետը դարձել է առանձին օղակ:

Ֆակուլտետը ներկայումս ունի երեք բաժին՝ արաբագիտություն, թուրքագիտություն, իրանագիտություն: Բացի այդ դասավանդվում են հնդկերեն, աֆղաներեն, սանսկրիտ, բելուջերեն, քրդերեն և եբրայերեն:

Ֆակուլտետը կապեր է հաստատել արտերկրի առաջատար արևելագիտության կենտրոնների հետ, գիտական համագործակցություն զարգացնելով Իրանի, Եգիպտոսի, Սիրիայի, ԱՄԷ-ի, Լիբանանի և այլ երկրների համալսարանների ամբիոնների և առանձին գիտնականների հետ:

Ֆակուլտետում ներկայումս սովորում են 525 ուսանողներ: Տարեկան ընդունվում են 100-110 ուսանողներ, որոնցից 35-40-ը թուրքագիտության ամբիոն:

ԵՊՀ,
1 Ալեք Մանուկյան, 0025 Երևան
Հեռ; +374 10 555240
Ֆաքս: + 374 10 554641
Էլեկտրոնային փոստ: info@ysu.am

---

[12] Լևոն Բարսեղյան, "Երկաթե վարագույրի վերջին 200 կիլոմետրը", Ասպարեզ ակումբ, ՀԿ, Գյումրի, http://www.asparez.am/news/news2009jan/26.1.2009-kars.htm

**Ռուբեն Մելքոնյան**



Դոցենտ Ռուբեն Մելքոնյանը 2009 թվից ֆակուլտետի դեկանի տեղակալն է: Գիտությունների թեկնածուի կոչում է ստացել 2005 թ. թուրքական ժամանակակից գրականության գծով: Երեք մենագրությունների, ավելի քան երկու տասնյակ գիտական հոդվածների և հիսուն խմբագրականների հեղինակ է: Թուրքերենից հայերեն է թարգմանել մի շարք գրքեր: Ի հավելումն ժամանակակից թուրքական գրականության, Մելքոնյանը հետաքրքրված է Հայաստանի և Թուրքիայի միջև քաղաքական հարաբերություններով, ինչպես նաև Թուրքիայի կրոնական և էթնիկ փոքրամասնությունների խնդրով (հիմնական ուշադրությունը հայ փոքրամասնությունն է): Ակտիվորեն մասնակցում է հայ-թուրքական կոնֆերանսների և ֆորումների: Վարժ տիրապետում է թուրքերենին:

Էլեկտրոնային փոստ: rubmelk@yahoo.com
Հեռ: +374 10 556077 (ներքին 292)

**Ալեքսանդր Սաֆարյան**
Թուրքագիտության ամբիոնի վարիչ

Սովորել է թուրքագիտություն ԵՊՀ-ում և 1986 թվից թուրքագիտության բաժնի վարիչն է: Ավելի քան 50 գիտական գրքերի, հոդվածների և հայ ուսանողների համար նախատեսված թուրքերեն լեզվի դասագրքերի հեղինակ է: Նա ղեկավարում է թուրքերեն գրականությամբ և լեզվաբանությամբ հետաքրքրված ուսանողներին: Համարվում է թուրքերենի լավագույն գիտակներից մեկը Հայաստանում:

Հեռ: +374 10 573324 (ներքին 468)

**Աշոտ Սողոմոնյան**
Թուրքերենի դասախոս է թուրքագիտության բաժնում: Հրապարակել է մի շարք գիտական հոդվածներ: Ժամանակ առ ժամանակ մասնակցում է հեռուստահաղորդումների: Հայ-թուրքական հարաբերությունների

նորմալացմանն առնչվող բանավեճերին ակտիվ մասնակցություն չի ցուցաբերել:
Էլեկտրոնային փոստ asoghomonyan@yahoo.com

**Վահրամ Տեր-Մաթևոսյան**



ՀՀ ՊՆ ԱՌՀԻ պետի տեղակալն է և վերլուծական կենտրոնի ղեկավարը, դասավանդում է ԵՊՀ պատմության ֆակուլտետում: Կրթությամբ պատմաբան է, մասնագիտացել է իսլամագիտության և թուրքագիտության ոլորտում, դասավանդում է քեմալիզմ և Թուրքիայի ժամանակակից պատմություն: Սովորել է ԵՊՀ-ում, Լունդի (Շվեդիա) և Բերգենի (Նորվեգիա) համալսարաններում: Ֆուլբրայթի ծրագրով եղել է Բերքլիում 2009-2010 թթ.: Գիտական աշխատությունները (մենագրություն և բազմաթիվ հոդվածներ) Թուրքիայում քեմալիզմի և իսլամիզմի մասին են: Նրա մենագրությունը՝ “Իսլամը Թուրքիայի սոցիալ-քաղաքական կյանքում *1970-2001”* թարգմանվել է անգլերեն: Վարժ տիրապետում է թուրքերենին: termatevos@yahoo.com

**ԵՊՀ, Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն**

Կենտրոնը ԵՊՀ կազմում է և իրականացնում է հետազոտություններ մշակույթի, քաղաքականության և աշխարհաքաղաքականության ոլորտներում: Կենտրոնը նաև փորձագիտական վերլուծություններ և հետազոտություններ է անցկանում ընթացիկ իրադարձությունների և գլոբալ զարգացումների վերաբերյալ: Կենտրոնը տարեկան չորս անգամ հրատարակում է “Վերլուծական բյուլետեն”, տարին մեկ անգամ՝ “Ալմանախ”, ինչպես նաև առավել կոնկրետ հետազոտություններ, որոնք վերաբերում են կենտրոնի լայն հետաքրքրությունների և գործունեության շրջանակին: Բացվել է 2007 թ.: Ղեկավարն է Դավիթ Հովհաննիսյանը:

ԵՊՀ, Ալեք Մանուկյան 1
Հեռ (37410) 55-16-74
Էլեկտրոնային փոստ: cccs@ysu.am

**Դավիթ Հովհաննիսյան**



ԵՊՀ-ում արաբագիտության և իսլամագիտության պրոֆեսոր է 1980 թ., (ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան Մոսկվայի պետական համալսարանում 1979 թ.) ղեկավարում է քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնը 2007 թ., դասավանդում է Բրյուսովի անվան Պետական լեզվաբանական համալսարանում և Կովկասի ինստիտուտում: 1992-1998 թթ. եղել է Հայաստանի դեսպանը Սիրիայում: 2001-2004 թթ. եղել է Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի անդամ (TARC): Հարցազրույցներ և հրապարակումներ է ունենում Սևծովյան տարածաշրջանի, Միջին Արևելքի և հայ-թուրքական հարաբերությունների մասին: Արաբագիտության ոլորտում երեք մենագրությունների հեղինակ է, որոնցից մեկը արաբերեն հրատարակվել է Եգիպտոսում: Վարժ տիրապետում է արաբերենին, անգլերենին և ռուսերենին: Էլեկտրոնային փոստ: dhovhannisyan@ysu.am

Հասցե: Թամանյան 1ա/1,Երևան,
Հեռ: +374 10 581925, +374 10 551674

http://orient.sci.am/about.php?langid=2

**ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ**

Հայաստանի գիտությունների ակադեմիան (1993 թ. ՀՀ ԳԱԱ) հիմնադրվել է 1943 թվի նոյեմբերի 25-ին` որպես ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղ:

Հիմնականում ֆինանսավորվում է պետբյուջեից: Հավելյալ աջակցություն է ստանում տարբեր պետական և մասնավոր հիմնադրամներից, ինչպես նաև Ակադեմիայի և Հայաստանում ու արտերկրում գործող այլ կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերից: Բաղկացած է հինգ բաժանմունքից (մաթեմատիկական և տեխնիկական գիտություններ, ֆիզիկա և աստղաֆիզիկա, բնական գիտություններ, հայագիտություն և հումանիտար գիտություններ, քիմիա և երկրի մասին գիտություններ) և հիսուն գիտական ինստիտուտներից ու այլ հաստատություններից: Ունի 3700 անդամ, այդ թվում 87 ակադեմիկոս, 18 թղթակից անդամ, 323 գիտությունների դոկտոր, և 1006 գիտությունների թեկնածու(PhDs).

Արևելագիտության ինստիտուտը հիմնադրվել է 1971 թ. ավելի վաղ հիմնադրված (1958) արևելագիտության բաժնի հիման վրա: Հետազոտությունների շրջանակն ընդգրկում է պատմությունը, սոցիալ-քաղաքական, միջազգային և տարածաշրջանային հարաբերությունները, մշակույթը, կրոնը, Միջին Արևելքի, Կովկասի և Արևելյան Ասիայի ազգային փոքրամասնությունների և էթնիկ խմբերի խնդիրները հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Բաղկացած է հետևյալ բաժիններից՝ Հին Արևելք, Քրիստոնյա արևելք, արաբագիտություն, թուրքագիտություն, իրանագիտություն, Արևելաասիական ուսումնասիրություններ և քրդական ուսումնասիրություններ: Թուրքագիտության բաժինը կենտրոնացած է Օսմանյան կայսրության և Թուրքիայի պատմության, ազգային փոքրամասնությունների իրավական կարգավիճակի, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության, մեծ տերությունների քաղաքականության, ժամանակակից Թուրքիայի զարգացումների յուրահատկությունների, օսմանիզմի, պանթուրքիզմի, պանիսլամիզմի, քեմալիզմի, նեոօսմանիզմի և նեոպանթուրքիզմի  խնդիրների վրա:

Հրատարակում է հետևյալ ժողովածուները՝ “Մերձավոր և միջին արևելքի ժողովուրդներ և երկրներ”, “Մերձավոր Արևելք”, “Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ” և այլն: Նոր մասնագետներ է պատրաստում մագիստրանտուրայի և ասպիրանտուրայի միջոցով: Ինստիտուտում գործող մասնագիտական խորհուրդը շնորհում է թեկնածուի և դոկտորի գիտական աստիճաններ համաշխարհային պատմություն, պատմագրություն և աղբյուրագիտություն մասնագիտություններով:

ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ
24գ Մարշալ Բաղրամյան., Երևան 0019
Հեռ: +374 10 583382;
Ֆաքս: +374 10 505075;
Էլեկտրոնային փոստ: info@orient.sci.am

**Ռուբեն Սաֆրաստյան**



ԳԱԱ ԱԻ–ի տնօրենն է: Նախկինում աշխատել է Գերմանիայում Հայաստանի դեսպանատանը և ՀՀ նախագահի աշխատակազմի քաղաքական վերլուծությունների վարչության փոխտնօրենի պաշտոնում (1992-1996):
Վերջին տարիներին ստացել է Հումբոլտ (Գերմանիա), Ֆուլբրայտ (ԱՄՆ) և միջազգային քաղաքականության (Հունգարիա) կրթաթոշակներ և հետազոտություններ է իրականացրել Բոխումի, Բերքլիի և Բուդապեշտի համալսարաններում: Մասնագիտացած է թուրքագիտության, ցեղասպանության պատմության և տարածաշրջանային քաղաքականության ոլորտներում: Սաֆրաստյանը “Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ” ժողովածուի խմբագիրն է: Հաճախ է մասնակցում հեռուստահաղորդումների և այլ քննարկումների՝ մեկնաբանություններ և վերլուծություններ ներկայացնելով տարածաշրջանային զարգացումների և հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ: Որպես հայտնի թուրքագետ, մասնագիտացել է 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի Թուրքիայի պատմության ոլորտում՝ ուշադրություն դարձնելով հայ-թուրքական հարաբերություններին: Այս խնդրի առնչությամբ ավելի քան 70 գիտական հրապարակումների հեղինակ է: Վարժ տիրապետում է թուրքերենին: Էլեկտրոնային փոստ: rsafrastyan@sci.am

**Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ**



ՀՑԹԻ-ը հիմնադրվել է 1995 թ. Հայոց ցեղասպանության ութսուն ամյակի կապակցությամբ: Կազմակերպում է էքսկուրսիաներ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով:
Այցելությունը թանգարան ՀՀ պաշտոնական արարողակարգի մաս է կազմում: Օտարերկրյա պատվիրակությունների թվում են եղել Հովհաննես

Պողոս Երկրորդ Պապը, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը և այլ նշանավոր քաղաքական և հանրային պաշտոնյաներ: Թանգարանի տարածքը պատված է թանգարան այցելած ղեկավարների տնկած ծառերով:
Նախագծվել է ճարտարապետներ Ս. Քալաշյանի, Ա. Թարխանյանի և քանդակագործ Ֆ. Առաքելյանի կողմից: Երկհարկանի շինությունը կառուցված է բլրի ներսում, որպեսզի չշեղի ուշադրությունը ցեղասպանության հուշահամալիրից: Տանիքը հարթ է և բետոնածածկ: բացվում է տեսարան դեպի Արարատ սարը և Արարատյան դաշտավայրը:

**Հետազոտություն**

ՀՑԹԻ-ը նաև հետազոտական կենտրոն է և գործում է ԳԱԱ-ի կազմում:

Ինստիտուտի հիմնական հետազոտական նպատակը Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունն է՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է պատմական վավերագրերի, արխիվային փաստաթղթերի, լուսանկարների ուսումնասիրությանն ու նոր տվյալների ձեռք բերմանը: Ինստիտուտը տարբեր միջազգային արխիվներից ձեռք է բերում նյութեր և փաստաթղթեր: Նաև հավաքում և թանգարանային ֆոնդերում դասակարգում է ցեղասպանության ականատեսների վկայությունները: Արխիվացված փաստաթղթերը թարգմանվում և հրատարակվում են ՀՑԹԻ-ի կողմից:

**Կրթություն**

ՀՑԹԻ-ը նաև ջանում է ստեղծել միջազգային գիտական հաստատություն և ցեղասպանագիտության դպրոց: ՀՑԹԻ-ում գործում է ասպիրանտուրա, միաժամանակ ինստիտուտը մասնակցում է տարբեր գիտական միջոցառումների, որոնց նպատակը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն է: Տարեկան ընդունում է 3–5 ասպիրանտ:
Իր առջև դրված նպատակներին հասնելու համար կազմակերպում է կոնֆերանսներ, կլոր սեղան քննարկումներ, հրատարակում է բուկլետներ, հոդվածներ և գրքեր ինչպես էլեկտրոնային, այնպես էլ տպագիր տարբերակով:

**Հայկ Դեմոյան**



ՀՑԹԻ-ի տնօրենն է: Դասավանդում է ԵՊՀ-ում, որտեղ ստացել է գիտությունների թեկնածուի աստիճան 2001 թ.: Հետաքրքրությունների

շրջանակն ընդգրկում է Հայոց ցեղասպանության պատմությունը, ինչպես նաև Թուրքիայի արտաքին քաղաքականությունը և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը: Գրել է ավելի քան 40 հոդվածներ և մենագրություններ այս խնդիրների առնչությամբ, այդ թվում՝ “Թուրիան և ղարաբաղյան հակամարտությունը” (ռուսերեն), “Հայկական սպորտն ու մարմնակրթությունը Օսմանյան կայսրությունում”, “Արևմտյան ԶԼՄ-ները ղարաբաղյան հակամարտության մասին *1988-1990*”” (պատրաստվում է մենագրության հրատարակում անգլերեն լեզվով): Հաճախ մասնակցում է մամուլի կոնֆերանսների և հարցազրույցներ է տալիս հայ-թուրքական հարաբերությունների, ցեղասպանության ճանաչման արշավի և ղարաբաղյան հակամարտության մասին: Լավ տիրապետում է թուրքերենին:

demoyan@gmail.com, director@genocide-museum.am

375028, Ծիծեռնակաբերդ, ՀՑԹԻ, Երևան
Հեռ: +374 10 39 09 81
www.genocide-museum.am

**Նորավանք հիմնադրամ**

Գիտակրթական հիմնադրամ է, ստեղծվել է 2000 թ. Հայաստանի կառավարության որոշմամբ: Կանոնադրության համաձայն, հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահը ՀՀ վարչապետն է: Հիմնադրամի հետազոտական հատվածն ընդգրկում է հայագիտության կենտրոնը՝ Ռուբեն Մելքոնյանի ղեկավարությամբ: Մելքոնյանի կենտրոնը համագործակցում է Սփյուռքի նախարարության հետ: Հիմնադրամում գործում են նաև տեղեկատվական հետազոտությունների և քաղաքական հետազոտությունների կենտրոններ (որի ուշադրության կենտրոնում են տարածաշրջանային և աշխարհաքաղաքական խնդիրներ) և կրթական կենտրոն (վերջինս կազմակերպում է ամառային դպրոցներ, թեմատիկ զեկուցումներ, այսպես կոչված “նորավանքյան ընթերցումներ”, որոնց մասնակցում են ականավոր գիտնականներ, քաղաքական գործիչներ, փորձագետներ):

Հրատարակում է մի շարք պարբերականներ՝ *21-րդ դար* (հայերեն, ռուսերեն, անգլերեն), Գլոբուս. Ազգային անվտանգություն և Գլոբուս. Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն (հրատարակվում է Հայռուսգազարդ

ՓԲԸ-ն հետ համագործակցությամբ): Մինչ օրս հրատարակել է ավելի քան 150 գրքեր, պարբերականներ և այլ հրատարակություններ:

Հիմնադրամի տնօրենն է Գագիկ Հարությունյանը



Գարեգին Նժդեհ 23/1, Երևան 0026 Հայաստան
Հեռ: +374 10 440473 (տնօրեն), +374 10 443846 (տեղեկատվական բաժին), +374 10 443853 (հետազոտական բաժին)
Ֆաքս: +374-10-440473
Էլեկտրոնային փոստ: office@noravank.am

կայք: www.noravank.am

### Գործարարներ

REPUBLICAN UNION
OF EMPLOYERS OF ARMENIA

### Գագիկ Մակարյան

Հայաստանի գործատուների հանրապետական միության գործադիր տնօրենն է: ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետից (1975-1976) տեղափոխվել է Երևանի ֆիզիկայի ինստիտուտ (1976-1977), "Տրանզիստոր" գիտաարտադրական ընկերություն (1977-1997), "Hai Consult" խորհրդատվական ֆոնդ (1997-մինչ օրս), և Հայաստանի գործատուների հանրապետական միություն (2007-մինչ օրս): 1997-2008 թթ. կազմակերպել է Հայաստանի մրցունակության և արտադրողականության ազգային սիմպոզիում:



Մասնագիտությամբ ֆիզիկոս է, էլեկտրոնիկայի մասնագիտությամբ ստացել է գիտությունների թեկնածուի աստիճան:
Մասնակցել է հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման գործընթացին՝ մասնավորապես գործարար հատվածին և զբոսաշրջությանը առնչվող մի շարք քննարկումների և ծրագրերի: Էլեկտրոնային փոստ [gag_mak@yahoo.com](mailto:gag_mak@yahoo.com), [ruea@mail.am](mailto:ruea@mail.am), [employers_republ@mail.ru](mailto:employers_republ@mail.ru)

Հայաստանի գործատուների հանրապետական միություն
5 Ագաթանգեղոսի փողոց, 0010, Երևան
Հեռ: + 374 10 524472
Բջջային: + 374 091 434 372
Ֆաքս: +374 10 52 44 72
[http://www.employers.am/](http://www.employers.am/)

**Արսեն Ղազարյան**



Արսեն Ղազարյանը Թուրք-հայկական բիզնես զարգացման խորհրդի համանախագահն է: Սովորել է իրավագիտություն, ԵՊՀ-ում ստացել է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (մասնագիտացել է կրոնների պատմությամբ): Փիլիսոփայություն է դասավանդել Երևանի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտում, զուգահեռ աշխատել է իրավախորհրդատու տարբեր ընկերություններում: 1993 թ. Հիմնադրել է միջազգային բեռնափոխադրումների “Ապավեն” ընկերությունը, որը գրասենյակներ ունի Հայաստանում, Վրաստանում և Ռուսաստանում, մինչ օրս ընկերության գլխավոր տնօրենն է: Նախկինում զբաղեցրել է Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահի

պաշտոնը: Լավ հարաբերությունների մեջ է կառավարության հետ և հաճախ մասնակցում է քաղաքական գործիչների հետ հանդիպումների և միջոցառումների, որոնք առնչվում են տնտեսությանն ու ֆինանսներին: Թուրքիա այցելությունների ընթացքում հաճախ հանդիպում է նշանավոր թուրք գործարարների և կառավարական պաշտոնյաների: Աջակցում է հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման գործընթացին:

Ինչպես նա ասել է Եվրոպական կայունություն նախաձեռնությանը.

> “Ուխտագնացությունը Թուրքիայի և Հայաստանի միջև համագործակցության ոլորտներից մեկն է (սփյուռքահայերը գալիս են Հայաստան, այնտեղից՝ Թուրքիա), սակայն սահմանի բացումը առաջին հերիթն կուժեղացնի սահմանային առևտուրը: Օրինակ, երբ դուք Հայաստանից ծիրան եք տանում Մոսկվա, տրանսպորտային ծախսերը հսկայական են (18000-20000 ԱՄՆ դոլար մեկ բեռնատարի համար): Մինչդեռ, եթե նույն ապրանքը գնա Թուրքիա, ծախսերը շատ ավելի քիչ կլինեն (4000 ԱՄՆ դոլար) և մենք ի վիճակի կլինենք որոշ այլ ապրանքներ բերել Թուրքիայից: Երկրորդ, մեր ողջ աշխատուժը կենտրոնացած է Ռուսաստանում: Կարծում եմ, այստեղ ևս թուրքական շուկան որոշակի տարածություն կարող է առաջարկել: Առկա է ներուժ նաև էներգետիկ և գազային ծրագրերի համար: Թուրքիան լավ գործընկեր կարող է լինել տարանցիկ առևտրի համար նույնպես: Վերջին տարիներին տարանցիկ առևտրի սահմանափակումները թուլացել են: Սակայն բեռնատարները չեն կարող գալ Թուրքիա, Իզմիր, այնտեղ բեռնաթափվել, նորից բեռնվել ու գալ Հայաստան: Այս բանը տեղի չի ունենում: Այսպիհսվ, տարանցիկ առևտրից բացի, զբոսաշրջությունը ևս լավ կլինի […] սահմանների բացումից հետո շփումների հնարավոր ոլորտներն են տրանսպորտը, էներգետիկան, շինարարությունը, գյուղատնտեսությունը, արտադրությունը, տեքստիլը”[13]:

Ապավենի երևանյան գրասենյակ, 6/1 Աբելյան փողոց, 375038 Երևան
Հեռ: +374 10 319231 / 319431 / 319531 / 381140 / 381180 / 396152
Ֆաքս +374 10 351240
Էլեկտրոնային փոստ apaven@apaven.am or arsen@apaven.am

[13] Եվրոպական կայունություն նախաձեռնության հարցազրույցը Արսեն Ղազարյանի հետ

## Եվրոպական Կայունության Նախաձեռնություն

Եվրոպական Կայունության Նախաձեռնությունը (ԵԿՆ) Բեռլինում հիմված քաղաքական ուսումնասիրությունների անկախ հաստատություն է: ԵԿՆ-ն նպատակ ունի օժանդակել կայուն, բարգավաճող և խաղաղ Եվրոպային՝ Եվրոպայի քաղաքական և տնտեսական միտումների մասին ժամանակին և պատշաճ վերլուծություններ տրամադրելով: Մենք աջակցում ենք Եվրամիության ընդլայնումը որպես Եվրապական մայրցամաքում խաղաղություն և բարգավաճում ապահովող և ուժեղ ու դեպի դուրս նայող Եվրոմիություն կերտող ամենահաջողված քաղաքականություն:

Վերջին տարիներին ԵԿՆ-ն մասնակցել է մի շարք եվրոպական բանավեճերի՝ Բալկաններում միջազգային քաղաքականության ապագա; Բալկաններին հստակ Եվրոպական հեռանկարների առաջադրում; տարածաշրջանին ապագա եվրոպական օժանդակության առաջարկություն; Կոսովոյի նկատմամբ միջազգային քաղաքականության առաջարկություններ:

2004 թ.-ից սկսած Թուրքիան կենտրոնական տեղ է զբաղեցնում ԵԿՆ գործունեությունում, որի արդյունքում երկու միջազգային համբավ ունեցող ուսումնասիրություններ լույս տեսան՝ “Մահմեդական կալվինիստները” և “Սեռը և ուժը Թուրքիայում”: Սկսած 2007 թ.-ից ԵԿՆ-ն գործունեություն է ծավալել Կովկասում: 2009 թ. սկզբին այն թողարկեց “Նոյի աղավնին վերադառնում է” զեկույցը հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ, որին 2010 թ.-ին հաջորդեց Վրաստանի մասին եռամաս զեկույցը՝ “Վրաստանի ազատական հեղափոխությունը” խորագրով:

ԵԿՆ բոլոր հրատարակությունները լայնորեն մատչելի են հանրության, ինչպես նաև քաղաքականություն մշակողների, գիտնականների, լրագրողների և Եվրոպայում ու ԱՄՆ-ում հետաքրքրված ընթերցող լայն շրջանակների համար: ԵԿՆ զեկույցները ուղարկվում են ավելի քան 34,000 բաժանորդագիրների:

Այս հրատարակությունը/ուսումնասիրությունը ստեղծվել է Եվրասիա համագործակցության հիմնադրամի աջակցության շնորհիվ, Ամերիկայի ժողովրդի նվիրատվության միջոցով, ԱՄՆ Միջազգային Զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ: Սույն հրատարակության/ուսումնասիրության բովանդակության համար պատասխանատու է Եվրոպական Կայունության Նախաձեռնությունը: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն Եվրասիա համագործակցության հիմնադրամի, ԱՄՆ Միջազգային Զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին: